

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՄԻԼԱՍԻ ՄԱՆԱՍՅԱՆ

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.05 – «ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ,
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԱԲՈՒԶՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ.....	14
§ 1. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հասկացությունը.....	14
§ 2. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների նշանակությունը և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները.....	27
ԳԼՈՒԽ 2. ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ	36
§ 1. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի հասկացությունը	36
§ 2. Տուգանք պատժատեսակի նշանակման և կատարման հետ կապված հիմնախնդիրները	52
§ 3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը.....	66
§ 4. Հանրային աշխատանքները որպես այլընտրանքային պատժատեսակ	77
§ 5. Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը.....	90
§ 6. ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված այլընտրանքային այլ պատժատեսակներ.....	93
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	96
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	101

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտության արդիականությունը: Հանցավորության աճը, դրա բացասական միտումները հարկադրում են հասարակությանը և պետությանը համապատասխան հակազդեցություն կիրառելու: Ցավոք հիմնականում պետությունը հակվում է հակազդեցության խիստ միջոցների կիրառման, խիստ պատիժների, մասնավորապես՝ ազատազրկում պատժատեսակը ավելի հաճախ կիրառելուն: Մինչդեռ խիստ պատիժների, հատկապես ազատազրկման բացասական հետևանքները հանրահայտ են: Ազատազրկման դատապարտված անձանց թվաքանակի աճը հանգեցնում է ռեցիդիվի աճի, դատապարտված անձանց քրեականացման, նրանց սոցիալական օգտակար կապերի խզման, ինչը դժվարացնում է նրանց վերասոցիալականացման և վերաինտեգրման գործընթացը, նպաստում է հասարակական հարաբերությունների քրեականացմանը, հանցավոր ենթամշակույթի տարածմանը և այլ բացասական հետևանքների: Այս է պատճառը, որ շատ երկրներում, սկսած անցած դարի 70-ական թվականներից, քրեական օրենսդրության մեջ սկսեցին ներդրվել ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժներ: Եվրոպայի Խորհուրդը և ՄԱԿ-ը իրենց հերթին սկսել են մշակել և կիրառել փաստաթղթեր, ուղղված ամբողջ աշխարհում այդպիսի պրակտիկայի ներդրմանը:

Այսպես, 1981թ. Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը առաջարկել է մասնակից պետություններին «ազատազրկում պատժատեսակը փոխարինել այլ միջոցներով, որոնք կլինեն առավել արդյունավետ և չեն հակասի պատժի սկզբունքներին»: 1985թ. Միլանում կայացած ՄԱԿ-ի 7-րդ նստաշրջանում, հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների հետ վարվելակերպի վերաբերյալ մասնակից պետությունները ընդունել են թիվ 16 որոշումը, որտեղ ուշադրություն են դարձրել ազատազրկման դատապարտվածների թվաքանակի կրճատմանը՝ նախապատվություն տալով պատժի այլընտրանքային միջոցներին և իրավախախտների սոցիալական վերաինտեգրմանը: 1986թ. Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է որոշում «Ազատազրկման այլընտրանքային որոշ միջոցներ» անվանմամբ: Այդ որոշմամբ կոմիտեն առաջարկել է մասնակից

պետությունների կառավարություններին ներկայացնել տարբեր այլընտրանքային պատիժներ և քննարկել քրեական օրենսդրության մեջ դրանց ներդրման հնարավորությունը: Կոմիտեն առաջարկել է մասնակից պետություններին ուսումնասիրել հանրային այնպիսի աշխատանքների ծրագիր ներդնելու հնարավորությունը, որոնք հնարավորություն են տալիս հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերաինտեգրմանը:

Վերջին տարիներին մեր երկրի քրեական քաղաքականությունը հակված է պատժի լիբերալացմանը, ինչի վառ օրինակ է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքով հանրային աշխատանքներն իբրև պատժատեսակ նախատեսելը: Հարկ է նշել նաև որոշ վիճակագրական տվյալներ՝ ազատազրկում պատժատեսակի և ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման թվաքանակի վերաբերյալ, որոնք վկայում են քրեական քաղաքականության լիբերալացման մասին: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում սկսած 2005թ. ազատազրկման են դատապարտվել 1736 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1131 անձ, 2006թ. ազատազրկման են դատապարտվել 1803 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1182 անձ, 2007թ. ազատազրկման են դատապարտվել 1764 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1307 անձ, 2008թ. ազատազրկման են դատապարտվել 1625 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1065 անձ, 2009թ. ազատազրկման են դատապարտվել 1383 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 928 անձ, 2010թ. ազատազրկման են դատապարտվել 1959 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 977 անձ, 2011թ. ազատազրկման են դատապարտվել 1273 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1073 անձ, 2012թ. ազատազրկման են դատապարտվել 1438 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1184 անձ, 2013թ. ազատազրկման են դատապարտվել 2179 անձ, ազատազրկման հետ չկապված

այլընտրանքային պատիժների են դատապարտվել 1090 անձ, 2014թ. ազատազրկման են դատապարտվել 1775 անձ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների են դատապարտվել 646 անձ: Ինչպես տեսնում ենք, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների դատապարտված անձանց մասնաբաժինը տարեց տարի աճում է:

Ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառումը բացի հումանիստական կողմից, նաև սոցիալական մեծ նշանակություն ունի: Ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կարևոր սոցիալական գործառույթներն են սոցիալական ինտեգրումը, ճիշտ սոցիալականացումը և սոցիալական վերահսկումը: Այսպես, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները նպաստում են սոցիալական ինտեգրմանը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս դատապարտյալներին ուղղելու՝ առանց նրանց հասարակությունից մեկուսացնելու: Ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառումը դատապարտյալին թույլ է տալիս աշխատելու, հաղորդակցվելու մարդկանց հետ և ապրելու իր ընտանիքի հետ: Հետևաբար, դատապարտյալներին հնարավորություն է տրվում խուսափելու մեկուսացման այնպիսի բացասական հետևանքներից, ինչպիսիք են սոցիալական օգտակար կապերի խզումը, սոցիալական դիրքերի կորուստը և վերաինտեգրվելու դժվարությունը, հանցավոր սովորությունների ընդունումը, ռեցիդիվի աճը: Մյուս կողմից՝ մարդիկ համակերպվում են դատապարտյալների հետ ապրելուն և նրանց վերաբերվում են որպես հասարակության մի մասի, այլ ոչ թե որպես օտարների: Ճիշտ սոցիալականացման գործառույթը սերտորեն կապված է սոցիալական ինտեգրման գործառույթի հետ: Այս գործառույթը հիմնավորվում է այն փաստով, որ ազատազրկման վայրերը զգալի բացասական ազդեցություն են թողնում դատապարտյալների սոցիալականացման գործընթացի վրա, որը բացակայում է ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման դեպքում: Դատապարտյալների նկատմամբ սոցիալական վերահսկողությունը, որը հնարավոր է դառնում ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման շնորհիվ, նաև կարևոր գործոն է դառնում առողջ հասարակություն կառուցելու համար: Այն մարդկանց ստիպում է ջանք ու եռանդ ներդնել հանցանք կատարած անձանց

ուղղելու գործում, ինչը մեծացնում է սոցիալական խնդիրների լուծման հարցում հասարակության անդամների պատասխանատվության աստիճանը և ապահովում է քաղաքացիական հասարակության մասնակցությունը սոցիալական խնդիրների լուծմանը: Ակնհայտ է, որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ներդրումն ու կիրառումը քրեական քաղաքականության հեռանկարային ուղղություններից են, ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակելու այլընտրանքային պատիժների ենթահամակարգի հասկացությունը, դրա կառուցման սկզբունքները, պատիժների կիրառման մեխանիզմները: Պետք է նշել սակայն, որ մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունում նման համալիր հետազոտություն չի իրականացվել, իսկ քրեական և քրեակատարողական իրավունքներում այս պատժատեսակների կիրառման տեսական ու գործնական հիմունքները դեռևս լիովին չեն մշակվել:

Վերոգրյալը վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Իրավաբանական գրականության մեջ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հետազոտությանը անդրադարձել են մի շարք հեղինակներ՝ Գ.Ա. Ալեքսեվոյը, Ի.Ա. Բուշուևան, Ս.Վ. Բորոդինան, Վ.Ի. Գուսկովան, Ս.Ի. Դեմենտևան, Ա.Ի. Զուբկովան, Վ.Դ. Իվանովան, Ա.Ս. Միխլինան, Մ.Պ. Մելենտևան, Պ.Գ. Պոնոմարևան, Ն.Ա. Ստրուչկովան, Յու.Մ. Տկաչևսկին, Ի.Ա. Տիմերչինան, Վ.Ա. Ուտկինան, Ա.Ե. Նատաշևը, Ի.Ս. Նոյը, Ի.Վ. Շմարովան և ուրիշներ: Պատժին և դրա առանձին տարրերին անդրադարձել են նաև հայ հեղինակներ Ա.Ա. Թովմասյանը, Մ.Ի. Ուզունյանը, Ռ.Զ. Ավագյանը, Հ.Մ. Խաչիկյանը, Ս.Վ. Առաքելյանը, Ա.Ռ. Մարգարյանը, Տ.Վ. Սիմոնյանը և ուրիշներ:

Միաժամանակ հարկ է նշել, որ վերը նշված ոլորտում շատ հիմնախնդիրներ դեռևս ոչ լիարժեք են լուսաբանվել ու հետազոտվել: Դրա համար անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հիմնախնդիրների խոր և համալիր հետազոտություն, ինչը թույլ կտա բացահայտելու այս ոլորտում առկա օրենսդրական բացերը, մշակելու ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման տեսական հիմքերը, որը

կնպաստի ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների նշանակման և կիրառման արդյունավետությանը:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ենթահամակարգն է, ինչպես նաև հասարակական այն հարաբերությունները, որոնք կապված են ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման հետ:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսդրություններն են, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների նշանակման և կիրառման հետ կապված օրենքները և այլ ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը տեսական և գործնական առաջարկություններ մշակելն է՝ ուղղված ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների օրենսդրական կարգավորման, դրանց նշանակման ու կիրառման պրակտիկայի կատարելագործմանը:

Վերը նշված նպատակին հասնելու համար փորձ է արվել լուծելու հետևյալ խնդիրները՝

- ձևակերպել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հասկացությունը,

- բացահայտել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների սոցիալ-իրավական նշանակությունը և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները,

- վերլուծել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի կառուցման սկզբունքները,

- վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների օրենսդրական կարգավորման և կիրառման հետ կապված հիմնախնդիրները և ուսումնասիրել արտասահմանյան երկրներում դրանց առանձնահատկությունները,

- հետազոտության հիման վրա առաջարկություններ անել՝ ուղղված ՀՀ քրեական

օրենսդրության և ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման կատարելագործմանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմքն են իմացության դիալեկտիկական, տրամաբանական, անալիզի, սինթեզի, անալոգիայի, պատմաիրավական, համեմատական-իրավական, ձևական-իրավաբանական, վիճակագրական, հասարակագիտական և գիտահետազոտական աշխատանքի այլ մեթոդներ:

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև հատուկ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են վիճակագրական տվյալների վերլուծության, հարցման, անկետավորման, համեմատական-իրավական վերլուծության և փաստաթղթերի հետազոտության մեթոդները:

Վերը նշված գիտական մեթոդների կիրառումն ապահովել է ատենախոսական հետազոտությանը ներկայացվող համալիր և միջճյուղային մոտեցման պահանջների կատարումը:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքն են կազմել փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության, մանկավարժության, կրիմինալոգիայի, քրեական, քրեակատարողական և քաղաքացիական իրավունքի, քրեական և քաղաքացիական դատավարության ոլորտների հայրենական և արտասահմանյան գիտնականների հիմնարար աշխատությունները: Օգտագործվել են նաև գիտագործնական համաժողովների, սեմինարների նյութեր:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ սահմանադրական դատարանի 23.04.2013թ. որոշումը (ՍԴՈ-1082), ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը և այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր (ՀՀ օրենքը «ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների

կատարման ստորաբաժանումների կարգը»), ինչպես նաև արտասահմանյան տարբեր երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Պորտուգալիայի, քրեական, քրեակատարողական և քրեադատավարական օրենսգրքերը:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության արխիվում 2005-2014թթ. ընթացքում ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների դատապարտված և ազատված դատապարտյալների վերաբերյալ 300 արխիվային անձնական գործերի ուսումնասիրության արդյունքները:

Միևնույն ժամանակ, սույն ուսումնասիրության արդյունքների ներկայացուցչականությունը ապահովելու նպատակով ուսումնասիրվել, վերլուծվել և օգտագործվել են ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման վերաբերյալ այլ տարածաշրջաններում և այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

Ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման արդյունավետության գնահատման նկատառումներով համապատասխան հարցազրույցներ են անցկացվել իրավապահ մարմինների 40 աշխատակիցների, հասարակական կազմակերպությունների 30 ներկայացուցիչների և ազատազրկման հետ չկապված այլընտրանքային տարբեր պատժատեսակների դատապարտված 50 դատապարտյալների հետ:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ այն հայրենական գիտության մեջ ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման քրեաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համակողմանի, համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել և կիրառվել

հասարակության և պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝

- օրինաստեղծ գործունեության, հատկապես՝ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման վերաբերյալ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համալիր ծրագրերի մշակման ժամանակ,
- ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման արդյունավետության բարձրացմանը վերաբերվող հետազոտություններում,
- գիտամանկավարժական գործունեության ընթացքում՝ իրավաբանական և այլ բուհերում քրեական իրավունք և քրեակատարողական իրավունք դասավանդելիս,
- մեթոդաբանական և կիրառական այլ նպատակներով:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում, ինչպես նաև ներկայացված են հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված մի շարք գիտական հոդվածներում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ այն հայրենական գիտության մեջ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման քրեաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ առաջին համակողմանի, համալիր հետազոտությունն է, որը պարզաբանում է ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հասկացությունը, նպատակները, նշանակությունը և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի հասկացությունը: Բացի այդ, ներկայացվում են մի շարք առաջարկություններ՝ ուղղված ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների օրենսդրական կարգավորման և գործնական կիրառման կատարելագործմանը: Հետազոտության

գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝**

1. Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների և դրանց նպատակների հասկացությունը, այն է՝ «Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժները պետական հարկադրանքի այն միջոցներն են, որոնք դատարանի դատավճռով, պետության անունից նշանակվում են հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, արտահայտվում են նրան՝ օրենքով սահմանված կարգով իրավունքներից և ազատություններից զրկելով կամ դրանք սահմանափակելով, սակայն կապված չեն դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու հետ:

Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների նպատակներն են վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել հանցանք կատարած անձին, ապահովել նրա ունեցած դրական սոցիալական կապերի պահպանումը, կանխել նոր հանցագործությունները»:

2. Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում առանձին հոդվածով նախատեսել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգը:

3. Դատապարտյալի և նրա ընտանիքի համար ունեցած բացասական հետևանքների տեսանկյունից հանրային աշխատանքները պակաս խիստ պատժատեսակ է, քան որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Ուստի ճիշտ կլիներ պատժի համակարգում և ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածների սանկցիաներում դրանց տեղերը փոխել:

4. ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ տուգանքի չափը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի դատապարտյալի գույքային դրությունը: Բացի այդ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում նախատեսվում է տուգանքի չափը որոշել ըստ դատապարտյալի եկամուտների: Սրա հետ կապված առաջարկվում է դատապարտյալի գույքային դրությունը գնահատելիս և նրա եկամուտների չափը որոշելիս հաշվի առնել ոչ միայն ունեցած եկամուտները, այլև կենսապահովման համար անհրաժեշտ ծախսերը:

Բացի այդ, առաջարկվում է տուգանքը վճարելու անհնարինության դեպքում տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքում չնշել հանրային աշխատանքների նվազագույն սահմանը (սահմանափակումը կարող է վերաբերվել միայն առավելագույն ժամկետին):

5. Գործող քրեական օրենսգրքով նախատեսված հանրային աշխատանքների ժամկետները չափազանց երկար են, ինչը այս պատժատեսակը նշանակելուց խուսափելու հիմնական պատճառներից մեկն է, ուստի առաջարկվում է հանրային աշխատանքների ժամկետները զգալիորեն կրճատել:

Հանրային աշխատանքների արդյունավետությունը ապահովելու նպատակով առաջարկվում է ընդլայնել հանրային աշխատանքների կիրառման ոլորտները՝ դրանց տեսակի ընտրությունը պայմանավորելով կատարած հանցանքի բնույթով, այս պատժատեսակի դաստիարակչական և հոգեբանական ներգործությամբ:

6. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը, ըստ գործող քրեական օրենսգրքի, վերաբերվում է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում առկա պաշտոններին, ինչը գործնականում խնդիրներ է առաջացնում: Առաջարկվում է այս պատժատեսակը կիրառել ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում, այլ նաև առևտրային և այլ տեսակի բոլոր մարմիններում ու կազմակերպություններում առկա պաշտոնների կապակցությամբ:

Առաջարկվում է նաև տվյալ պատժատեսակը բաժանել երկու մասի և առանձին հոդվածներով սահմանել «Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը» և «Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը»:

7. Պատժի կրումից չարամտորեն խուսափելը իրենից մեկ այլ հանցանք է ներկայացնում և օժտված է բավականաչափ հանրային վտանգավորությամբ, ուստի ճիշտ կլինի հանրային աշխատանքներից չարամտորեն խուսափելու համար քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսել պատասխանատվություն: Նման մոտեցումը թույլ կտա անհատականացնելու պատիժը, ինչը հնարավոր չէ գործող քրեական օրենսգրքի պայմաններում, որը պարզապես հանրային աշխատանքները կալանքով կամ ազատագրկմամբ փոխարինելու հաշվարկի կարգ է սահմանում, ինչը թույլ չի

տալիս հաշվի առնել ո՛չ պատժից չարամտորեն խուսափելու պատճառները, ո՛չ հանգամանքները, շարժառիթները, ո՛չ այն հանցանքի առանձնահատկությունները, որի համար ազատագրկման ձևով պատիժը փոխարինվել էր հանրային աշխատանքներով, ո՛չ էլ հանցավորի անձնավորությունը:

8. Տնային պրոբացիան կամ ազատության սահմանափակումը պետք է իրականացնել առանց էլեկտրոնային հսկողության՝ պրոբացիոն ծառայության աշխատակիցների կողմից իրականացվող անհատական հսկողության ձևով, իսկ էլեկտրոնայինը կիրառել բացառիկ դեպքերում, եթե դատապարտյալի կատարած հանցանքի բնույթը, դրանից հետո նրա դրսևորած վարքագիծը, գործի քննության ընթացքում պահվածքը հիմնավոր կասկածներ են առաջացնում, որ նա կարող է չարաշահել իր նկատմամբ նշանակված պատժի ընձեռած հնարավորությունները և նոր հանցանք կատարել կամ խուսափել պատժի կրումից:

Աշխատության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են ութ պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1.

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԷՌԻԹՅՈՒՆԸ

§ 1. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հասկացությունը

Արդեն անցած դարի սկզբներից քրեական իրավունքի գիտության մեջ խոսվում էր պատժի, հատկապես ազատագրկման ձևով պատժի ճգնաժամի մասին: Հաստատվեց այն փաստը, որ անձին հասարակությունից մեկուսացնելը ոչնչով չի նպաստում պատժի նպատակների իրականացմանը: Դեռ ավելին, ազատագրկման ձևով պատիժը մի շարք բացասական հետևանքներ է առաջացնում: Մասնավորապես, դատապարտյալը, հատկապես երկարատև ազատագրկման դեպքում, կորցնում է իր դրական սոցիալական կապերը, աշխատանքային հմտությունները, դժվարանում է նրա վերաինտեգրումը հասարակություն, նրա ընտանիքը հաճախ հայտնվում է ծանր սոցիալական վիճակում և այլն: Այս հանգամանքների ըմբռնումը քրեաիրավական գիտության մեջ նոր գաղափարների որոնման անհրաժեշտություն առաջացրեց: Աստիճանաբար ձևավորվեց ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների և քրեաիրավական այլ միջոցների համակարգ ստեղծելու գաղափարը: Խոսքը հատկապես ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ ավելի մեղմ պատժատեսակներ կիրառելու հնարավորություն ստեղծելու մասին է: Այս գաղափարների ձևավորման ու զարգացման հետևանքով ժամանակի ընթացքում եվրոպական երկրների, իսկ այնուհետև հայրենական օրենսդրության մեջ ձևավորվեց ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ենթահամակարգ՝ իր նպատակներով, խնդիրներով, սոցիալական ուղղվածությամբ և նշանակությամբ:

Պետք է նշել սակայն, որ քրեական իրավունքի գիտության մեջ առայժմ միասնական կարծիք չի ձևավորվել այն հարցի վերաբերյալ, թե ինչում է կայանում այլընտրանքը և ինչ տեղ է զբաղեցնում քրեական իրավունքում ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգը:

Հաճախ այլընտրանքային պատիժները դիտվում են դրանց սոցիալական

նշանակության, հանցավորության դեմ պայքարի գործում ունեցած դերի, դատապարտյալի վերասոցիալականացման վրա ունեցած ազդեցության տեսանկյուններից: Մինչդեռ այլընտրանքային պատիժների քրեաիրավական բնութագրիչները կարծես թե աչքաթող են արվում: Գործող քրեական օրենսդրությունն էլ չի սահմանում այլընտրանքային պատիժների հասկացությունը:

«Այլընտրանք» բառը ծագել է լատիներեն «alter» եզրույթից, որը նշանակում է երկուսից մեկը: Խոսքը միմյանց բացառող հնարավորությունների միջև ընտրություն կատարելու հնարավորության մասին է¹: Շատ օտարերկրյա քրեագետներ «այլընտրանք» հասկացությունը բավականաչափ լայն են հասկանում և համարում են այն «այլընտրանքային քրեական արդարադատություն» կամ «այլընտրանքային քրեաիրավական համակարգ»²:

Սակայն շատերն էլ գտնում են, որ տվյալ հասկացության նման լայն մեկնաբանությունը չի կարող միանշանակ ընդունվել, որովհետև շատ առումներով այն դուրս է մնում իրավական ոլորտից:

Արտասահմանյան գիտության մեջ ձևավորված հիմնական կարծիքն այն է, որ քրեական իրավունքում այլընտրանքը «...քրեական օրենսդրությամբ արգելված արարքներին հակազդելու այն բոլոր տեսակներն են, որոնք կապված չեն ազատազրկման հետ»³: Բայց նման մեկնաբանության դեպքում ստացվում է, որ հանցագործությանը հակազդելու ցանկացած ձև, որը կապված չէ ազատազրկման հետ, այլընտրանքային պատիժ է: Այդ դեպքում այլընտրանքային պատիժ պետք է համարվեն քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու, գործուն զղջալու կամ իրադրության փոփոխության դեպքերում, կամ պատիժը պայմանականորեն չկիրառելը և այլն: Մեր կարծիքով այլընտրանքային պատիժները այն պատժատեսակներն են, որոնք նախատեսված են քրեաիրավական նորմի սանկցիայում և կարող են նշանակվել ազատազրկման փոխարեն (<< գործող

¹ St'ou Словарь иностранных слов. М., Русский язык, 1979, էջ 30:

² St'ou Cisse A. Justice transactionnelle et justice penale // Revue de science criminelle et de droit penal compare. 2001, № 3, P. 511; Naw A. Les modes altematifs de reglement de conflits en droit beige // Revue de droit penal et de criminologie. 1997, № 4, P. 362.

³ St'ou Кароли Барт. Альтернативные меры уголовного наказания // Альтернативы тюремному заключению в Республике Казахстан: Материалы международной конференции. 2000, էջ 67:

քրեական օրենսգրքի կարգավորման պայմաններում հանրային աշխատանքները՝ որպես ազատազրկմանն այլընտրանք, նախատեսված է օրենսգրքի Ընդհանուր մասում և Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում նախատեսված չէ, ինչը, մեր կարծիքով ճիշտ չէ):

Այսպիսով, այլընտրանքային միջոցները կարող են լինել, ինչպես քրեաիրավական, այնպես էլ այլ բնույթի, ինչը ենթադրում է հանցագործության հետևանքով առաջացած սոցիալական կոնֆլիկտների լուծման մի քանի ձևեր: Այստեղից հետևում է, որ մինչև այլընտրանքային պատիժների իրավական ինստիտուտը ուսումնասիրելը, անհրաժեշտ է պարզել «այլընտրանքային պատիժներ» և «այլընտրանքային միջոցներ» հասկացությունների բովանդակային տարբերությունները: Միանգամից ցանկանում ենք նշել, որ այս երկու հասկացությունները, թեև շատ դեպքերում համընկնում են, այնուամենայնիվ չեն նույնանում:

Այսպես՝ շատ հաճախ օգտագործվում են «ազատազրկմանն այլընտրանք» կամ «կալանքին այլընտրանք» հասկացությունները: Խոսքը հիմնականում նոր պատժատեսակների մասին է (հանրային աշխատանքներ, ազատության սահմանափակում, գործունեության սահմանափակում և այլն), որոնք նախատեսված են ազատազրկում պատժատեսակի նշանակման և կիրառման դեպքերը սահմանափակելու, նվազեցնելու և դրա բացասական հետևանքները մեղմելու նպատակով:

Զգալի տարածում է ստացել նաև «պատժի այլընտրանք» հասկացությունը¹, որը տարբերվում է «ազատազրկմանն այլընտրանք համարվող պատիժներից» նրանով, որ առաջին դեպքում խոսքը ընդհանրապես պատժից ազատելու և այլ միջոցներ կիրառելու, իսկ երկրորդ դեպքում՝ ազատազրկման փոխարեն քրեաիրավական նորմի սանկցիայով նախատեսված և ազատարկումը բացառող պատժատեսակ նշանակելու մասին է:

Այսպիսով՝ մեր կարծիքով հանցագործության դեպքում, «այլընտրանք»

¹ Ст'а Исмаилов Б.И. Проблема применения альтернатив уголовному наказанию за преступления в сфере экономики в Республике Узбекистан // Журнал российского права. 2001, № 4, էջ 123:

հասկացությունը ընկալվում է առնվազն երեք իմաստով՝ քրեական հետապնդմանը այլընտրանք, պատժին այլընտրանք և ազատագրկմանը այլընտրանք:

Առաջին դեպքում ենթադրվում է, որ պետությունը քրեական հետապնդման փոխարեն այլ գործունեություն է իրականացնում և քրեական պատասխանատվությունը փոխարինում է այլ միջոցներով: Արևմտյան իրավագիտության մեջ պետական մարմինների նման գործունեությունը բնութագրելու համար, շատ հաճախ օգտագործվում է անգլերեն «diversion» (շեղում) հասկացությունը, քանի որ «այլընտրանքային միջոցների» էությունը, որպես կանոն, հանցագործությամբ խախտված սոցիալական արդարությունը վերականգնելու փորձն է, որն իրականացվում է առանց հանցանք կատարած անձին հասարակությունից մեկուսացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու: Այս դեպքում պետք է խոսել միայն այլընտրանքային հետապնդման մասին, որովհետև այլընտրանքային միջոցները կիրառվում են նույնիսկ այն ժամանակ, երբ իրավաբանորեն դեռևս հաստատված չէ, որ անձն արժանի է պատժի: Այդ իսկ պատճառով այլընտրանքի այս ձևը ոչ մի ընդհանուր բան չունի այլընտրանքային պատիժների հետ:

Այլընտրանքային միջոցների այս տեսակը իրավապահ մարմինների կողմից հաճախ իրականացվող դատավարական գործունեության հատուկ ձև է, որը դեռևս իր պատշաճ արտացոլումը չի ստացել քրեական և քրեական դատավարության օրենսդրություններում¹:

Վերջին տարիներին նշված միտումը համաշխարհային և եվրոպական մասշտաբով դարձել է այնքան գլոբալ, որ արտացոլվել է միջազգային բնույթի մի շարք փաստաթղթերում: Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն 17.09.1987թ. պաշտոնական ուղեցույցում ոչ միայն հաստատել է քրեաիրավական վեճերի արտադատական կարգավորման գաղափարը, այլ նաև առաջարկել է կարգավորման կոնկրետ մոդելներ, ըստ էության ընդհանրացնելով միայն քրեական հետապնդման այլընտրանքային միջոցների տարբերակները, որոնք մատնանշված են տարբեր

¹ Ավելի մանրամասն տե՛ս Головкин Л.В. Альтернативы уголовному преследованию. М., Юрист, 2002, էջ 36-37:

ներպետական իրավական համակարգերում¹: Այս ուղեցույցը ներառում է հատուկ բաժին՝ «Հայեցողական դատական հետապնդում» անվամբ, որտեղ սահմանվում են քրեական քաղաքականության իրականացման հնարավոր դրույթները:

Հանցագործությանը հակազդելու այլընտրանքային մեխանիզմների օգնությամբ լուծվում են ինչպես «ռեստիտուտիվ», այնպես էլ այլ սոցիալական խնդիրներ: Մանավորապես, լուծվում է քրեական դատավարության ընթացակարգի արագացման, և դրա հետևանքով՝ քրեական արդարադատության ծանրաբեռնվածությունը թեթևացնելու խնդիրը, ինչը թույլ է տալիս առավել մեծ ուշադրություն դարձնելու ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վրա:

Երկրորդ դեպքում, երբ խոսվում է պատժի այլընտրանքի մասին, քրեական հետապնդումը իրականացվում և ավարտվում է հիմնականում ոչ այլընտրանքային ճանապարհով, անձը հանցագործության համար մեղավոր է ճանաչվում, բայց դատարանը նրա նկատմամբ իրական պատիժ չի նշանակում՝ առավել նպատակահարմար համարելով, որևէ «այլընտրանքային միջոցի» կիրառումը:

Ինչ վերաբերվում է երրորդ դեպքին՝ ազատագրկման այլընտրանքներին, ապա այս դեպքում մեղավոր ճանաչված անձի քրեական հետապնդումը չի դադարեցվում և դատարանը անհրաժեշտ ու նպատակահարմար է համարում պատիժ նշանակելը: Այլ խնդիր է, որ ելնելով կոնկրետ իրավիճակից «ազատագրկման այլընտրանքները» առավել նախընտրելի են համարվում, քան ինքը ազատագրկումը և վերջինիս փոխարեն նշանակվում ու կիրառվում է այլ պատժատեսակ կամ նշանակված ազատագրկումը փոխարինվում է այլ միջոցներով, օրինակ՝ պատիժը պայմանականորեն չի կիրառվում²: Այսպիսով՝ ազատագրկմանը այլընտրանք համարվող պատիժների ինստիտուտը տարբերվում է նախորդ երկուսից նրանով, որ այս դեպքում գործ ունենք քրեական պատիժների հետ, որոնք իրագործվում են քրեաիրավական հարաբերությունների շրջանակում: Բացի այդ, այս դեպքում

¹ St'u Доступ к правосудию. Комитет министров - государствам-членам относительно упрощения уголовного правосудия. Рекомендация № R(87)18 от 17 сентября 1987г. // Российская юстиция. 1987, № 8, էջ 3, 16:

² Պատիժը պայմանականորեն չկիրառելը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելը ազատագրկմանն այլընտրանք համարվող միջոցներ են, բայց ոչ պատժատեսակ, ուստի այս ինստիտուտները սույն աշխատանքում չեն քննարկվում:

կայացվում է մեղադրական դատավճիռ և անձի նկատմամբ պատիժ է նշանակվում, որը սակայն կապված չէ նրան հասարակությունից մեկուսացնելու և ազատությունից զրկելու հետ:

Խոսելով այլընտրանքային պատիժների մասին, անհրաժեշտ է նկատել, որ պատժի տեսակները դիտվում են որպես համակարգ¹, որտեղ պատիժները դասավորված են որոշակի տրամաբանական հաջորդականությամբ՝ խստից մեղմը կամ հակառակը: Առաջիններից մեկը՝ պրոֆեսոր Ն.Ս.Տագանցևն էր, ով մատնանշեց այդ²: Գործող օրենսդրության մեջ պատժատեսակները սանկցիներում նախատեսված են մեղմից խիստը հերթականությամբ: Սա նշանակում է, որ սանկցիայում ծախից աջ հերթականությամբ դասավորված այլընտրանքային պատիժների մեջ ամենախիստը նա է, որը գտնվում է ազատագրկման կողքին: Այս հանգամանքը հաշվի առնելը կարևոր է ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող պատժի տեսակը կոնկրետ դեպքում ընտրելու ու կիրառելու համար:

Սրա հետ կապված անչափ կարևոր է նաև պարզել, թե ինչից է բխում այլընտրանքային պատիժ նշանակելու անհրաժեշտությունը, որն է այլընտրանքային պատժատեսակի պատժիչ բովանդակությունը: Իսկ այս հարցերի պատասխանները գտնվում են պատժի փիլիսոփայության ոլորտում:

Իրավաբանական գրականության մեջ առավել տարածված է պատժի հետևյալ սահմանումը. «Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին բարիքներից, իրավունքներից ու շահերից՝ օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ, հանցանք կատարած անձին և նրա արարքին պետության անունից պարսավանք է արտահայտում և կատարում է հանցանք կատարած անձին ուղղելու և պատժելու խնդիրներ»³:

Պատժի օրենսդրական ձևակերպումը սահմանված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդված 1-ին մասով՝ պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը

¹ Տե՛ս Трахов А. Бессистемная система наказаний в УК РФ // Российская юстиция. 2000, № 9, էջ 88:

² Տե՛ս Таганцев Н.С. Русское уголовное право. Тула, 2001, Т. 2, էջ 124:

³ Տե՛ս Шаргородский М.Д. Наказание, его цели и эффективность. Л., 1973, էջ 16:

դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից՝ օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

Սա նշանակում է, որ իր բովանդակությամբ պատիժը իրավունքների սահմանափակում է, որն արտահայտվում է անձին որոշակի բարիքներից, իրավունքներից և շահերից զրկելով: Այսինքն՝ պատժի էությունը, մեր կարծիքով, հատուցումն է: Չնայած վերջին տարիներին, կապված նրա հետ, որ օրենսդիրը հանել է «հատուցում» հասկացությունը պատժի օրենսդրական բնորոշումից, որոշ հեղինակներ առաջարկում են հատուցումը չհամարել պատժի էություն¹: Բայց դժվար թե կարելի է համաձայնել տվյալ մոտեցմանը: Շատ քրեագետներ, մեր կարծիքով արդարացիորեն, հիմնավորում են, որ պատժի էությունը հենց հատուցումն է:

Ա. Ե. Նատաշևի կարծիքով պատիժը հենց հատուցումն է, մեղավորին կանխամտածված տառապանքներ և զրկանքներ պատճառելը, հասարակությանը հասցված վնասի համար²: Հետագայում նա հստակեցրել է, որ պատիժը իր էությամբ հատուցում է³:

Նույն կարծիքին էր Ա. Լ. Ռեմենսոնը⁴: Վ. Ա. Նիկոնովի կարծիքով պետք է հստակեցնել պատժի էությունը՝ առանձնացնելով «պատժի էությունը ընդհանրապես» և «քրեական պատժի էությունը»: «Պատիժ» հասկացությունը հայտնի է ոչ միայն քրեական իրավունքին, այն ավելի լայն է հասկացվում: Հատուցումը ընդհանրապես պատժի էությունն է, իսկ հարկադրանքը՝ քրեական պատժի էությունն է⁵:

Վ. Կ. Դոյնովայի կարծիքով պատժի էությունը ոչ թե հարկադրանքն է, այլ հատուցումը: Իսկ պատիժը հատուցման իրականացման ձևերից մեկն է: Այստեղից

¹ Տե՛ս Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, էջ 79-83:

² Տե՛ս Наташев А.Е. Основные вопросы кодификации исправительно-трудового законодательства//Учен. зап. ВИЮН. 1962, № 14, էջ 189:

³ Տե՛ս Наташев А.Е. Советское исправительно-трудовое законодательство (основные вопросы теории и практики). М.: ВНИИ МВД СССР, 1975, էջ 13:

⁴ Տե՛ս Ременсон А.Л. Некоторые вопросы теории советского исправительно-трудового права // Сов. государство и право. 1964, № 1, էջ 93:

⁵ Տե՛ս Никонов В.А. Уголовное наказание и его общепредупредительное воздействие на преступность: Учеб. пособие. Тюмень: ВШ МВД РФ (России), 1992, էջ 27:

հետևում է, որ հատուցումը որպես պատժի էություն յուրաքանչյուր պատժի տեսակում դրսևորվում է նրա կոնկրետ տարրերի մեջ¹:

Ուստի տարբեր պատժատեսակներ ունեն հատուցման տարբեր չափեր, հանցանք կատարած անձին հասարակությունից մեկուսացնելու հետ կապված պատժատեսակների և հասարակությունից մեկուսացնելու հետ չկապված այլընտրանքային պատժատեսակների հատուցման չափերը տարբեր են: Երկրորդ դեպքում պատժի պատժիչ բովանդակությունը նկատելիորեն ցածր է: Բացի դրանից, իրենց պատժիչ բովանդակությամբ այլընտրանքային պատժատեսակներն իրենք իրենց հերթին տարբերվում են իրարից:

Այսպիսով՝ հատուցումը որպես պատժի տարր առկա է քրեական օրենսգրքի 49 հոդվածով նախատեսված ցանկացած պատժատեսակի նշանակման ժամանակ. Տարբերվում են միայն հատուցման չափերը: Ազատազրկմանն այլընտրանք համարվող պատիժների մեջ որպես հատուցման տարր բացակայում է ազատությունից զրկելը: Փաստորեն հատուցման ծավալը փոքր է, բացի այդ հատուցումն իրականացվում է այլ պայմաններում:

Ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների էությունն ըմբռնելու համար կարևոր է քննարկել պատժի հատկանիշները:

Հետազոտողները գործնականում միակարծիք են այն բանում, որ՝

- պատիժը պետական հարկադրանքի միջոց է,

- պատիժը՝ որպես պետական հարկադրանքի միջոց նշանակվում է միայն դատարանի դատավճռով և պետության անունից,

- պատիժը, ի տարբերություն պետական հարկադրանքի այլ միջոցների, առաջացնում է յուրահատուկ իրավական հետևանք՝ դատվածություն,

- պատիժը ցանկացած պարագայում կրում է խիստ անձնական բնույթ: Պատիժ նշանակվում է միայն հանցագործության մեջ դատարանի կողմից մեղավոր ճանաչված անձի նկատմամբ,

- պատիժը միշտ կապված է դատապարտյալի իրավունքների և ազատությունների

¹Տե՛ս Дуюнов В.К. Наказание в уголовном праве России - принуждение или кара. // Государство и право. 1997, № И, էջ 62:

սահմանափակման հետ, այն պատճառում է բարոյական զրկանքներ և զրկում է նրան որոշակի բարիքներից: Այսինքն՝ պատիժն իր օբյեկտիվ բովանդակությամբ հատուցումն է կատարված հանրորեն վտանգավոր արարքի համար:

Նման բովանդակություն այս կամ այն չափով պարունակում է ցանկացած պատիժ և այս հատկանիշները այս կամ այն չափով բնութագրական են նաև այլընտրանքային պատժատեսակներին:

Գիտական գրականության մեջ փորձեր են կատարվել պատժի տեսակները դասակարգելու կախված նրանց պատժիչ ազդեցության աստիճանից: Այսպես, Ա. Վ. Նաումովը առաջարկել է կիրառել չափման չափորոշիչներ, որոնք հնարավորություն կտան սահմանելու պատժի տեսակների պատժիչ ազդեցությունը¹:

Կ. Ա. Սիչը առաջարկել է պատժի տեսակները դասակարգել կախված նրանից, թե դրանք անձի որ իրավունքների և նրա որ շահերի վրա են ազդում², ինչը նույնպես ցույց է տալիս, թե որքանով է անձի համար պատիժը ազդեցիկ:

Անկասկած, այս կամ այն պատժատեսակի պատժիչ ազդեցությունը սահմանելու փորձերը հետաքրքիր են, բայց, մեր կարծիքով անհեռանկարային, քանի որ գործնականում հնարավոր չէ հաշվի առնել այս կամ այն պատժատեսակի պատժիչ ազդեցության բոլոր տարրերը: Դժվարությունը կայանում է նաև նրանում, որ շատ այդպիսի տարրեր չեն կարող ուսումնասիրվել միայն իրավագիտության շրջանակներում, քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել անձի կյանքի նյութական պայմանները, նրա ընտանեական դրությունը, պատժի կիրառման հոգեբանական ընկալումը և այլն: Հատկապես այս խնդիրը դժվարանում է, երբ անհրաժեշտ է սահմանել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների պատժիչ ազդեցությունը: Օրինակ՝ մի դատապարտյալի համար որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է ավելի մեծ պատժիչ ազդեցություն ունենալ, քան մեկ այլ դատապարտյալի համար հանրային աշխատանքները և հակառակը: Հետևաբար պատժի տեսակի ընտրությունը և նրա պատժիչ ազդեցությունը կոնկրետ

¹ Ст'ю Наумов А.В. О проблеме наказания в новом Налоговом кодексе России // Человек: преступление и наказание: Вестник Рязанской высш. шк. МВД РФ. 1993, № I, էջ 7:

² Ст'ю Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, էջ 194-195:

դատապարտյալի նկատմամբ սահմանելը գտնվում է դատարանի սուբյեկտիվ հայեցողության ոլորտում:

Քանի որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները հիմնականում քննարկվում են ազատագրկմանն այլընտրանք համարվելու տեսանկյունից, ապա, մեր կարծիքով, այստեղ խոսքը միայն հիմնական պատիժների մասին է: Բանն այն է, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքում պատժի համակարգում նախատեսված են ազատագրկման հետ չկապված այլընտրանքային այնպիսի պատիժներ, ինչպիսիք են գույքի բռնագրավումը և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից զրկելը: Սակայն, այս պատժատեսակները միայն լրացուցիչ պատիժներ են, որոնք ազատագրկմանն այլընտրանք չեն և բոլորովին այլ սոցիալ-իրավական նշանակություն ունեն: Մինչդեռ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների սոցիալ-իրավական բնութագրիչներից մեկը, մեր կարծիքով, ազատագրկմանն այլընտրանք լինելն է: Ուստի ազատագրկման հետ չկապված այլընտրանքային կամ ավելի ճիշտ՝ ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների համակարգի մեջ կարող են մտնել միայն 1) տուգանքը, 2) հանրային աշխատանքները, 3) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, 4) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը¹: Այս պատժատեսակներն էլ կազմում են ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների համակարգի բովանդակությունը:

Այլընտրանքային պատիժների ինստիտուտը հնարավոր չէ ամբողջությամբ հետազոտել առանց ուսումնասիրելու նրա նպատակները:

Նպատակը, ինչպես հայտնի է, այն ապագա արդյունքն է, ինչին ձգտում է սուբյեկտը (պատիժ կիրառելու դեպքում այդ սուբյեկտը պետությունն է): Նպատակները կարևոր դեր են խաղում իրավական կարգավորման ընթացքում, արտացոլելով հասարակության սոցիալական կարիքներն ու ձգտումները, դրանք ցույց են տալիս առկա իրավաբանական միջոցների դերն ու նշանակությունը, կողմնորոշում են դեպի

¹ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում նախատեսվում են նաև ազատության սահմանափակումը, հանրային իրավունքների սահմանափակումը, ծնողական իրավունքներից զրկելը, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը:

այն արժեքները, որոնք ընկած են պետության քրեաիրավական քաղաքականության հիմքում: Իրավունքի նպատակները ուսումնասիրվել են առանձին մենագրություններում, հոդվածներում¹ և ատենախոսական աշխատանքներում²:

Մի շարք նորմատիվ ակտերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե այս կամ այն օրենքը նպատակ ունի զարգացնելու որոշակի հասարակական հարաբերություններ, նպաստելու նոր սոցիալական արժեքավոր կապերի հաստատմանը, ապա, որպես կանոն, տվյալ փաստաթղթի տեքստում սահմանվում են խթանիչ իրավաբանական միջոցներ: Եվ ընդհակառակը, եթե ակտը սահմանվում է այս կամ այն հարաբերությունների պահպանման և պաշտպանության նպատակով, ապա հիմնականում կիրառվում են սահմանափակող միջոցներ (արգելքներ, պատիժներ):

Իհարկե, բացի նպատակներից, իրավաբանական միջոցների ընտրության վրա իրենց ազդեցությունն են ունենում նաև հասարակական հարաբերությունների, իրավունքի տվյալ ճյուղի բնույթը, հնարավոր խոչընդոտները, որոնք բացասական ազդեցություն են ունենում սպասվող սոցիալական արդյունքները ստանալու ընթացքի վրա: Մյուս կողմից, արդյունքի հասնելու համար, նպատակը ինքը պետք է բխի դրան հասնելու համար անհրաժեշտ իրականում առկա իրավաբանական միջոցներից:

Ելնելով իրավունքի նպատակների վերը նշված ընդհանուր տեսական սահմանումից, պետք է նշել, որ մեր կողմից ուսումնասիրվող ինստիտուտի նպատակները միանշանակ չեն կարող սահմանվել: Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատժատեսակների նպատակը մի կողմից խախտված սոցիալական արդարությունը վերականգնելն է, պատժի ենթարկված անձին ուղղելը և նոր հանցագործությունները կանխելը, իսկ մյուս կողմից՝ դատապարտյալի դրական սոցիալական կապերի պահպանումը ապահովելը, որոնք կարող են խախտվել

¹ Տե՛ս Керимов Д. А. Философские проблемы права. М., 1972; Чулюкин Л.Д. Природа и значение цели в советском праве. Казань, 1984; Экимов А.И. Категория цели в науке права // Философские проблемы государства и права. Л., 1970; Рабинович П.М. О юридической природе целей правовых актов // Правоведение. 1971, № 5, էջ 28-35; Лаптев В.В., Шахматов В.П. Цели правового регулирования в системе права // Правоведение. 1976, № 4.

² Տե՛ս Экимов А.И. Категория «цель» в советском праве: Автореф. дис. ... канд. юрид. наук. Л., 1970, 46 էջ: Насырова Т.Я. Телеологическое толкование советского закона: понятие, содержание и роль в юридической практике: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1985.

ազատագրկման ձևով պատիժ նշանակելու դեպքում:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման ժամանակ, պետության հետ մեկտեղ, իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում հասարակության ներկայացուցիչները, տարբեր հասարակական կազմակերպությունները և այլն: Օրինակ՝ հանրային աշխատանքներ նշանակելու ժամանակ դատապարտյալը գտնվում է ոչ միայն ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանման աշխատակիցների, այլ նաև աշխատանքային կոլեկտիվի հսկողության տակ: Նման իրավիճակ է ստեղծվում նաև ազատագրկման հետ չկապված այլընտրանքային այլ պատիժների կիրառման ժամանակ:

Եթե ընդհանրացնենք ազատագրկմանն այլընտրանք համարվող պատժատեսակների հատկանիշներն ու բովանդակությունը, ապա կարող ենք փաստել, որ ազատագրկմանն այլընտրանք համարվող պատժատեսակները պետական հարկադրանքի միջոցներ են, որոնք

1) պետության անունից դատարանի դատավճռով նշանակվում են հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ,

2) արտահայտվում են հանցանք կատարած անձին օրենքով սահմանված կարգով իրավունքներից և ազատություններից զրկելով կամ դրանք սահմանափակելով,

3) կապված չեն դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու հետ,

4) նախատեսված են պատժի համակարգում՝ որպես ազատագրկմանն այլընտրանք համարվող հիմնական պատիժ,

5) առաջացնում են դատվածություն

6) նպատակ են հետապնդում վերականգնելու սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնելու հանցանք կատարած անձին, կանխելու նոր հանցագործությունները, ապահովելու նրա ունեցած դրական սոցիալական կապերի պահպանումը:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք տալ ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների և դրանց նպատակների բնորոշումը. **«Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժները պետական հարկադրանքի այն միջոցներն**

են, որոնք դատարանի դատավճռով, պետության անունից նշանակվում են հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, արտահայտվում են նրան՝ օրենքով սահմանված կարգով իրավունքներից և ազատություններից զրկելով կամ դրանք սահմանափակելով սակայն կապված չեն դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու հետ:

Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների նպատակներն են վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել հանցանք կատարած անձին, ապահովել նրա ունեցած դրական սոցիալական կապերի պահպանումը, կանխել նոր հանցագործությունները»:

Կարծում ենք, որ քրեական օրենսդրության մեջ նման բնորոշման առկայությունը կարող է նպաստել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների տեսակների, դրանց բովանդակության, պատժիչ ազդեցության ճիշտ ու հիմնավոր ձևակերպմանը:

**§ 2. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների
նշանակությունը և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները**

Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների համակարգի ընդլայնման, զարգացման ու կատարելագործման, դրանց առավել հաճախակի կիրառման օգտին կարելի է մի քանի փաստարկներ բերել: Հիմնականում դրանք սոցիալ-իրավական և տնտեսական գործոններն են: Հայրենական և արտասահմանյան բազմաթիվ գիտնականների հիմնական փաստարկը ի օգուտ այլընտրանքային պատժատեսակների այն է, որ ազատագրկումը ոչ արդյունավետ և անկատար պատժատեսակ է և դրա միջոցով հնարավոր չէ հասնել պատժի հիմնական նպատակների իրագործմանը՝ դատապարտյալի ուղղմանը և նոր հանցագործությունների կանխմանը:

Մյուս կողմից կարծիք կա, որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հանցավորության, մասնավորապես՝ ռեցեդիվային հանցավորության մակարդակի վրա, քանի որ այս պատժատեսակները իրենց մեղմության պատճառով չեն կարող կանխարգելիչ ազդեցություն ունենալ:

Արտասահմանյան երկրներում կատարված հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ այլընտրանքային պատիժների կիրառումը չի հանգեցրել հանցավորության ցուցանիշների վատթարացման: Միևնույն ժամանակ, շատ քրեագետներ թերահավատորեն են վերաբերվում այս հետազոտությունների արդյունքների հավաստիությանը: Կասկածի տակ է դրվում նաև այն, թե արդյոք հնարավոր է համեմատական հետազոտություն իրականացնել, որը կպարզի ազատագրկման և այլընտրանքային պատիժների արդյունավետությունը՝ հանցավորության մակարդակի և դատապարտյալի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Մասնավորապես՝ Վ. Ստերնը, հիմնվելով մի շարք բրիտանական գիտնականների հետազոտությունների արդյունքների վրա, գտնում է, որ եթե կրկնահանցագործությունների թվաքանակը ազատագրկման և ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների դեպքում շատ թե քիչ միանման են, ապա

պետք է ուշադրություն դարձնել և գնահատել համեմատվող ինստիտուտներին վերաբերվող այլ գործոններ¹:

Մեր կարծիքով, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման օգտին վկայող առավել համոզիչ փաստարկները՝ նրանք են, որոնք ձևավորվում են դատապարտյալի նկատմամբ ազատագրկում պատժատեսակի կիրառման բացասական կողմերը վեր հանելիս: Ազատագրկում պատժատեսակի կիրառման դեպքում շատ դժվար կամ գրեթե անհնար է դատապարտյալի մեջ հանրորեն օգտակար ընդունակությունների ձևավորումը: Բացի այդ, անձի մեկուսացումը հասարակությունից բացասական բարոյահոգեբանական ազդեցություն է ունենում նրա վրա, նպաստում է անձի քրեականացմանը, հանցավոր ենթամշակույթը ընդունելուն: Վերջապես ազատագրկումը խոչընդոտում է անձի հետագա սոցիալական ադապտացմանը, նրա վերաինտեգրմանը: Մինչդեռ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների դեպքում վերը նշված բոլոր բացասական գործոնները բացակայում են:

Այսպիսով, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կարևոր սոցիալական գործառույթներն են սոցիալական ինտեգրումը, ճիշտ սոցիալականացումը և սոցիալական վերահսկումը: Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները նպաստում են սոցիալական ինտեգրմանը, քանի որ հնարավորություն են տալիս դատապարտյալներին ուղղել՝ առանց նրանց հասարակությունից մեկուսացնելու: Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները դատապարտյալներին թույլ են տալիս աշխատել, հաղորդակցվել մարդկանց հետ և ապրել իրենց ընտանիքների հետ: Հետևաբար այս պատժատեսակները թույլ են տալիս խուսափելու ազատագրկման այնպիսի հետևանքներից, ինչպիսիք են դրական սոցիալական կապերի խզումը, սոցիալական դիրքերի կորուստը, վերաինտեգրվելու դժվարությունը, հանցավոր սովորույթների ընդունումը: Մյուս կողմից՝ մարդիկ համակերպվում են դատապարտյալների հետ ապրելուն և նրանց վերաբերվում են որպես հասարակության մի մասի, այլ ոչ թե

¹St'u Вивьен Стерн. Разработка мер, альтернативных тюремному заключению в странах Центральной и Восточной Европы и Средней Азии: Справочник. Лондон: Институт Конституционной и правовой политики, 2002, էջ 36-54.

որպես օտարների: Ճիշտ սոցիալականացման գործառույթը սերտորեն կապված է սոցիալական ինտեգրման գործառույթի հետ: Այս գործառույթը հիմնավորվում է այն փաստով, որ ազատագրկման վայրերը զգալի բացասական ազդեցություն են թողնում հանցագործների սոցիալականացման գործընթացի վրա, որը բացակայում է ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման դեպքում: Հանցագործների նկատմամբ սոցիալական վերահսկողությունը, որը հնարավոր է դառնում ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների շնորհիվ, նաև կարևոր գործոն է դառնում առողջ հասարակություն կառուցելու համար: Այն մարդկանց ստիպում է ջանք ու եռանդ ներդնել հանցագործներին ուղղելու գործում՝ այդպիսով մեծացնելով սոցիալական պատասխանատվությունը և քաղաքացիական հասարակության մասնակցությունը սոցիալական խնդիրների լուծմանը: Կարևոր են նաև ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների սոցիալ-հոգեբանական գործառույթները: Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատժամիջոցների սոցիալ-հոգեբանական հիմնական գործառույթներն են հասարակության մեջ դատապարտյալի արագ վերաինտեգրումը և պիտակավորումից խուսափելը:

Հայտնի է, որ ազատագրկումը խիստ բացասական հոգեբանական ազդեցություն է ունենում դատապարտյալի վրա ինչպես նաև հետագայում հասարակության մեջ նրա վերաինտեգրվելու գործընթացի վրա: Այս տեսանկյունից ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները շատ ավելի արդյունավետ են, քանի որ հնարավորություն են տալիս հանցանք կատարած անձանց աշխատելու և կենսագործելու իրենց ներուժը: Բացի այդ, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները թույլ են տալիս խուսափելու ազատագրկվածի դրոշմից, որը դժվարություններ է ստեղծում հասարակությունում վերաինտեգրվելու հարցում:

Բացի նշված սոցիալական գործոններից, արևմտյան շատ կրիմինոլոգներ, հատկապես ամերիկյան, հակված են առանձնացնելու նաև ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների օգտին վկայող տնտեսական գործոնները: Եվ իրոք, մեծաքանակ հետազոտությունները ապացուցում են, որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառումը արդյունավետ է նաև տնտեսական

տեսանկյունից: Դեռ անցած դարի 70-ական թվականներին, երբ ամերիկյան բանտերի ծախսերը նշանակալիորեն ցածր էին ժամանակակից ցուցանիշներից, պրոբացիայի կիրառման հետ կապված ծախսերը (առավել թանկարժեք այլընտրանքային պատիժը) 8-10 անգամ ցածր էին ազատագրկման դատապարտվածի վրա կատարվող ծախսերից:

1994թ. Անգլիայում և Ուելսում դատապարտյալին բանտում պահելու միջին ծախսը կազմում էր ամսական 2.190 ֆունտ ստեռլինգ, իսկ հանրային աշխատանքների կիրառման դեպքում 100 ֆունտ ստեռլինգ:

Շվեդիայում, որտեղ բանտերը ճանաչված են ամենաթանկարժեքը Եվրոպայում, դատապարտյալին փակ բանտում պահելու համար ծախսվում է օրական 180 ԱՄՆ դոլլար, բաց բանտում օրական 120 ԱՄՆ դոլլար, իսկ պրոբացիայի կիրառման դեպքում օրական 12 ԱՄՆ դոլլար:

Զիմբաբվեում դատապարտյալին բանտում պահելու համար ծախսվում է ամսական 120 ԱՄՆ դոլլար, իսկ հանրային աշխատանքների կիրառման դեպքում ամսական 20 ԱՄՆ դոլլար¹:

Հայաստանի Հանրապետությունում ազատագրկման դատապարտված անձին ուղղիչ հիմնարկում պահելու համար ամսական ծախսվում է 220 ԱՄՆ դոլլար, իսկ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման դեպքում ամսական 15 ԱՄՆ դոլլար²:

Այս համապատկերում օրինաչափ է թվում այն միտումը, որը նկատվում է զարգացած երկրներում. Հնարավորինս ընդլայնել այլընտրանքային պատիժների կիրառման ոլորտը և հակառակը՝ սահմանափակել ազատագրկման կիրառումը: Օրինակ՝ Գերմանիայում նշանակվող պատիժների 80 տոկոսը տուգանքն է³, Ճապոնիայում՝ 95 տոկոսը⁴:

Մենք նույնպես այն կարծիքին ենք, որ ազատագրկման հետ չկապված

¹Տե՛ս Хуторская Н.Б. Опыт применения общественных (обязательных) работ зарубежом. Аналитический обзор // http://www.penalrefonn.org/russian/altem_rus24.htm.

² Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ֆինանսական բաժնի վիճակագրական հաշվետվություններ:

³Տե՛ս Жалинский А.Э. Современное немецкое уголовное право. М., 2006, էջ 313:

⁴Տե՛ս Морозов Н.А. Преступность и борьба с ней в Японии. СПб., 2003, էջ 150:

այլընտրանքային պատիժները տնտեսական տեսանկյունից նախընտրելի են, քանի որ դրանք այնքան ֆինանսական միջոցներ չեն պահանջում և այնքան ծախսատար չեն, որքան ազատազրկումը: Ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները թույլ են տալիս ֆինանսական ռեսուրսներ խնայել: Ավելին՝ ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների մեծ մասը հնարավորություն է տալիս ֆինանսական հոսքեր ուղղել պետական բյուջե: Մյուս կողմից՝ ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները, ի տարբերություն ազատազրկման, չեն քայքայում դատապարտվածների ընտանիքների ֆինանսական կայունությունը:

Եվ վերջապես, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների լայն կիրառումը հնարավորություն է տալիս բեռնաթափելու գերբնակեցված ուղղիչ հիմնարկները, պետության և հասարակության ջանքերը ուղղելու օգնության կարիք ունեցող այն քաղաքացիների հետ առավել անհատականացված աշխատանքներ իրականացնելուն, ովքեր լուրջ վտանգ չեն ներկայացնում հասարակության համար:

Սակայն վիճակագրությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական քաղաքականությունը միշտ հակված է եղել առավել խիստ պատիժների նշանակմանը, որն իր հերթին թողնում է վերը նշված բոլոր բացասական հետևանքները: Օրինակ՝ Հայաստանի երկրորդ Հանրապետությունում մեծ թիվ են կազմել այն հանցագործությունները, որոնք կատարվել են նախկինում հանցանք գործած անձանց կողմից¹: Կրկնահանցավորության վիճակը բնութագրվել է հետևյալ տվյալներով. 1987թ. բացահայտված 6790 հանցագործություններից կրկնահանցավորության թիվը եղել է 674, 1988-ին՝ 5552-ից՝ 965-ը, 1989-ին՝ 6462-ից՝ 1052-ը, 1990-ին՝ 6984-ից՝ 800-ը: Դա նշանակում է, որ կրկնահանցավորությունը կազմել է 11,4-ից 16,3, 17,4 տոկոս, ինչը բավականին մեծ ցուցանիշ է:

Այս թվերը գնահատվելիս պետք է նկատի ունենալ նաև հետևյալը: Կրկնահանցավորությունը գրանցելիս քրեական վիճակագրությունը հաշվի էր առնում նախկինում կատարված միայն այն հանցավոր դեպքերը, որոնց առթիվ մեղավոր անձանց նկատմամբ կիրառվել են քրեական (կամ հասարակական) ներգործության

¹ Տե՛ս Ավագյան Ռ.Զ., Մարդու իրավունքներ քրեաիրավական երաշխիքներ, Երևան, 2007, էջ 43:

միջոցներ, ուստի հաշվառումից դուրս են մնացել այն հազարավոր դեպքերը, երբ դրանց հեղինակները, թեև նախկինում հանցանք են գործել, սակայն նրանց նկատմամբ նման միջոցառումներ չեն ձեռնարկվել¹:

Այս բացի հետևանքով կրկնահանցավորության վերաբերյալ քրեական վիճակագրության տվյալները խիստ թերի են և չեն արտացոլում իրական պատկերը:

Կրկնահանցագործների մի զգալի մասը նախկինում երեք և ավելի անգամ դատապարտված են եղել՝ փաստ, որն ընդգծում է թե՛ պատժի և թե՛ պատիժն իրականացնելու գործընթացի ցածր արդյունավետությունը:

Հայկական ՍՍՀ-ում 1981-1990թթ. դատվածության դինամիկան բնութագրող ցուցանիշներն ունեցել են հետևյալ պատկերը, 1981-ին դատապարտվել են 7347 անձ, որոնցից ազատազրկման՝ 48,6 տոկոսը (7347-3570), 1982-ին՝ համապատասխանաբար՝ 48,5 (7721-3734), 1983-ին՝ 45,8 (7460-3418), 1984-ին՝ 41 (7518-3130), 1985-ին՝ 42,8 (7118-3034), 1986-ին՝ 38,1 (6883-2620), 1987-ին՝ 33,7 (5681-1912), 1988-ին՝ 29,6 (3809-1129), 1989-ին՝ 27,4 (4396-1205), 1990-ին՝ 26,3 տոկոսը (3906-1026):

Հայաստանի երրորդ Հանրապետությունում սկսած 2005 թվականից կրկնահանցավորության վիճակն այսպիսին է՝ 2005թ. ընթացքում ազատազրկում պատժի են դատապարտվել 1736 անձ, որոնցից 1022 առաջին անգամ, 714-ը երկու և ավելի անգամ, 2006թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1803 անձ, որոնցից 1135-ը առաջին անգամ, իսկ 668-ը երկու և ավելի անգամ, 2007թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1764-անձ, որոնցից 1070-ը առաջին անգամ, իսկ 694-ը երկու և ավելի անգամ, 2008թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1627 անձ, որոնցից 962-ը առաջին անգամ, իսկ 665-ը երկու և ավելի անգամ, 2009թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1383 անձ, որոնցից 474-ը առաջին անգամ, իսկ 909-ը երկու և ավելի անգամ, 2010թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1959 անձ, որոնցից 1092-ը առաջին անգամ, իսկ 867-ը երկու և ավելի անգամ, 2011թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1273 անձ, որոնցից 706-ը առաջին անգամ, իսկ 567-ը երկու և ավելի անգամ, 2012թ. ազատազրկում պատժի են

¹Տե՛ս նույն տեղը:

դատապարտվել 1438 անձ, որոնցից 857-ը առաջին անգամ, իսկ 581-ը երկու և ավելի անգամ, 2013թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 2179 անձ, որոնցից 1089-ը առաջին անգամ, իսկ 1090-ը երկու և ավելի անգամ, 2014թ. ազատազրկում պատժի են դատապարտվել 1775 անձ, որոնցից 788-ը առաջին անգամ, իսկ 987-ը երկու և ավելի անգամ: Ինչպես տեսնում ենք կրկնահանգավորության մակարդակը աճի միտում է ցույց տալիս:

Վիճակագրությունը վկայում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում, միայն ազատազրկում պատժատեսակը կիրառվել է ավելի շատ, քան ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների միասին: Օրինակ՝ 2005թ. ազատազրկման են դատապարտվել 1736 անձ, տուգանք պատժատեսակի՝ 1057 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 58 անձ, հանրային աշխատանքների՝ 16 անձ: 2006թ. ազատազրկման են դատապարտվել 1803 անձ, տուգանք պատժատեսակի՝ 929 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 185 անձ, հանրային աշխատանքների՝ 68 անձ: 2007թ. ազատազրկման են դատապարտվել 1764 անձ, տուգանք պատժատեսակի՝ 850 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 130 անձ, հանրային աշխատանքների՝ 327 անձ: 2008թ. ազատազրկման են դատապարտվել 1627 անձ, տուգանք պատժատեսակի՝ 692 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 124 անձ, հանրային աշխատանքների՝ 249 անձ: 2009թ. ազատազրկման են դատապարտվել 1383 անձ, տուգանք պատժատեսակի՝ 596 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 140 անձ, հանրային աշխատանքների՝ 192 անձ: 2010թ. ազատազրկման են ենթարկվել 1959 անձ, տուգանք պատժատեսակի՝ 702 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 82 անձ, հանրային աշխատանքների՝ 193 անձ: 2011թ. ազատազրկման են դատապարտվել 1273 անձ, տուգանք պատժատեսակի՝ 705 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու

իրավունքից զրկելու՝ 152 անձ, հանրային աշխատանքների՝ 216 անձ: 2012թ. ազատազրկման են դատապարտվել 1438 անձ, տուգանք պատժատեսակի՝ 803 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 133 անձ, հանրային աշխատանքների՝ 248 անձ: 2013թ. ազատազրկման են դատապարտվել 2179 անձ, տուգանք պատժատեսակի՝ 701 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 218 անձ, հանրային աշխատանքների՝ 171 անձ: 2014թ. ազատազրկման են դատապարտվել 1775 անձ, տուգանք պատժատեսակի՝ 506 անձ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու՝ 105 անձ, հանրային աշխատանքների՝ 34 անձ:

Փաստորեն նշանակված պատիժների մոտ 70 տոկոսը ՀՀ-ում բաժին է ընկնում ազատազրկմանը: Ճիշտ է, պետք է նշել, որ իրականում կատարվում է 40-ից 48 տոկոսը, որովհետև վերջին տարիներին ավելի հաճախ է կիրառվում պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը: Սակայն, պետք է նշել, որ վերջինս բավականաչափ անկատար և թերի կարգավորված ինստիտուտ է, որը թույլ չի տալիս ապահովելու պատժի հիմնական նպատակների իրականացումը: Բավական է նշել, որ որոշ հետազոտությունների արդյունքներով, այս ինստիտուտի կիրառումը անչափահասների նկատմամբ նպաստում է մոտ 50 տոկոսանոց ռեցիդիվի¹:

Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում դատարանները հակված են առավել շատ կիրառելու ազատազրկում պատժատեսակը, քան ազատազրկման հետ հետ չկապված այլընտրանքային պատժատեսակները, որը, ինչպես արդեն նշել ենք, բացասաբար է անդրադառնում, ինչպես հանցագործություն կատարած անձանց, այնպես էլ հասարակության վրա: Ազատազրկում պատժատեսակի հաճախակի կիրառումը հանգեցրել է ուղղիչ հիմնարկների գերբնակեցմանը, ինչից խուսափելու համար ՀՀ-ում հաճախակի անհիմն համաներում է կիրառվում, ինչը նույնպես բացասաբար է անդրադառնում հանցածին իրավիճակի վրա: Ընդ որում, պետք է նշել, որ ազատազրկում պատժատեսակի բացասական ազդեցությունը և այլընտրանքային պատիժների դրական կողմերը ակնհայտ են, թե

¹ Տե՛ս Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր. 2010, էջ 96:

իրավակիրառողների, թե բնակչության համար: Հարց է առաջանում, թե ինչու այդ դեպքում դատարանները հիմնականում խուսափում են այլընտրանքային պատիժ նշանակելուց:

Մեր կողմից իրականացված հարցումները թույլ են տալիս կարծելու, որ սա պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ՝ էական նշանակություն ունի մտածողության իներցիան: Շատերը կարծում են, որ մեղմ միջոցներով հնարավոր չէ պայքարել հանցավորության դեմ: Երկրորդ՝ մտավախություն կա, որ այլընտրանքային պատժատեսակների նշանակումը կարող է չարաշահվել և դրանց անհիմն նշանակումը կարող է նպաստել անպատժելիության զգացումի ձևավորմանը: Բացի այդ, գործող քրեական օրենսգրքում այլընտրանքային պատժատեսակների իրավական կարգավորումը թերի է, կան շատ բացեր: Վերջապես շատ կարևոր է նաև համապատասխան կադրերի առկայությունը: Այլընտրանքային որոշ պատժատեսակների կիրառումը ենթադրում է դատապարտյալի հետ սոցիալական, հոգեբանական աշխատանքների իրականացում, ինչը կարող է ապահովվել միայն համապատասխան կրթություն և պատրաստվածություն ունեցող կադրերի առկայության դեպքում, ինչը ցավոք սրտի ՀՀ-ում բացակայում է:

Կարծում ենք, որ իրավիճկից ելքը ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ինստիտուտի կատարելագործումն է, եղած պատժատեսակների իրավական կարգավորման մեջ առկա թերությունների վերացումը, նոր արդյունավետ պատժատեսակներ նախատեսելը, ինչն ի դեպ արված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում: Բացի այդ, շատ կարևոր է համապատասխան կադրերի առկայությունը: Ներկայումս ՀՀ-ում փորձ է արվում ներդնելու պրոբացիոն ծառայություն, ինչը կարծում ենք կարող է լուծել խնդիրը և էական ազդեցություն ունենալ այլընտրանքային պատիժների կիրառման ծավալների վրա:

ԳԼՈՒԽ 2.

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ

ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 1. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային

պատիժների համակարգի հասկացությունը

Պատժի համակարգը քրեական օրենսգրքով սահմանված պատժի տեսակների սպառիչ ցանկն է, որը կոչված է ապահովելու պատժի նպատակների իրականացումը: 80-ական թվականներին և 90-ական թվականների սկզբներին ամբողջ աշխարհում քրեական քաղաքականությունը պատժի ոլորտում հակված էր ի օգուտ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման: Քրեագետների մեծ մասը դեմ էր արտահայտվում ազատագրկում պատժատեսակին և առաջարկում էր պատժի համակարգի տարբեր մոդելներ՝ ուղղված ազատագրկում պատժատեսակի կիրառման սահմանափակմանը¹: Բացի հումանիտար նկատառումներից, որոնք արձանագրվում են տարիներ շարունակ, առաջ էին քաշվում նաև ազատագրկման կիրառման հետ կապված ծախսերի և դրա բացասական հետևանքների վերաբերյալ զուտ պրագմատիկ փաստարկներ, որոնք մի շարք երկրներում օրենսդիրներին հարկադրեցին ազատագրկում պատժատեսակի կիրառման կրճատմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

Վերջին մի քանի տարիների ընթացքում շատ երկրների օրենսդրություններում նկատվում են զգալի փոփոխություններ՝ որոնց նպատակը դատապարտյալների թվաքանակի կրճատումն է: Այսպես, օրինակ՝ 1993թ. Վենեսուելայում ընդունվել են երկու օրենքներ, որոնք դատարաններին թույլ են տալիս կայացնելու ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժ նախատեսող դատավճիռ, կամ փոփոխելու դատավճիռը՝ ազատագրկում պատժատեսակը փոխարինելով որոշակի աշխատանքներ կատարելու կամ կրթական ծրագրերում ընդգրկվելու պահանջով:

¹St'u Виттенберг Г.Б. Совершенствование законодательства о наказании //Советское государство и право. 1980, № 6, էջ 72-79; Гальперин И.М. Задачи совершенствования теории и практики применения наказания, не связанного с лишением свободы // Наказания, не связанные с лишением свободы. М.: Юрид. лит., 1972, էջ 3-30; Кароли Бард. Альтернативные меры уголовного наказания // Альтернативы тюремному аключению. Penal Reform International, Информационный пакет № 2, М., PRI, 2001.

1992թ. գերմանական օրենսդիրները երկրի վերամիավորմից հետո առաջացած դատարանների ծանրաբեռնվածության խնդիրը լուծելու համար քրեական օրենսգրքում փոփոխություններ են կատարել՝ հոդվածների սանկցիաներում ավելացնելով այլընտրանքային պատիժներ:

Ներկայումս ամբողջ աշխարհում ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգը շարունակում է զարգանալ: Դրանց մեջ առավել շատ տարածում են ստացել հանրային աշխատանքները: Եվ, եթե արևմտյան երկրները վերը նշված պատիժների կիրառման ոլորտում արդեն ունեն բավականին փորձ, ապա Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, նախկին Խորհրդային երկրներում դեռ նոր են սկսվում կիրառվել¹: Հայաստանի Հանրապետության համար, որ գտնվում է տնտեսապես ծանր վիճակում, քրեական օրենսդրությունում ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ինստիտուտի զարգացումը առավել քան արդիական է:

Քրեաիրավական քաղաքականության ժամանակակից միտումները իրենց արտացոլումը գտան ՀՀ 2003թ. քրեական օրենսգրքում: Այս օրենսգրքի հիմնական գաղափարներից մեկը, համենայն դեպս հռչակված գաղափարներից մեկը՝ քրեաիրավական ներգործության միջոցների խստացումն է՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ու չարամիտ հանցագործների նկատմամբ և ընդհակառակը՝ ազատազրկման հետ չկապված այլընտրանքային մեղմ պատիժների կիրառումը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կապակցությամբ: Դրա հետ մեկտեղ հաշվի են առնվել ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժներին և սանկցիաներին վերաբերվող միջազգային փաստաթղթերի առաջարկությունները²:

¹St' u Вивьен Стерн. Разработка мер, альтернативных тюремному заключению в странах Центральной и Восточной Европы и Средней Азии: Справочник. Венгрия: Институт конституционной и правовой политики, 2002, էջ 62:

²St' u Об усовершенствовании применения Европейских правил относительно общественных санкций и мер воздействия (Рекомендация № 22, принята Комитетом Министров Совета Европы 29.09.2000г.) // Аспект. Информационный бюллетень (Украина). 2001, № 4 (5), էջ 52-55; Рекомендация № R (92) 16 Комитета Министров государствам-членам относительно Европейских правил по применению общественных санкций и мер взыскания (принята Комитетом Министров 19 октября 1992 года) // Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник

Նախքան ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի ձևավորման չափանիշներին անդրադառնալը, նպատակահարմար կլիներ հետազոտել քրեական իրավունքում ազատազրկման հետ չկապված այլընտրանքային սանկցիաների ձևավորման առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պատիժների ընդհանուր համակարգի ձևավորման առանձնահատկությունները՝ առանձնացնելով ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների տեղը և դերը վերը նշված համակարգում:

Քրեաիրավական սանկցիաները սոցիալական սանկցիաների տարատեսակ են, այդ իսկ պատճառով դրանք կարող են հասկացվել սոցիալական կարգավորման ընդհանուր համակարգում դրանց նշանակության տեսանկյունից: Արմատացած է այն գաղափարը, որ դրանք քրեաիրավական նորմերի խախտման նկատմամբ հասարակության հակազդեցությունն են¹:

Այս տեսանկյունից անչափ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ քրեաիրավական սանկցիայի կառուցման ժամանակ, դրա մեջ ընդգրկվում են ըստ էության իրար բացառող պատիժներ և դատարանը ընտրում է դրանցից մեկը: Դրա համար էլ շատ կարևոր է, որ սանկցիայում ընդգրկվեն այնպիսի պատժատեսակներ, որոնք հարկադրանքի ծավալով համաչափ են և կարող են համեմատվել իրար հետ:

Ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները պատժի համակարգում զգալի դեր և նշանակություն ունեն: Վերը նշված պատիժների սոցիալական արժեքն այն է, որ դրանց կիրառման ժամանակ հասարակությունը չի մեկուսացվում հանցավորի վրա ներգործելու գործընթացից, ինչպես դա լինում է ազատազրկում պատիժը կիրառելու դեպքում:

Այսօր քրեական իրավունքում պատժի համակարգի ձևավորման և դրա կառուցման սկզբունքների վերաբերյալ գրեթե ոչ մի մենագիր հետազոտություն չկա: Վերը նշված խնդրին նվիրված հետազոտությունները վերաբերվում են նախորդ դարի

нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, էջ 107-123:

¹Տե՛ս Բеляև Կ.Ա. Цели наказания и средства их достижения. М., 1963, էջ 86-87; Сыч К.А. Уголовное наказание и его состав: теоретико-методологические аспекты исследования. Рязань: Академия права и управления Минюста России, 2001, էջ 5:

60-70-ական թվականներին¹, ինչը բնականաբար չի կարող բավարարել ներկայիս պահանջները: Ժամանակակից հայեցակարգերը կողմնորոշված են մի քանի հիմնական ուղղություններով: Դրանք են՝ պատժի տեսակների ընդլայնումը՝ ազատազրկման հետ չկապված այլընտրանքային միջոցները պատժի համակարգի մեջ ընգրկելով և բոլոր տեսակի պատիժների համալիր կիրառումը, ինչպես դա տեղի է ունենում արտասահմանյան երկրներում: Բայց, քանի որ նախկին հայեցակարգերը իրենց հետքն են թողել ներկայիս պատժի համակարգի ձևավորման վրա, ուստի անհրաժեշտ է կարճ անդրադառնալ դրանց հիմնական դրույթներին և սկզբունքներին:

Դեռևս 19-րդ դարի վերջերին պրոֆեսոր Ն.Ա. Տագանցևը պատժի համակարգը սահմանել է, որպես «տվյալ օրենսգրքի համար բնութագրական կոնկրետ միջոցների խումբ, որոնք գտնվում են փոխադարձ ենթակայության կամ փոխհարաբերակցության մեջ»²: Ավելի ուշ Ս.Վ. Պոզնեշևը, զարգացնելով տվյալ դիրքորոշումը, պատժի համակարգը դիտում էր, որպես քրեական օրենսգրքում առկա հարկադրանքի միջոցների համակցություն, որոնք գտնվում են փոխհարաբերակցության մեջ և դասավորված են ըստ իրենց հարաբերական կարևորության աստիճանի³:

Ն.Ա. Բելյանը, չբացառելով պատժի համակարգի ամբողջականության հայեցակետը, առաջարկում է պատժի բոլոր տեսակները բաժանել հիմնական, լրացուցիչ և բացառիկ (մահապատիժ) պատիժների⁴:

Այսպիսով, երկար ժամանակ պատժի համակարգի սահմանումը դիտվել է նրա ամբողջականության տեսանկյունից, որը ենթարկվում է միևնույն սկզբունքներին և գործառնության օրինաչափություններին: Չբացառելով պատիժները որոշակի չափանիշներով դասակարգելու հնարավորությունը, քրեագետները երկար ժամանակ դրանք դիտում էին մեկ միասնական համակարգային համակցության մեջ, թույլ չտալով պատժի համակարգը բաժանելու հարաբերականորեն անկախ կառուցվածքային տարրերի: Սակայն, փիլիսոփայության և համակարգերի ընդհանուր տեսության մեջ

¹Տե՛ս Багрий-Шахматов Л.В. Система наказаний по советскому уголовному праву, их классификация и правовое регулирование исполнения: Автореф. дис.... докт. юрид. наук. Минск, 1969, էջ 37; Елеонский В.А. Уголовное наказание и воспитание позитивной ответственности личности. Рязань, 1979, էջ 83:

²Տե՛ս Таганцев Н.С. Лекции по уголовному праву. Часть общая. Вып. 4. СПб., 1892, էջ 12-19:

³Տե՛ս Познышев С.В. Основные начала науки уголовного права. М., 1912, էջ 465:

⁴Տե՛ս Беляев Н.А. Уголовно-правовая политика и пути ее реализации. Л., 1986, էջ 120:

տվյալ կատեգորիան դիտվում է, որպես տարբեր գործառնական միավորների համակցություն, որոնք միմիայնց հետ փոխկապակցված են և փոխգործակցում են միևնույն ընդհանուր նպատակին հասնելու համար¹: Ուստի, եթե նշում ենք, որ պատիժները իրենցից ներկայացնում են որոշակի համակարգ, հետևաբար այն բաղկացած է որոշակի ներքնապես փոխկապակցված ենթահամակարգերից, որոնք ունեն իրենց մասնավոր նպատակները և ձևավորման սկզբունքները:

Քրեական իրավունքի գիտության մեջ պատժի ենթահամակարգերի տեսությունը այսօր գտնվում է զարգացման փուլում: Օրենսդիրը չի օգտագործում «համակարգ» հասկացությունը, այլ այն ՀՀ քրեական օրենսգրքում անվանում է «պատժի տեսակներ»: Համաձայնե՞նք Կ.Ա.Սիչի հետ, որ պատիժների օրենսդրական ցանկը ներկայացվում է որպես որոշակի համակարգ միայն տեսական–մեթոդաբանական տեսանկյունից, ինչը գիտագործնական նպատակներ է հետապնդում²:

Զարգացնելով տվյալ միտքը, նա եկել է այն եզրահանգման, որ օրենսդրությամբ սահմանված պատժի տեսակների ցանկը նույնիսկ տեսական առումով դեռևս չունի համակարգի հատկանիշները, քանի որ չի արտացոլում պատիժների կիրառման և փոխգործակցման մեխանիզմների ներքին կապերը, նրանց քանակական և որակական հատկանիշները և համակարգային մոտեցման այլ տարրեր: Օրենսդրությամբ սահմանված պատժի տեսակները պատժի համակարգի առաջնային տարրն են և մեթոդաբանական առումով առավել ճիշտ է հետազոտությունը սկսել այդ համակարգի ամբողջականությունը կազմող այդ տարրերի պարզաբանումով³:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ պատժի տեսակները քրեական օրենսդրությամբ սահմանված պատիժներն են, որոնք ընդգրկված են պատժի համակարգում, որպես դրա կառուցվածքային հիմնական տարր, որոնք ունեն իրենց անվանումը, հատուկ բովանդակությունը և հատկանիշները,

¹Տե՛ս Васильев А.М. Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории права. М.: Юрид. лит., 1976, էջ 150; Философский энциклопедический словарь. М., 1983, էջ 345:

²Տե՛ս Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, էջ 190:

³Տե՛ս Сыч К.А. նշված աշխ., էջ 191:

որոնցով առանձնանում են պատժի մյուս տեսակներից¹:

Ա.Լ. Ցվետինովիչը առաջարկում է պատժի համակարգը բաժանել համապատասխան տեսակների, ելնելով նրանից, թե մարդու որ արժեքների և շահերի սահմանափակմանն են ուղղված դրանք: Այս չափանիշով նա տարբերակում է պատիժներ, որոնք սահմանափակում կամ զրկում են ազատությունից, պատիժներ, որոնք սահմանափակում են սեփականության իրավունքը, պատիժներ, որոնք բարոյական ազդեցություն են ունենում և այլն²:

Նշենք, որ հեղինակների դիրքորոշումները մեծ մասամբ ձևավորում են պատժի համակարգի և դրա տեսակների ու ենթատեսակների տեսական դասակարգումը: Գործնական տեսանկյունից ավելի կարևոր է պատիժների համակարգը դիտել դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու չափանիշով՝ հաշվի առնելով այն, թե տվյալ պատժատեսակը որքանով է իրականացնում դա: Այսպիսի մոտեցումը ընդլայնում է դատարանի հնարավորությունը՝ պատժի ընտրության ժամանակ ապահովելու սոցիալական արդարության սկզբունքը և պատժի համաչափությունը կատարած հանցագործությանը: Նման մոտեցմամբ պատժի համակարգի հետազոտությունը արդարացված է ոչ միայն քրեական իրավունքի այլ նաև սոցիալական այլ գիտությունների դիրքերից:

Այսպիսով, մեթոդաբանական տեսանկյունից ճիշտ կլինի ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները ընդհանուր պատժի համակարգում դիտել որպես առանձին ենթահամակարգ: Ինչպես ցանկացած համակարգ, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ենթահամակարգը նույնպես ունի իր բնութագրական հատկանիշները՝

1. ձևավորվում է պատժի ընդհանուր համակարգի շրջանակներում՝ ընդհանուր սկզբունքների և նպատակների հիման վրա,
2. արտացոլում է պատիժների հումանիզմի սկզբունքը,
3. արտահայտում է քրեաիրավական հարկադրանքի տնտեսման սկզբունքը,
4. կարող են կիրառվել հիմնականում ոչ մեծ և միջին ծանրության

¹Տե՛ս Курс советского уголовного права: В 6 т. / Под ред. А.А. Пионтков-ского, П.С. Ромашкина, В.М. Чихвадзе. М., 1970, Т. 3., էջ 56:

²Տե՛ս Цветинович А.Л. Дополнительные наказания: функции, системы, виды. Куйбышев, 1989, էջ 39:

հանցագործությունների դեպքում,

5. ունի իր համակարգային կառուցվածքը և ձևավորման սկզբունքները,

6. ավելի մեծ չափով է թույլ տալիս իրականացնելու պատժի տարբերակման և անհատականացման սկզբունքը:

Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների վերը նշված հատկանիշների մեծ մասն մեր կողմից արդեն քննարկվել են, ուստի այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների սկզբունքների և պատիժների ընդհանուր սկզբունքների հետ դրանց փոխկապակցվածության վրա:

Պատժի համակարգի կառուցման սկզբունքները միշտ եղել են գլխավոր գործոնը, կախված են եղել մեծ թվով ոչ իրավական հանգամանքներից (տնտեսությունից, հասարակության սոցիալական կառուցվածքից, պետական կարգից և այլն) և արտացոլել են պետության քաղաքականությունը հանցավորության դեմ տարվող պայքարում՝ կոնկրետ պատմական ժամանակաշրջանում:

Այսպես, քրեական իրավունքի գիտության մեջ նշվում է, որ պատժի համակարգի կառուցման սկզբունքները քրեական իրավունքի գիտության հիմնական գաղափարների և դիրքորոշումների արտացոլումն են, որոնցով այս կամ այն պատմական ժամանակաշրջանում ղեկավարվում են օրենսդիրները՝ պատժի համակարգը կառուցելիս¹: Այդ իսկ պատճառով, դրանք չեն կարող լինել մեկընդմիշտ տրված հիմնական գաղափարներ կամ դիրքորոշումներ, քանի որ փոփոխական են, կախված են այս կամ այն ժամանակաշրջանում հանցավորության դեմ պայքարի պետության քրեական քաղաքականությունից, պատժի նպատակներից, հասարակության կրոնական, բարոյական և մշակութային հայացքներից: Սակայն սկզբունքները համընկնում են մեկ հարցում՝ միշտ շատ, թե քիչ արտացոլում են համամարդկային հումանիստական արժեքները որպես հանցավորության դեմ տարվող պայքարի միջոց:

¹Տե՛ս Гальперин И.М. Наказание: социальные функции, практика применения. М., 1983, էջ 143; Осипов П. П. Теоретические основы построения и применения уголовно-правовых санкций. Л., 1976, էջ 57; Шаргородский М.Д. Наказание, его цели и эффективность. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1973, էջ 96-103:

Պատժի համակարգի ձևավորման սկզբունքների վերաբերյալ քրեագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Այսպես, Ս.Վ.Պոզնիշևը համարում էր, որ պատժի համակարգը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մի շարք պահանջներ՝ պատիժը պետք է բավականաչափ պատժիչ ուժ ունենա, այսինքն՝ հանցավոր գործունեության ձգտումը զսպելու կարողություն, այն պետք է հնարավորինս հումանիստական լինի, չպետք է անհիմն տառապանքներ պատճառի, պատժիչ միջոցները պետք է հնարավորինս անհատականացված լինեն, պատիժը պետք է հնարավորինս քիչ չարիք պատճառի հանցագործի հարազատներին: Սակայն չկան և չեն կարող լինել այնպիսի պատժիչ միջոցներ, որոնք պատժելով հանցագործին՝ չարիք չպատճառեն հանցագործի հարազատներին, ուստի պատժիչ միջոցները պետք է լինեն բաժանելի: Այս պահանջը ելնում է նրանից, որ պատիժը պետք է հնարավորինս կանխի ռեցիդիվը, այն պետք է կատարած հանցագործությանը համաչափ լինի, որպեսզի դատարանը յուրաքանչյուր անգամ հանցագործին պատժելով, նրան ավելորդ տառապանքներ չպատճառի, կարողանա ընտրել այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է նոր հանցագործությունները կանխելու համար¹:

Ն.Դ. Սերգեյեվսկին համարում էր, որ պատժի համակարգը պետք է ձևավորվի այնպես, որ առավել մեծ հնարավորություն ընձեռվի պատժի անհատականացման համար: Այս տեսանկյունից նա, պատժի համակարգի ձևավորման սկզբունք է համարել պատժի անհատականացման սկզբունքը: Այս առիթով նա նշել է «քանի որ պատիժը առաջին հերթին անձին դատապարտելու և նրան պարսավելու արտաքին ձևն է, այն պետք է լինի անհատականացված, այսինքն՝ հնարավորինս տարածվի միայն դատապարտյալի, այլ ոչ թե նրա հարազատների վրա»: Այդ կարծիքին են նաև Լ.Ս. Բելոգորից-Կոտլյարեվսկին, Ն.Ս.Տագանցևը, Ի.Յա. Ֆոյինցկին²:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ սահմանված պատժի համակարգի ընդհանուր սկզբունքներն են՝ օրինականության (ՀՀ քր. օր.-ի 5 հոդված), օրենքի առջև հավասարության (ՀՀ քր. օր.-ի 6 հոդված), ըստ մեղքի պատասխանատվության (ՀՀ քր. օր.-ի 9 հոդված), արդարության և

¹Տե՛ս Познышев СВ. Основы пенитенциарной науки. М.: Мосполиграф, 1924, էջ 87:

²Տե՛ս նույն տեղում:

պատասխանատվության անհատականացման (ՀՀ քր. օր.-ի 10 հոդված), մարդասիրության սկզբունքները (ՀՀ քր. օր.-ի 11 հոդված): Օրենսդրությամբ սահմանված սկզբունքների հետ միասին քրեական իրավունքի գիտության մեջ առաջարկվում են պատժի համակարգի նաև այլ սկզբունքներ, օրինակ՝ պատժի որոշակիության սկզբունքը (պատժի չափի և ժամկետի հստակ սահմանումը, անորոշ դատավճիռների անթույլատրելիությունը), վերականգնման սկզբունքը, որը ենթադրում է դատարանի կողմից թույլ տված դատական սխալի դեպքում վնասի փոխհատուցում (նյութական վնասի փոխհատուցումը, բարոյական վնասի փոխհատուցումը), տնտեսման սկզբունքը, պատմական ավանդույթների սկզբունքը (պատժի համակարգի ձևավորման ժամանակ հաշվի առնել հասարակության բարոյական և կրոնական հայացքները)¹:

Հարկ է նկատել, որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի ձևավորման սկզբունքները արտացոլված չեն քրեական իրավունքի տեսության մեջ: Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների սկզբունքները մասամբ իրենց արտացոլումն են գտել միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների բավարարության և լրիվության սկզբունքը, մեծ թվով հանցագործությունների համար դեպենալիզացիայի և ապաքրեականացման սկզբունքը²:

Այս սկզբունքները պետությունից պահանջում են ստեղծել այնպիսի պատժի համակարգ, որը մի կողմից թույլ կտա առավել շատ տարբերակելու նշանակված պատիժը՝ բազմաթիվ գործոններ հաշվի առնելով, մյուս կողմից կլինի ապաքրեականացման կամ շատ հանցագործությունների դեպենալիզացիայի առաջին

¹Տե՛ս Сакаев А.И. Принципы построения системы уголовных наказаний // http://www.tisbi.ru/ResourcesA^estnik/vestO1_1/vest1_3.htm.

² Տե՛ս Стандартные минимальные правила ООН в отношении мер, не связанных с тюремным заключением (Токийские правила) // Уголовно-исполнительное право: Сборник нормативных актов / Под ред. П.Г. Пономарева. М.: Новый юрист, 1997, էջ 91-105; Рекомендация № R (92) 16 Комитета Министров государствам-членам относительно Европейских правил по применению общественных санкций и мер взыскания (принята Комитетом министров на 482-ом заседании заместителей министров 19 октября 1992 года) // Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, էջ 107-123:

քայլը, քրեական պատասխանատվությունը փոխարինելով ներգործության այլ միջոցներով, որոնք գտնվում են քրեական արդարադատության ոլորտից դուրս¹:

Թվում է, որ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի հիմքում պետք է դրվեն և հետագայում օրենսդրական ձևակերպում ստանան հետևյալ սկզբունքները՝

1. ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների բավարարություն և լրիվություն, որը դատարաններին թույլ կտա առավել արդյունավետ կիրառելու ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները,

2. ոչ մեծ ծանրության հանցագործությունների ապաքրեականացում և դեպենալիզացիա,

3. ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ցանկի սահմանում աստիճանակարգված ձևով դատապարտյալի անձնական կյանքին միջամտության աստիճանից ելնելով (նվազագույն միջամտությունից կամ դրա բացակայությունից մինչև հատուկ հսկողության սահմանում),

4. ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ենթահամակարգում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի ապահովում: Սա նշանակում է, որ պատժի նշանակման այն սկզբունքները, որոնք նախատեսված են գործող քրեական օրենսգրքում, արդիական են նաև այլընտրանքային պատիժների համար: Մասնավորապես, առավել խիստ այլընտրանքային պատիժը պետք է նշանակվի այն դեպքում, երբ պակաս խիստ պատիժները չեն կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը: Կամ՝ այլընտրանքային պատիժը պետք է անհրաժեշտ և բավարար լինի հանցանք կատարած անձին ուղղելու (ճիշտ կլիներ ասել անձին հասարակություն վերաինտեգրելու, նրա իրավահպատակ վարքագիծը ապահովելու) և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 49 հոդվածը նախատեսում է ազատագրկման հետ

¹Տե՛ս Բолее подробно см.: Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном английском праве // Правоведение. 1998, № 3, էջ 65-73; Данилюк С.А. Вопросы освобождения от уголовной ответственности // Правоведение. 1987, № 3, էջ 48-54; Делла Марра Т. Уголовный процесс Италии: реформа и контрреформа // Государство и право. 1994, № 1, էջ 56-67:

չկապված վեց տեսակի պատիժներ՝

1. տուգանքը,
2. որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
3. հանրային աշխատանքները,
4. հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը,
5. զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
6. գույքի բռնագրավումը:

Արտասահմանյան երկրներում ազատագրկման հետ չկապված պատիժների շարքին է դասվում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելը (<< քր. օր.-ի 70 հոդված): Սակայն, կարծում ենք, որ ճիշտ են այն քրեագետները, որոնք այս ինստիտուտը համարում են պատժից ազատելու տեսակ¹:

<< նախկին քրեական օրենսգրքի համեմատ քրեական նոր օրենսգրքում տեղ չեն գտել ազատագրկման հետ չկապված այնպիսի պատժատեսակներ, ինչպիսիք են՝

1. պաշտոնանկությունը,
2. պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը,
3. հասարակական պարսավանքը,
4. ծնողական իրավունքներից զրկելը:

Հասարակական պարսավանքը դուրս է մնացել պատժի համակարգից, քանի որ այն, մեր կարծիքով, քրեաիրավական բնույթ չունի, համարժեք չէ հանցագործությանը: Բացի այդ, այս պատժատեսակը փաստորեն մերժված էր դատական պրակտիկայի կողմից:

Պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը և ծնողական իրավունքներից զրկելը քաղաքացիաիրավական հասկացություններ են, քաղաքացիաիրավական պատասխանատվության տարատեսակներ և մեր կարծիքով, պատիժների համակարգում անընդունելի են:

Ինչ վերաբերվում է պաշտոնանկությանը, ապա այն աշխատանքային

¹ Ст'ю Ткачевский Ю. Юридическая природа условного осуждения // Уголовное право. 1999, N 1, էջ 35:

պայմանագրի լուծարման հետևանքներից է և կարգավորվում է աշխատանքային իրավունքի նորմերով: Պաշտոնանկության ընդգրկումը պատիժների համակարգում որոշակի իմաստով նույնացնում է քրեական և աշխատանքային իրավունքները, քրեական և կարգապահական պատասխանատվությանը:

Դրա հետ մեկտեղ ՀՀ քրեական օրենսգրքում ընդգրկվել է ազատագրկման հետ չկապված այլընտրանքային նոր պատժատեսակ՝ հանրային աշխատանքները:

Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հետազոտությունը լիարժեք չի լինի, եթե ուշադրություն չդարձնենք պատժատեսակների աստիճանակարգությանը՝ ըստ դրանց խստության: Նախկին քրեական օրենսգրքում պատժատեսակները թվարկվում էին առավել խիստ պատժից դեպի նվազ խիստ պատիժը հերթականությամբ, իսկ նոր քրեական օրենսգրքով՝ ընդհակառակը: Պատիժների նման աստիճանական դասավորվածությունը կարևոր նշանակություն ունի օրենսդրի և առավել ևս դատարանի համար: Այդ համակարգն ակնհայտ է դարձնում, թե օրենսդիրն ինչպես է գնահատում յուրաքանչյուր պատժատեսակի հարաբերական խստությունը, և կողմնորոշում է դատարանին առավել արդյունավետ պատժատեսակի ընտրության, մասնավորապես օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս:

Պատժի համակարգում առաջինը նշվում է տուգանքը: Փաստորեն օրենսդրի կարծիքով այն ամենամեղմ պատժատեսակն է: Ըստ էության սա երևի թե ճիշտ մոտեցում է, որովհետև տուգանքի դեպքում դատապարտյալի զրկանքները զուտ նյութական բնույթ են կրում: Հաջորդը որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն է: Ի տարբերություն տուգանքի, որը միանվագ պատիժ է, այս պատժատեսակը կիրառվում է որոշակի տևողությամբ: Ըստ էության դատապարտյալը հաճախ որոշակի ժամանակով զրկվում է այն գործունեությամբ զբաղվելու հնարավորությունից, որը նրա եկամուտի աղբյուրն է կամ աղբյուրներից մեկը, ինչը կարող է բավականաչափ ծանր հետևանքներ առաջացնել նրա կամ նրա ընտանիքի համար: Ուստի կարծում ենք, որ այս պատժատեսակը ավելի խիստ է, քան հանրային աշխատանքները:

Հաջորդը հանրային աշխատանքներն են: Գործող քրեական օրենսգիրքը

սահմանում է հանրային աշխատանքների բավականաչափ երկար ժամկետ՝ 2200 ժամ: Սակայն, հանրային աշխատանքների նման երկար ժամկետ ներկայումս գրեթե ոչ մի երկրի քրեական օրենսդրության մեջ չկա: Պետք է նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այդ ժամկետը խիստ կրճատվել է. հանրային աշխատանքները նախատեսվում է 60 ժամից մինչև 270 ժամ տևողությամբ: Հանրային աշխատանքների դեպքում զրկանքները դրսևորվում են ժամանակի կորստի և ֆիզիկական ծանրաբեռնվածության, ինչու չէ նաև որոշակի իմաստով ազատության սահմանափակման ձևով: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ դատապարտյալի, ինչու չէ նաև նրա ընտանիքի համար ունեցած բացասական հետևանքների տեսանկյունից հանրային աշխատանքները պակաս խիստ պատժատեսակ է, քան որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Ուստի ճիշտ կլիներ պատժի համակարգում դրանց տեղերը փոխել:

Ինչ վերաբերվում է հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելուն, ապա այն կարող է կիրառվել միայն, որպես լրացուցիչ պատիժ և նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաներից, որևէ մեկով: Այն դատարանների կողմից գործնականում չի կիրառվում: ՀՀ քրեական օրենսգրքի 53 հոդվածի համաձայն՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործության համար անձին դատապարտելիս դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող տվյալները, նրան կարող է զրկել հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից: Փաստորեն, այս պատժատեսակի կիրառումը օրենսդիրը թողնում է դատարանի հայեցողությանը, այն առավել շատ նմանվում է քրեաիրավական նորմերով նախատեսված հարկադրանքի այլ միջոցի, քան պատժի: Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է այն պատժի համակարգից հանել և քրեական օրենսգրքում ընդգրկել, որպես քրեաիրավական նորմերով նախատեսված հարկադրանքի այլ միջոց:

Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը գործող քրեական օրենսգրքով եզրափակում է ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների ցանկը: Փաստորեն այս պատժատեսակը օրենսդիրը դիտում է որպես առավել խիստ այլընտրանքային պատիժ: Եթե գնահատենք այս պատժատեսակի բովանդակությունը,

ապա դրա առավել խիստ այլընտրանքային պատիժ լինելու հանգամանքը կարելի է կասկածի տակ առնել: Սակայն, եթե հաշվի առնենք դրա տևողությունը, ապա ինչ խոսք կարելի է այն ավելի խիստ համարել քան տուգանքը, հանրային աշխատանքները, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Վերջինի հետ կապված պետք է նշել, որ թեև անձը լիովին զրկվում է գործունեության որոշակի տեսակով զբաղվելու հնարավորությունից, այնուամենայնիվ պահպանվում են այլ աշխատանքով զբաղվելու հնարավորությունները: Բացի այդ, դատապարտյալը կարող է զրկվել ոչ թե այն գործունեությամբ զբաղվելու իրավունքից, որը նրա եկամուտի միակ կամ հիմնական աղբյուրն է, այլ այնպիսի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, որը երկրորդական նշանակություն ունի: Մինչդեռ զիվորական ծառայության մեջ սահմանափակման դեպքում անձը որևէ այլ հնարավորություն չունի քան շարունակելու իր աշխատանքը, ընդ որում՝ զրկվելով եկամուտի մի զգալի մասից, առաջխաղացման հնարավորությունից:

Ինչպես հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, գույքի բռնագրավումը նույնպես կարող է կիրառվել միայն որպես լրացուցիչ պատիժ: ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի համաձայն՝ գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է ի սեփականություն պետության: Օրենսդիրը հստակ ձևակերպում է, որ այս պատժատեսակը կարող է նշանակվել միայն ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներով նախատեսված դեպքերում, և նշում է կիրառման սպառիչ հիմքերը՝ շահադիտական դրդումներով, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար:

Իրավաբանական գրականության մեջ պետական հարկադրանքի այս միջոցի վերաբերյալ տրվել են տարբեր քրեաիրավական գնահատականներ: Հեղինակների մի մասը գտնում է, որ գույքի բռնագրավումը չի համապատասխանում քրեական իրավունքի նպատակներին և սկզբունքներին, մասնավորապես անձնական պատասխանատվության սկզբունքին, և այս պատժատեսակի նույնիսկ սահմանափակ կիրառումն ուղղված է ոչ միայն և ոչ այնքան հանցագործի դեմ (նա այդ ընթացքում,

որպես կանոն, ազատագրված է), որքան նրա ընտանիքի դեմ: Նրանք այս պատժատեսակը, հատկապես գույքի լրիվ բռնագրավումը, համարում են չափից ավելի դաժան և լրացուցիչ պատժատեսակին անհարիր պատժիչ ներուժով օժտված: Ժամանակին նույնիսկ առաջարկություններ են արվել այս պատժատեսակը չընդգրկել պատժի համակարգում՝ համարելով այն ամբողջատիրական պետության ժառանգություն: Չնայած, ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ բռնագրավման ենթակա չէ դատապարտյալի կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բայց այնուամենայնիվ կարելի է համաձայնվել տվյալ պատժատեսակը պատժի համակարգում չընդգրկելու տեսակետի հետ: Հատկանշական է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքով գույքի բռնագրավումը որպես պատժատեսակ նախատեսված չէ: ՀՀ քրեական նոր օրենսգրքի 129 հոդվածով նախատեսված է հանցագործության գործիքների, միջոցների, առարկաների կամ հանցագործությամբ ստացված գույքի կամ եկամտի բռնագրավում:

Պետք է նշել, որ մեր կարծիքով, գործող ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված այլընտրանքային պատիժների ցանկը թերի է: Կարծում ենք, հիմնական բացթողումն այն է, որ այս ցանկում բացակայում է այնպիսի պատժատեսակ, որը իր խստությամբ կարող էր իրական այլընտրանք հանդիսանալ ազատագրկմանը, բացի այդ հնարավորություն կտար վերասոցիալականացնելու դատապարտյալին՝ առանց նրան հասարակությունից մեկուսացնելու: Այս բացը լրացնելուն է ուղղված ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որտեղ նախատեսվում են ազատագրկմանն այլընտրանք համարվող ևս մի քանի պատժատեսակներ: Դրանք են՝ հանրային իրավունքների սահմանափակումը, ծնողական իրավունքներից զրկելը, օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից վտարելը և ազատության սահմանափակումը: Հենց վերջին պատժատեսակն է, որը մեր կարծիքով, պետք է իրական այլընտրանք հանդիսանա ազատագրկմանը, որովհետև իր ժամկետներով (նախատեսվում է վեց ամսից երեք տարի ժամկետով), բովանդակությամբ (որոշակիորեն սահմանափակվում են անձի ազատությունները), վերասոցիալականացման հնարավորություններով (ենթադրվում է

վերասոցիալականացմանն ուղղված աշխատանքների իրականացում պրոբացիոն ծառայության կողմից) կարող է դառնալ պատժի նպատակների իրականացման առավել արդյունավետ միջոցներից մեկը:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք սահմանել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի հասկացությունը. **«Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգը համաստորադասված այնպիսի պատիժների սպառիչ ցանկն է, որոնք նպատակ են հետապնդում վերականգնելու սոցիալական արդարությունը, կանխելու հանցագործությունները, ինչպես նաև վերասոցիալականացնելու դատապարտյալին ու ապահովելու նրա իրավահպատակ վարքագիծը՝ առանց նրան հասարակությունից մեկուսացնելու»:**

§ 2. Տուգանք պատժատեսակի նշանակման և կատարման

հետ կապված հիմնախնդիրները

Տվյալ պատժատեսակը կարելի է անվանել առավել հին պատժատեսակներից մեկը, որը միայն ժամանակի ընթացքում է դարձել ազատագրկում պատժատեսակի այլընտրանք: Տուգանքը դասվում է գույքային պատիժների թվին: Այն կիրառվել է նաև հին և միջնադարյան հայ քրեական իրավունքում: Դրա մասին բազմիցս հիշատակվում է Շահապիվանի ժողովի կանոններում: Այն շատ հաճախ նշանակվում էր եկեղեցական կանոնական բովանդակություն ունեցող այնպիսի պատժի փոխարեն, ինչպիսին էր ապաշխարանքը: Հանցագործության մեջ մեղադրվողը պարտավոր էր ապաշխարանքի փոխարեն օրենքով ճշտորեն սահմանված չափով դրամ վճարել տուժողին, եկեղեցուն, աղքատներին կամ էլ զանազան բարեգործական հաստատությունների: Այն նշանակվում էր և՛ որպես ինքնուրույն և՛ որպես լրացուցիչ պատիժ: Ժողովի կանոնների համաձայն՝ ամուսնական անհավատարմության մեջ մեղադրվող անձանց խիստ պատիժների ենթարկելուց բացի, նրանց նկատմամբ կիրառվում էր տուգանք: Ազատ քաղաքացիների նկատմամբ սահմանվող տուգանքի չափը ավելի մեծ էր, քան գյուղացիների: Փոխարենը վերջիններս լրացուցիչ ենթարկվում էին մարմնական զանազան պատիժների: Շահապիվանի ժողովի կանոններով տուգանք էր նշանակվում նաև ամուսնու կողմից կնոջն անհիմն արձակելու, կնոջը բռնությամբ առևանգելու, հավատուրացության, կախարդության, վիուկության, դյութանքի, արնապղծության և մի շարք այլ հանցագործությունների համար: Տուգանքը որպես պատիժ սահմանված է իրավունքի ամենահին հուշարձաններում¹:

Տուգանքը, որպես պատժատեսակ, լայնորեն կիրառվել է նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»: Այն նշանակվում էր այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են գողությունը, կողոպուտը, ուրիշին դիտավորությամբ հարվածելը կամ վիրավորելը, ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելը: Յուրաքանչյուր կոնկրետ հանցագործության համար տուգանքի հստակ չափ էր սահմանված: Մխիթար Գոշը

¹Տե՛ս Թովմասյան Ա. Թ., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք. Եր., 1962, էջ 564-565:

ծանր հանցագործությունների համար գույքային պատիժների կիրառումը (տուգանք, գույքի բռնագրավում, պատճառված վնասի հատուցում) ուղղակի անհրաժեշտություն էր համարում: Մխիթար Գոշը իրավաբանական նրբանկատությամբ միմյանցից սահմանազատում էր գույքի բռնագրավումը և տուգանքը՝ որպես քրեական պատիժներ, որոնք կիրառվում էին դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար և վնասի հատուցումը՝ որպես քաղաքացիաիրավական հայցի բավարարում, որը նշանակվում էր անզգուշությամբ կատարված և նյութական վնաս պատճառած արարքների դեպքում:

Տուգանքը հայտնի էր նաև Ռուսական Պրավդային, որտեղ բավականին մեծ տեղ էր հատկացվում դրամական տուգանքներին:

Օրինակ՝ Ռուսական Պրավդայում նախատեսված էր այնպիսի պատիժ, ինչպիսին էր դրամական բռնագանձումը, որը բաժանվում էր երկու մասի՝ տուգանք և գույքի բռնագրավում: Տուգանքը վճարվում էր ի օգուտ իշխանի, իսկ գույքի բռնագրավումը ի օգուտ տուժողի՝ հանցագործությամբ պատճառված վնասի դիմաց: Ռուսական Պրավդայում նախատեսված էր նաև այնպիսի պատիժ, ինչպիսին էր «продажа»-ն՝ դրամական տուգանքը, որը բռնագանձվում էր ի օգուտ իշխանի, ինչպես անձի դեմ ուղղված, այնպես էլ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար¹:

Տուգանք պատժատեսակը նախատեսված էր նաև նախկին (1961թ.) քրեական օրենսգրքով և կարող էր սահմանվել նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հազարապատիկը չափով²: Ընդ որում, տուգանքի վճարումն անհնարին լինելու դեպքում դատարանը կարող էր տուգանքը փոխարինելու վերաբերյալ որոշում կայացնել՝ պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելով, այսինքն՝ տուգանքը չվճարելու դեպքում այն հարկադիր բռնագանձվում էր³: Տուգանքը դատապարտյալի գույքային իրավունքները սահմանափակող անզգուշությամբ, ինչպես նաև շահադիտական դրդումներով կատարվող դիտավորյալ հանցանքների դեմ պայքարի գործում առավել նպատակահարմար և արդյունավետ պատժատեսակ է: ՀՀ

¹Տե՛ս Хрестоматия по истории отечественного государства и права (X век -1917 год). / Сост. проф. В.А. Томсинов. М.: Зерцало, 1998, էջ 9:

²Տե՛ս Հայկական ՍՍՀ 1961 թվականի մարտի 7-ի օրենսգիրք /20-ը հունվարի 1998 թվականի կատարած փոփոխություններով և լրացումներով/:

³Տե՛ս նույն տեղը:

քրեական օրենսգրքի 51 հոդվածի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով:

Տուգանք պատժատեսակը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 204 հոդվածներով:

Քրեաիրավական տեսանկյունից տուգանքը որոշակի ծավալով գույքային սահմանափակման բնույթ ունեցող քրեական պատասխանատվության միջոց է: Իրավաբանական գրականության մեջ կարծիքներ են արտահայտվել այն մասին, որ տուգանքի նշանակումով չի իրականացվում պատժի ուղղման նպատակը և միայն ավելորդ անգամ հիշեցվում է հանցագործին հետագայում ավելի շրջահայաց և հաշվենկատ լինելու անհրաժեշտության մասին: Նման դիրքորոշումը հակասում է քրեական օրենսդրությանը, որտեղ ամրագրված են պատժի համակարգի մեջ մտնող բոլոր պատժատեսակների համար ընդհանուր նպատակներ: Տուգանքը՝ որպես պատժի համակարգի մեջ մտնող ինքնուրույն պատժատեսակ, կարող է և պետք է հասնի դատապարտյալի ուղղման (վերասոցիալականացման) նպատակին: Այլ հարց է այդ նպատակին հասնելու միջոցը, որը տուգանքի համար խիստ յուրահատուկ է, դատապարտյալի նյութական իրավունքների անմիջական սահմանափակումը: ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաներում տուգանքի չափը տարբերակված է: Ինչպես նշվեց, տուգանքը կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով: Տուգանքի չափը որոշվում է դատարանի կողմից՝ հաշվի առնելով հանցագործության բնույթն ու ծանրությունը, ինչպես նաև դատապարտյալի գույքային դրությունը (քրեական օրենսգրքի 51 հոդվածի երկրորդ մաս): Դատապարտյալի գույքային դրություն ասելով պետք է հասկանալ նրա վաստակի չափը, ընտանիքի ապահովվածությունը և այլն: Ընտանիքի շահերն այս պարագայում տուժում են ոչ պակաս, քան այլ պատժատեսակներ նշանակելիս: Պետք է

նշել, որ երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններում տուգանքի չափը որոշվում է ըստ հանցանք կատարած անձի եկամուտների չափի: Կարծում ենք, որ նման մոտեցումը առավել ամբողջական է ապահովում արդարության սկզբունքի իրականացումը: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում նույնպես նախատեսվում է տուգանքի չափը որոշել ըստ հանցանք կատարած անձի եկամուտների չափի: Ընդ որում, եկամուտների չափը որոշելիս մեր կարծիքով անհրաժեշտ է հաշվի առնել եկամուտների կամ գույքային օգուտների հետևյալ տեսակները՝ 1) աշխատավարձը, 2) այլ գործունեությունից ստացվող եկամուտները, 3) արժեթղթերից ստացվող եկամուտները, 4) բանկային ավանդներից ստացվող տոկոսադրույքները: Դատապարտյալի գույքային դրությունը գնահատելիս, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, ինչպես նաև ընտանեկան դրությունը, մասնավորապես՝ ընտանիքի անդամների քանակը, նրանց զբաղվածությունը կամ հակառակը՝ գործազուրկ լինելու փաստը, ընտանիքի անդամների առողջական վիճակը, հաշմանդամությունը, առողջական խնդիրների լուծման համար կատարվող ծախսերը, ընտանիքում անչափահասների առկայությունը, նրանց քանակը, դատապարտյալի խնամքի տակ գտնվողների քանակը և այլ հանգամանքներ:

ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան՝ տուգանքը կարող է նշանակվել միայն որպես հիմնական պատիժ: Տուգանքը նշանակվում է, երբ այն ուղղակիորեն նախատեսված է քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայում, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (օրենսգրքի 64 հոդված), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս (քրեական օրենսգրքի 77 հոդված):

Մինչև դատական քննությունը կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ տուգանք նշանակելիս դատարանը, հաշվի առնելով կալանքի տակ պահելու ժամկետները, նվազեցնում է տուգանքի չափը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց (քրեական օրենսգրքի 69 հոդված, հինգերորդ մաս): Տուգանք պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները, կարգավորվում են քրեակատարողական օրենսդրությամբ:

Այսպես, եթե դատապարտվողը անձնական կամ նյութական դրությունից ելնելով,

ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարել տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում, առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Նշված արտոնությունն ուժը կորցնում է, եթե դատապարտյալը նշանակված գումարի մասերը ժամանակին չի մուծում (քրեական օրենսգրքի 51 հոդված երրորդ մաս):

Տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը կարող է տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինել հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում ստացվում է պակաս, քան երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակվում է երկու հարյուր յոթանասուն ժամ, իսկ եթե այն գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ: Հոդվածի բովանդակությունից երևում է, որ տուգանքը հանրային աշխատանքներից բացի այլ պատժատեսակով չի փոխարինվում (ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդված 4-րդ մաս):

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 4-րդ մասը ՀՀ Սահմանադրական դատարանի 23.04.2013թ. որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու միջև: Պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի այս որոշումը գործնականում հանգեցրել է նրան, որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելիս, երբ հաշվարկի արդյունքում ստացվում է 270 ժամից պակաս, ապա փոխարինում տեղի չի ունենում և անձը

փաստորեն կատարած հանցանքի համար չի պատժվում: Կարծում ենք, որ նման իրադրությունն անընդունելի է: Ուստի, համաձայնելով ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը, ցանկանում ենք նշել, որ մեր կարծիքով հարցի լուծման առավել օպտիմալ տարբերակ է առաջարկվում ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում: Այստեղ նախատեսվում են մի քանի տարբերակներ, որոնք կարող են կիրառվել տուգանքի վճարման անհնարինության դեպքում: Նախ՝ դատարանը կարող է տուգանքի վերահաշվարկ կատարել, այսինքն՝ սահմանել նոր չափ, որը դատապարտյալի համար ընդունելի կլինի: Երկրորդ՝ տուգանքի վճարման ժամկետը կարող է երկարացնել ևս մեկ տարով: Վերջապես, կարող է տուգանքը փոխարինել հանրային աշխատանքներով՝ 60 ժամ տևողությամբ: Այս վերջին լուծումը, մեր կարծիքով, կարող է նորից խնդիրներ առաջացնել, դրա համար էլ առաջարկում ենք պարզապես նախատեսել տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու պարզ հաշվարկ՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց հաշվարկելով՝ առանց հանրային աշխատանքների նվազագույն սահմանը նշելու (սահմանափակումը կարող է վերաբերվել միայն առավելագույն ժամկետին): Ինչ վերաբերվում է տուգանքի վճարումից խուսափելուն, ապա նախագիծը այդ դեպքերի համար նախատեսում է քրեական պատասխանատվություն՝ առանձին հանցակազմ նախատեսելով արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Մինևույն ժամանակ նախագծում նշվում է, որ անձի եկամուտների չափը որոշելու անհնարինության դեպքում տուգանքի չափը որոշվում է ըստ ՀՀ –ում սահմանված նվազագույն աշխատավարձի:

Որոշակի առանձնահատկություններ ունի տուգանքի կիրառումն անչափահասների նկատմամբ: ՀՀ նախկին քրեական օրենսգրքում (1961թ.) օրենսդիրը հաշվի էր առել անչափահասի հոգեբանական և ֆիզիոլոգիական զարգացման տարիքային ու անհատական առանձնահատկությունները, բայց գործնականորեն անտեսել էր նրանց տնտեսական և նյութական վիճակը: Արդյունքում՝ հանցանքը կատարվում էր անչափահասի կողմից, իսկ պատիժը, փաստորեն, կրում էին նրա ծնողները, քանի որ անչափահասը, որպես կանոն, սեփական եկամուտներ չունի: Նման պարագայում, մեր կարծիքով, խախտվում էին ոչ միայն պատժի

անհատականացման, անձնական պատասխանատվության սկզբունքները այլև քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, քանի որ հանցանք կատարած անչափահասը որևէ պատիժ չէր կրում: ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ տուգանքը կիրառվում է միայն անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով (քրեական օրենսգրքի 87 հոդված): Տուգանք պատժատեսակը կարող է նշանակվել գրեթե բոլոր ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար, թե՛ չափահասների և թե՛ անչափահասների նկատմամբ: Ընդ որում, տուգանք նախատեսող սանկցիաների ճնշող մեծամասնությունը նախատեսված է գույքային բնույթի հանցագործությունների համար, երբ հանցագործը ձգտում է ուրիշի հաշվին նյութական շահ ստանալ:

Տուգանքն արդյունավետ պատիժ է նաև անզգույշ հանցագործությունների դեմ պայքարի գործում, երբ հաճախ անհրաժեշտություն չկա հանցագործին մեկուսացնելու հասարակությունից: Վիճակագրությունը վկայում է, որ 2005թ. տուգանքի են դատապարտվել 1057 անձ, 2006թ.՝ 929 անձ, 2007թ.՝ 850 անձ, 2008թ.՝ 692 անձ, 2009թ.՝ 596 անձ, 2010թ.՝ 702 անձ, 2011թ.՝ 705 անձ, 2012թ.՝ 803 անձ, 2013թ.՝ 701 անձ, իսկ 2014թ.՝ 506 անձ: Փաստորեն, տուգանքը կազմում է նշանակված պատիժների մոտ 10-ից 15 տոկոսը: Տուգանքի կիրառման նման ցածր ցուցանիշները, մեր կարծիքով, կախված են մի քանի հանգամանքներից: Նախ՝ շատ հաճախ հանցանք կատարած անձինք գործազուրկ են կամ մշտական աշխատանք չունեն կամ էլ այնքան եկամուտ կամ գույք չունեն, որ հնարավոր լինի տուգանքի վճարումը: Իսկ եթե տուգանքի վճարումն անհնար է, ապա նշանակելն էլ դառնում է անիմաստ: Բացի այդ, դատարանները հաճախ գտնում են, որ տուգանքը չափազանց մեղմ պատժատեսակ է և հնարավոր չէ դրանով հասնել պատժի նպատակների իրագործմանը: Մինչդեռ, կարծում ենք, որ գույքային վնաս պատճառած հանցագործությունների դեպքում այս պատժատեսակը անչափ արդյունավետ կարող է լինել թեկուզ նրանով, որ կարող է ապահովել տուժողին պատճառած վնասների

հատուցումը: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած նորամուծությունը առավել քան արդիական է: Այստեղ նախատեսվում է, որ տուգանքի 50 տոկոսն ուղղվում է հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման պետական ֆոնդ: Նման ֆոնդ ունենալու գաղափարը, մեր կարծիքով հիմնավորված է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ ՀՀ-ում հանցագործությամբ պատճառված վնասների հատուցումը իրականում անմխիթար վիճակում է: Ընդ որում, կարծում ենք, որ այս տեսանկյունից ավելի ճիշտ կլինի, եթե տուգանքը նախատեսվի նաև որպես լրացուցիչ պատիժ:

Պետք է նկատել, որ զարգացած երկրներում տուգանքը մի քանի անգամ ավելի հաճախ է կիրառվում, քան ՀՀ-ում: Այսպես, Գերմանիայում դատապարտվածների 80 տոկոսը ենթարկվում է տուգանք պատժատեսակի¹: Մեծ Բրիտանիայում դատապարտվածների 75 տոկոսն է ենթարկվում տուգանք պատժատեսակի: Դատարանները այս պատժատեսակը համարում են շահադիտական հանցագործությունների համար կիրառվող առավել նպատակահարմար պատժատեսակ: Ճապոնիայում ներկա դրությամբ նշանակվող պատիժների 95 տոկոսը կազմում է տուգանքը²:

Մեծ Բրիտանիայում որոշ հանցագործությունների համար դատարանները նշանակում են համակցված պատիժներ՝ տուգանք և պրոբացիա, տուգանք և հանրային աշխատանքներ, տուգանք և պայմանական դատապարտություն³:

Ռուսաստանի Դաշնությունում ևս նշանակվում է երկու տեսակի տուգանք՝ 1) 2500 ռուբլուց մինչև 1000000 ռուբլի և 2) երկու շաբաթից մինչև հինգ տարվա կտրվածքով՝ նվազագույն աշխատավարձի կամ դատապարտյալի այլ եկամուտների չափով:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում տուգանքը, թե՛ օրենսդրությամբ, թե՛ գործնականում նույնպես շատ տարածված պատժատեսակ է:

Տուգանքը կարող է նշանակվել և՛ որպես հիմնական և՛ որպես լրացուցիչ պատիժ:

¹Տե՛ս Жалинский А.Э. Современное немецкое уголовное право. М., 2006, էջ 313:

²Տե՛ս Морозов Н.А. Преступность и борьба с ней в Японии. СПб., 2003, էջ 150:

³Տե՛ս Уголовно-исполнительное законодательство (США, Англия, Германия, Франция). М., 1993, էջ 34-37:

Որպես ընդհանուր կանոն, օրենսդրությամբ սահմանված չէ տուգանքի առավելագույն չափը: Դաշնային քրեական օրենսդրությունը իր մեջ ներառում է տուգանք պատժատեսակի մի շարք չափեր, սկսած 50 ԱՄՆ դոլլարից մինչև 66.000 ԱՄՆ դոլլար¹:

Օրենսդրությունը տուգանքի նշանակումը չի կապում հանցագործության ծանրության աստիճանի հետ: Տուգանքը նախատեսված է շահադիտական դրդումներով կատարված հանցագործությունների և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում և այլն²:

Գերմանիայի քրեական օրենսդրությամբ ևս նախատեսված է երկու տեսակի տուգանք՝ դրամական տուգանք և գույքային տուգանք:

Դրամական տուգանքը համարվում է երկրորդ հիմնական պատիժը ազատազրկումից հետո: Դրամական տուգանքի օրական նվազագույն դրույքաչափը կազմում է 5 լրիվ օրական դրույքաչափ, առավելագույնը 360 լրիվ օրական դրույքաչափ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Օրական դրույքաչափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատական է, քանի որ դատարանը տուգանքի չափը սահմանում է դատապարտյալի նյութական վիճակը հաշվի առնելով: Դրա հետ մեկտեղ դատարանը, որպես կանոն, հաշվի է առնում դատապարտյալի ունեցած եկամուտը կամ հնարավոր եկամուտը: Դրամական տուգանքի օրական դրույքաչափը տատանվում է 2 գերմանական մարկից մինչև 10.000 գերմանական մարկ: Այսպիսով, Գերմանիայի քրեական օրենսդրությամբ տուգանքի ընդհանուր չափը կազմում է նվազագույնը 10 մարկ, առավելագույնը 3.600.000 մարկ:

Գերմանիայի քրեական օրենսդրության համաձայն դրամական տուգանքը կարող է տարաժամկետվել, սակայն այն չվճարելու դեպքում կարող է փոխարինվել ազատազրկմամբ, այդ դեպքում մեկ օրական դրույքաչափը հավասար է ազատազրկման մեկ օրվան:

Գերմանիայում պատժի ինքնուրույն տեսակ է համարվում գույքային տուգանքը /Vermögensstrafe/, որը նշանակվում է շահադիտական հանցագործությունների

¹ Ст'ю Никифоров Б.С., Решетников Ф.М. Современное американское уголовное право. М.: Наука, 1990, էջ 153:

² Ст'ю Нерсисян А.А. Вопросы наказуемости в уголовном праве ФРГ и США. М.: Наука, 1992, էջ 246:

դեպքում: Պատժի այս տեսակը Գերմանիայի քրեական օրենսդրությամբ նախատեսվել է թմրանյութերի անօրինական առևտրի և կազմակերպված այլ հանցագործությունների դեմ պայքարելու համար: Տվյալ նորմի նախատեսումը նպատակ է հետապնդում բռնագրավել հանցագործությամբ ստացված շահույթը և կանխել հետագայում այդ շահույթի ներդրումը կազմակերպված հանցավոր գործունեության մեջ¹:

Գերմանիայի քրեական օրենսդրության ամենահայտնի մեկնաբաններից մեկի՝ Կառլա Լակներայի կարծիքով, գույքային տուգանքի հիմքում ընկած է երկակի հասկացություն: Մի կողմից գույքային տուգանքը պետք է իրենից ներկայացնի յուրահատուկ լրացուցիչ պատժատեսակ՝ համապատասխանելով ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքին, իսկ մյուս կողմից՝ անկախ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքից, պետք է զրկի հանցանք կատարած անձին հանցավոր կազմավորում ստեղծելու կամ այն պահպանելու միջոցներից²:

Գերմանիայի գործող քրեական օրենսդրությունում, գույքային տուգանքի և դրամական տուգանքի հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ գույքային տուգանքը չի հաշվարկվում օրական դրույքաչափի համակարգով, այլ վճարվում է դատարանի կողմից սահմանված գումարի չափով: Դատարանը գույքային տուգանքի չափը սահմանելիս հաշվի է առնում ոչ թե հանցագործություն կատարած անձի մեղավորության աստիճանը, այլ առաջին հերթին նրա ունեցած գույքի արժեքը:

Գույքային տուգանքը կարող է նշանակվել միայն ցմահ ազատազրկման կամ երկու տարուց ավելի ազատազրկում նշանակելու դեպքում:

Գույքային տուգանքի առավելագույն չափը սահմանվում է հաշվի առնելով հանցագործություն կատարած անձի գույքի արժեքը: Տվյալ դեպքում “գույք” են համարվում հանցագործություն կատարած անձի դրամական գնահատման ենթակա բոլոր տնտեսական եկամուտները³:

Գույքի հայտնաբերումը և նրա պատկանելիությունը հաստատելը համարվում է առավել դժվար ապացուցվող խնդիրներից մեկը, այդ իսկ պատճառով Գերմանիայի

¹Տե՛ս Серебренникова А.В. Имущественный штраф как вид наказания по УК Германии // Вестник Моск. ун-та. Сер. 11. Право. 1996, № 1, էջ 59-64:

²Տե՛ս K.Lackner, Strafgesetzbuch, 21., Auflage, Muenchen, 1995, § 43a.

³Տե՛ս E. Dreher / H.Troendle, Strafgesetzbuch und Nebengesetze, 47. Auflage, Muenchen, 1995, § 43a.

դատարանները գույքային տուգանքը գործնականում չեն կիրառում:

Գույքային տուգանքի նվազագույն չափը ընդհանրապես սահմանված չէ: Դատարանը գույքային տուգանք նշանակելուց կարող է հաշվի չառնել այն գույքը, որը ցածր արժեք ունի: Գերմանիայի քրեական օրենսդրության համաձայն՝ գույքային տուգանք վճարելու անհնարինության դեպքում այն կարող է փոխարինվել ազատազրկմամբ մեկ ամսից մինչև երկու տարի ժամկետով:

Գույքային տուգանքի վերաբերյալ նորմը դիսպոզիտիվ նորմ է: Գույքային տուգանքը պարտադիր լրացուցիչ պատիժ չի համարվում, այն նշանակելու կամ չնշանակելու հարցը յուրաքանչյուր դեպքում դատարանն է որոշում: Եթե նշանակվում է դրամական տուգանք, ապա չի թույլատրվում միաժամանակ գույքային տուգանք նշանակել¹:

Մեր կարծիքով գույքային տուգանքի գաղափարին շատ նման է ՀՀ քրեական նոր օրենսգրքում սահմանված այն դրույթը, համաձայն որի՝ տուգանքի չափը որոշելիս հաշվի է առնվում նաև դատապարտյալի մոտ այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Սա, մեր կարծիքով, շատ կարևոր նորմ է: Հնարավոր են իրավիճակներ, երբ դատապարտյալը գործազրկության, ոչ բավարար աշխատավարձի կամ այլ եկամուտների բացակայության հետևանքով հնարավորություն չունենա տուգանք վճարելու, սակայն ունենա այնպիսի գույք, որի վրա բռնագանձում տարածելով հնարավոր լինի ապահովելու տուգանքի վճարումը: Նման դեպքերում այս մեխանիզմի կիրառումը, կարծում ենք շատ ավելի արդյունավետ կլինի և դատարանը հարկադրված չի լինի անցնելու ավելի խիստ պատիժ նշանակելուն այն պատճառաբանությամբ, որ դատապարտյալը ի վիճակի չէ տուգանք վճարել: Կարծում ենք, որ սա առավել ընդունելի տարաբերակ կարող է լինել նաև դատապարտյալի համար: Կարծում ենք նաև, որ նման մեխանիզմի նախատեսումը կարող է նպաստել տուգանք պատժատեսակի առավել հաճախ կիրառմանը, ինչը շատ կարևոր է: Բանն այն է, որ տուգանք պատժատեսակի կիրառումը առաջին հերթին թույլ

¹Տե՛ս Серебренникова А.В. նշված աշխ., էջ 59-64:

է տալիս հանցանք կատարած անձանց հեռու պահելու բանտային անառողջ մթնոլորտից, ստեղծում է նրանց սոցիալականացնելու և աշխատելու հնարավորություններ, իսկ դրանք դատապարտյալի նկատմամբ դրական ազդեցության ամենագորեղ միջոցներն են: Բացի այդ, պետությունը խուսափում է ավելորդ ծախսերից՝ կապված արդարադատության իրականացման, պատժի կատարման և այլ հանգամանքների հետ: Վերջապես տուգանքի կիրառումը հնարավորություն է տալիս գումարներ մուտքագրել պետական բյուջե, ապահովել հանցագործությամբ պատճառված վնասների փոխհատուցումը: Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում կա նաև գերբնակեցվածության խնդիր, ուստի հաշվի առնելով այս հանգամանքները տուգանքի և ընդհանրապես ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառումը դառնում է առավել անհրաժեշտ և արդյունավետ:

Կցանկանայինք անդրադառնալ նաև տուգանք պատժատեսակի կիրառման հետ կապված մի քանի մասնավոր խնդիրների:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 87 հոդվածի համաձայն՝ տուգանքը կիրառվում է միայն անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է բռնագանձում տարածվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վաճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Այդ դեպքում սահմանվում է տուգանքի վճարման ժամանակացույց, և որոշվում է յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը: Նշված արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցնում է, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը: Դատապարտյալի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու

դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ սույն հոդվածի չորրորդ մասով սահմանված կարգով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 54 հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ ճանաչված, դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չըրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ: Փաստորեն նշված անձանց կողմից տուգանքը վճարելու անհնարինության դեպքում այն չի կարող փոխարինվել ոչ մի այլ ներգործության: Տվյալ դեպքում տուգանքը դառնում է ոչ արդյունավետ պատժատեսակ, ստեղծվում է անպատժելիության զգացում: Այս տեսանկյունից ճիշտ կլիներ, որ նշված անձանց կապակցությամբ հանրային աշխատանքներ նշանակելու՝ օրենքով նախատեսված սահմանափակումը վերացվեր, իհարկե հաշվի առնելով նշված անձանց առանձնահատկությունները:

Որոշակի խնդիրներ կան նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքում: Դրա 24 հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ դատապարտյալը պարտավոր է դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատավճռով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անդորրագիրը ներկայացնելով պատիժը կատարող մարմին կամ հիմնարկ: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգի 7-րդ կետը սահմանում է՝ դատապարտյալի կողմից տուգանքի վճարման անդորրագիրը 7-օրյա ժամկետում բաժանմունք չներկայացնելու դեպքում բաժանմունքի պետը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին: Նույն կարգի 8-րդ կետը սահմանում է՝ տուգանքը տարաժամկետելու կամ հետաձգելու դեպքում յուրաքանչյուր անգամ սահմանված ժամկետում և չափով դատապարտյալի կողմից վճարված տուգանքի անդորրագիրը 7-օրյա ժամկետում

չներկայացվելու կամ դատարանի կողմից սահմանված ժամկետում կամ չափով այն չվճարվելու դեպքում բաժանմունքի պետը կատարում է սույն կարգի 7-րդ կետում նշված գործողությունը: Միջնորդությունը ներկայացնելիս հաշվի է առնվում տուգանքի վճարված մասը: Նախ՝ նշենք, որ վերը նշվածը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 54 հոդվածի 3-րդ մասի պահանջներին, այն է՝ հանրային աշխատանքները նշանակվում է դատապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու դեպքում, տվյալ դեպքում հանրային աշխատանքները նշանակվում է առանց դատապարտյալի կարծիքը հաշվի առնելու: Նշված կարգի 7-րդ և 8-րդ կետերի պահանջները առաջացնում են նաև որոշակի խոչընդոտներ՝ կապված պատժի գործնական կիրառման հետ: Հատկապես գյուղական համայնքներում ապրող անձինք վճարված տուգանքի անդորրագիրը հաճախ 7-օրյա ժամկետում չեն կարողանում ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմին և բաժանմունքի պետը պահպանելով նշված կարգի պահանջները՝ միջնորդություն է ներկայացնում դատարան՝ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ: Փաստորեն տուգանքը վճարվում է սակայն միջնորդություն է ներակայացվում դատարան այն հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ: Դրանով խախտվում են ինչպես դատապարտյալի իրավունքները, այնպես էլ ավելորդ աշխատանք է ստեղծվում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների աշխատակիցների համար: Անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգի 7-րդ և 8-րդ կետերում, այն է՝ սահմանված 7-օրյա ժամկետը երկարացնել և սահմանել 15-օրյա ժամկետ:

Մեր կարծիքով առաջարկված փոփոխությունները կարող են նպաստել տուգանք պատժատեսակի արդյունավետությանը:

§ 3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը

Պատժի այս հին տեսակը, որը ներկայումս դիտվում է իբրև ազատագրկմանն այլընտարանք, անցել է զարգացման մի քանի փուլեր: Հին գերմանական իրավունքում հանցագործին մեկուսացնում էին հասարակությունից, զրկում ունեցվածքից և հավասարեցնում էին վայրի կենդանու կարգավիճակի, և յուրաքանչյուրը կարող էր նրան անպատիժ սպանել¹: Նախահեղափոխական Ռուսաստանի 1903թ. քրեական օրենսգիրքը, իբրև լրացուցիչ պատիժ, նախատեսում էր կացության բոլոր իրավունքներից զրկելը և դատապարտյալին ընդմիշտ աքսորաբնակեցման ուղարկելը: Այդ պատիժը կոչվում էր քաղաքացիական մահ: Դատապարտյալը զրկվում էր իր ամբողջ գույքից, ժառանգության իրավունքից և ընդհանրապես բոլոր իրավունքներից՝ անձնական, ընտանեկան, գույքային, քաղաքական և այլն²:

Ներկայումս այս պատժատեսակը բոլորովին այլ բովանդակություն ունի:

Պատժի այս տեսակը պայմանականորեն բաժանվում է երկու մասի: Պետական հարկադրանքի առաջին միջոցը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելն արգելելն է (քրեական օրենսգրքի 52 հոդված, առաջին մաս): Այլ կազմակերպություններում (այդ թվում սեփականության խառը ձև ունեցող) աշխատող անձանց նկատմամբ այս պատժատեսակը կիրառվել չի կարող: Պետական հարկադրանքի երկրորդ միջոցը՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է (քրեական օրենսգրքի 52 հոդված, առաջին մաս): Վերջինս ընդգրկում է դատապարտյալի ինչպես ծառայողական, այնպես էլ ծառայությունից դուրս գործունեությունը: Ծառայողական է համարվում, օրինակ, մանակավարժական, բժշկական գործունեությամբ զբաղվելը կամ վարձակալության պայմանագրով տրանսպորտային միջոցներ վարելը և այլն: Ոչ

¹Տե՛ս Уголовное право. Общая часть. М., 2004, էջ 329:

² Տե՛ս Թովմասյան Ա. Ա. «Սովետական քրեական իրավունք», հ. II, Եր., 1973, էջ 137:

ծառայողական է համարվում իրավական կարգավորում ունեցող մշտական գործունեությունը, (օրինակ՝ անհատական աշխատանքային գործունեությունը, անձնական տրանսպորտային միջոցների վարելը, որսորդությամբ, ձկնորսությամբ զբաղվելը և այլն):

Այս պատժատեսակը կարող է նշանակվել և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, որպես հիմնական պատիժ, սահմանվում է երկուսից մինչև յոթ տարի ժամկետով՝ դիտավորյալ հանցագործությունների համար, և մեկից մինչև հինգ տարի ժամկետով՝ անզգույշ հանցագործությունների համար (քրեական օրենսգրքի 52 հոդված, երկրորդ մաս): Որպես հիմնական պատիժ այն կարող է նշանակվել, երբ այդ մասին ուղղակիորեն նշված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (քրեական օրենսգրքի 64 հոդված), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս (քրեական օրենսգրքի 77 հոդված): Որպես լրացուցիչ պատիժ՝ այն կարող է նշանակվել մեկից մինչև երեք տարի ժամկետով՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Այս պատժատեսակի կիրառումը բխում է այն հանցագործությունների ռեցիդիվը կանխելու անհրաժեշտությունից, որոնք կապված են հանցավորի ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ: Այն կարող է խիստ արդյունավետ լինել, օրինակ, այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են կաշառք ստանալու, սպառողներին խաբելու, տրանսպորտային և մի շարք այլ հանցագործությունների համար:

Դատական պրակտիկան նույնպես վկայում է, որ այս պատժատեսակն առավել հաճախ կիրառվում է պաշտոնատար անձանց, տրանսպորտի, առևտրի համակարգի աշխատակիցների, բուժաշխատողների նկատմամբ:

Օրենսդիրը որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակի նշանակման հիմք է համարում հանցանք կատարած անձի կողմից պետական ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու անհնարինությունը և

աննպատակահարմարությունը:

Նման անհնարինությունը պետք է բխի ինչպես հանցագործության հատկանիշներից, այնպես էլ դատապարտյալի անձից: Այս պարագայում հանցագործության բնույթը կանխորոշվում է զբաղեցրած պաշտոնով կամ գործունեությամբ, ուստի օրենսդիրը նախատեսում է այս պատժատեսակը դատապարտյալի կողմից նմանատիպ հանցագործությունները կանխելու համար: Եթե հանցագործության բնույթը կապված չէ մասնագիտական գործունեության հետ, ապա դատապարտյալը չի կարող զրկվել այդ իրավունքից :

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելու էությունն այն է, որ մեղադրական դատավճռի ուժով դատապարտյալի և հիմնարկի, ձեռնարկության կամ կազմակերպության (պետական, հասարակական) վարչակազմի միջև աշխատանքային պայմանագիրը լուծարվում է, և դատապարտյալի աշխատանքային գրքույկում կատարվում է համապատասխան գրառում, թե նա ինչ հիմքերով, ինչպիսի ժամկետով և ինչպիսի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից է զրկված: Վերջինիս մասին որոշակիորեն նշվում է նաև դատարանի դատավճռում (օրինակ՝ դրամական կամ այլ նյութական արժեքների տնօրինության, երեխաների դաստիարակության, բժշկական գործունեության հետ կապված պաշտոններ և այլն): Այստեղ պաշտոն ասելով չպետք է հասկանալ միայն պետական իշխանության ներկայացուցչի գործառույթների կամ կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթների կատարումը, ինչպես այն ձևակերպված է քրեական օրենսգրքի հատուկ մասի 308 հոդվածում՝ պաշտոնատար անձի հասկացությունը սահմանելիս: Այն ավելի լայն հասկացություն է և ընդգրկում է պաշտոնների ավելի մեծ շրջանակ, օրինակ՝ գանձապահ, հաշվապահ և այլն¹:

Դատավճռով որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը դատապարտյալին որոշակի մասնագիտությամբ որևէ բնագավառում աշխատելն արգելելն է:

Այս կամ այն իրավունքից զրկելը կիրառվում է, երբ հանցագործության բնույթից

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2006, էջ 403:

ելնելով՝ դատարանն անհնարին է համարում է որոշակի պաշտոն զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: Այս պատժատեսակի պատժիչ էությունն այն է, որ դատապարտյալը զրկվում է պաշտոնի ազատ ընտրության, ժամանակի ընթացքում որոշակի գործունեության իրականացման իրավունքից: Բացի այդ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է հանգեցնել դատապարտյալի նախորդ պաշտոնով կամ գործունեությամբ իրեն վերապահված իրավունքների սահմանափակման կամ կորստյան, անընդմեջ մասնագիտական աշխատանքային ստաժի ընդհատման և, վերջապես, աշխատավարձի կրճատման:

Այն հանգամանքը, որ դատավճիռ կայացնելու պահին դատապարտյալն արդեն չի զբաղեցնում հանցագործության հետ կապված համապատասխան պաշտոնը կամ չի զբաղվում համապատասխան գործունեությամբ, արգելք չէ այս պատիժը նշանակելու համար: Դատարանն իրավասու է նաև կիրառել այս պատժատեսակը, երբ դատապարտյալը զբաղեցրել է այդ պաշտոնը կամ զբաղվել է որոշակի գործունեությամբ ոչ մշտապես, այլ հատուկ լիազորությամբ:

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է նաև այս պատժատեսակի ժամկետները հաշվելու կարգը: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարգապահական գումարտակում պահելու, կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման հետ միասին, որպես լրացուցուիչ պատիժ նշանակելիս, լրացուցիչ պատժի ժամկետը տարածվում է հիմնական պատիժը կրելու ամբողջ ժամանակի վրա, ընդ որում լրացուցիչ պատժի ժամկետը հաշվարկվում է հիմնական պատիժը կրելուց հետո: Մնացած դեպքերում լրացուցիչ պատժի ժամկետը հաշվարկվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից (քրեական օրենսգրքի 52 հոդված, չորրորդ մաս): Ուշագրավ է քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված այն դրույթը, համաձայն որի՝ նշված պատժի ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում դատապարտյալը զբաղեցրել է իր համար արգելված պաշտոնները կամ զբաղվել արգելված գործունեությամբ :

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման կարգը նախատեսված է քրեակատարողական

օրենսդրությամբ: Այս պատժատեսակը, որպես հիմնական պատիժ կատարում է դատապարտյալի բնակության կամ գտնվելու վայրի քրեակատարողական վարչության համապատասխան ստորաբաժանումը: Եթե այս պատժատեսակը նշանակվում է որպես լրացուցիչ պատիժ, ապա այն իրականացնում է հիմնական պատիժը կատարող հիմնարկը, իսկ հիմնական պատիժը կրելուց հետո՝ դատապարտյալի բնակության կամ գտնվելու վայրի քրեակատարողական վարչության համապատասխան ստորաբաժանումը: Քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը, որում դատապարտյալը կրում է հիմնական պատիժը և որի նկատմամբ որպես լրացուցիչ պատիժ նշանակվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, չի կարող նրան ներգրավվել այնպիսի աշխատանքներում, որոնց կատարումը նրան արգելված է: Քանի որ օրենքը չի արգելում տվյալ պատիժը կիրառել զորակոչի, զինվորական կամ քաղաքացիական այլընտրանքային ծառայության անցնելու դեպքերում, քրեակատարողական վարչության համապատասխան ստորաբաժանումները դատարանի դատավճռի կրկնօրինակն ուղարկում են զինվորական կոմիսարիատ կամ դատապարտյալի զինվորական ծառայության վայր՝ կատարման համար:

Ցանկացած պատիժ պետական հարկադրանքի միջոց է, որն արտահայտվում է նրա պատժիչ բնույթով, բովանդակությամբ: Պատիժը հանցագործի վարքի բացասական բարոյաքաղաքական գնահատականն է: Այդ գնահատականը, հանդիսանալով ցանկացած պատժի էական տարր, կարող է ստիպել հանցանք կատարած անձին վերանայելու իր տեսակետները, հրաժարվելու բազմաթիվ վնասակար սովորություններից և հայացքներից, ու դրանով իրականացնել դաստիարակչական ներգործություն դատապարտյալի նկատմամբ: Մնալով ազատության մեջ, շփվելով իր համար սովորական շրջապատի հետ, երբեմն մնալով նույն աշխատանքային կոլեկտիվում (բայց այլ պաշտոնում), դատապարտյալն իրեն արատավորված, խայտառակված է համարում, զգում է շրջապատողների լարված, հաճախ բացասական վերաբերմունքն իր նկատմամբ, ինչը, իհարկե, լուրջ բարոյական ապրումներ է առաջացնում և ազդում նրա վարքագծի վրա: Այն շոշափում է նաև

դատապարտյալի ու նրա ընտանիքի նյութական շահերը: Այս պատժի հիմքն են կազմում ինչպես դատապարտյալին կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներից զրկելը (որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից և դրանց հետ կապված արտոնություններից և լիազորություններից), այնպես էլ նրա իրավունակության ժամանակավոր սահմանափակումը (ազատորեն պաշտոն, մասնագիտական գործունեություն և այլ զբաղմունք ընտրելու հնարավորություն)¹:

Քննարկվող պատժատեսակի կիրառումը երբեմն հանգեցնում է այն անձանց մասնագիտական որակագրկման, ում անհրաժեշտ է մշտական մասնագիտական պատրաստվածություն, աշխատանքային փորձ (օրինակ՝ բժիշկ, վիրաբույժ): Դատարանը պետք է նկատի ունենա այս հանգամանքը, քանի որ այս պատիժը, ինչպես և մյուսները, դրական հետևանքների հետ միաժամանակ առաջացնում է նաև բացասական հետևանքներ: Այդ պատճառով էլ այս պատժատեսակը անհիմն երկար ժամկետով նշանակելը արդարացված չէ: Այս պատժատեսակի պատժիչ յուրահատկությունը անձին այն պաշտոնից կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն է, որը նրանից երկարատև և դժվարին հատուկ նախապատրաստություն է պահանջել, համապատասխանում է նրա կոչմանը և հետաքրքրություններին, նպաստում է նյութական ապահովվածությանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատապարտյալների մեծ մասը 5-ից 10 կամ 10 և ավելի տարվա աշխատանքային փորձ ունի, և հատկապես այդ անձինք են պատիժը դժվարությամբ կրում²:

Բացի այդ, մարդկանց մեծ մասի համար միևնույն չէ, թե ինչ պաշտոն է զբաղեցնում կամ ինչ աշխատանքային գործառույթներ է իրականացնում: Քննարկվող պատիժը նշանակելիս անձը դուրս է մնում աշխատանքային կոլեկտիվից, երբեմն կորցնում է կայացված սոցիալական կապերը, ձեռք բերված հեղինակությունը և համբավը: Իսկ շրջապատում նորից հաստատվելը և նոր կոլեկտիվում հարգանք ձեռք բերելը պահանջում է որոշակի ժամանակ և ֆիզիկական ու հոգեկան ուժերի ներդրում:

¹Տե՛ս Тютюгин В. И., Лишение права занимать определенные должности как вид наказания по советскому уголовному праву. Харьков, 1982, էջ 5-6:

²Տե՛ս Цветинович А. Л., Дополнительные наказания. Куйбышев, 1989, էջ 85:

Նոր պաշտոնը կամ մասնագիտական գործունեությունը, որպես կանոն, նվազ որակյալ, նվազ պատասխանատու և հաճախ ավելի ծանր են լինում, իսկ աշխատավարձը՝ ցածր: Շատ դեպքերում նոր պաշտոնը վերապատրաստում է պահանջում: Վ. Մախոտկինի տվյալներով այդ անձանց 30 տոկոսը ստիպված է եղել վերապատրաստման դասընթացների հաճախել¹: Ուստի համաձայն չենք այն քրեագետների հետ, ովքեր կարծում են, որ այս պատժատեսակը էական պատժիչ նշանակություն չունի²: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, ամբաստանյալների մեծ մասը իրենց վերջին խոսքում, որպես կանոն, խնդրում են դատարանին իրենց նկատմամբ չկիրառել տվյալ պատժատեսակը, մատնանշելով այն հանգամանքը, որ այն բացասաբար է անդրադառնալու իրենց աշխատանքային գործունեության և նյութական վիճակի վրա: Ուստի կարծում ենք, որ քննարկվող պատժատեսակը բավականին մեծ պատժիչ ազդեցություն ունի և հիմնավոր կիրառման դեպքում կարող է էական կանխիչ նշանակություն ունենալ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է զգուշորեն կիրառել այն: Մասնավորապես, դատարանները, մեր կարծիքով, այս պատժատեսակը նշանակելիս, պետք է պարզեն, թե արդյոք դրա կիրառումը չի հանգեցնի ծայրահեղ վիճակի, երբ անձը և նրա ընտանիքը կարող են լիովին զրկվել ապրուստի միջոցներից: Եթե պատժի կիրառումը հանգեցնելու է դրան, ապա վտանգ կա, որ դատապարտյալը կարող է ավելի ծանր հանցագործության գնալ: Սրա հետ կապված անհրաժեշտ է նաև պարզել այլ գործունեությամբ զբաղվելու դատապարտյալի հնարավորությունները: Իհարկե, բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձի մնալը զբաղեցրած պաշտոնում կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը արդարացված չեն ոչ իրավական, ոչ էլ բարոյական տեսանկյուններից, եթե գործունեությունը շարունակելը կարող է նպաստել նոր հանցանքների կատարմանը, ապա տվյալ պատժատեսակը կիրառելը պարտադիր է: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է քրեական օրենսդրության կատարելագործման ճանապարհով բարձրացնել քննարկվող պատժատեսակի արդյունավետությունը: Բանն այն է, որ գործող քրեական օրենսգրքի որոշ կարգավորումներ, մեր կարծիքով,

¹Տե՛ս Гальперин И. М., Мельникова Ю. Б., Дополнительные наказания. М., 1981, էջ 67:

² Տե՛ս Кондрашков Н. Меры наказания в законе и на практике // Социалистическая законность. 1968, N 2, էջ 23:

խոչընդոտում են դրան:

Ինչպես նշվեց ՀՀ քրեական օրենսգրքի 52 հոդվածի առաջին մասը սահմանում է պետական հարկադրանքի առաջին միջոցը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելն արգելելը: Հոդվածի բովանդակությունից պարզ երևում է, որ այլ կազմակերպություններում (այդ թվում սեփականության խառը ձև ունեցող) աշխատող անձանց նկատմամբ այս պատժատեսակը կիրառվել չի կարող: Սա իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ է առաջացնում և, մեր կարծիքով, չի նպաստում քրեական օրենքի արդյունավետությանը: Բանն այն է, որ գործնականում եղել են դեպքեր, երբ դատապարտյալին պետական կազմակերպությունում արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել, սակայն նա որոշ ժամանակ անց, նախքան պատժի ժամկետի ավարտը, որևէ մասնավոր կազմակերպությունում զբաղեցրել է համարժեք պաշտոն: Փաստորեն նշանակված պատիժը ձևական բնույթ է կրել իսկ դատապարտյալն էլ ըստ էության խուսափել է պատիժը կրելուց: Սրա հետ կապված, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 52 հոդվածի 1-ին մասում կատարել փոփոխություն, այն է՝ նշված հոդվածի պահանջը տարածել նաև առևտրային և այլ տեսակի բոլոր կազմակերպությունների աշխատակիցների վրա: Վերջին հաշվով, ինչպես արդեն նշել ենք, այս պատժատեսակի նպատակներից մեկը այն հանցագործությունների կանխումն է, որոնք կապված են անձի ծառայողական գործունեության, նրա զբաղեցրած պաշտոնի կամ այլ գործունեության բնույթի հետ և այս առումով, մեր կարծիքով, որևէ տարբերություն չկա պետական և մասնավոր կազմակերպությունների միջև:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, որպես հիմնական պատիժ նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 11 հոդվածներով, 12 հոդվածներով նախատեսված է և՛ որպես հիմնական և՛ որպես լրացուցիչ պատիժ, իսկ 76 հոդվածներով նախատեսված է որպես լրացուցիչ պատիժ: Ինչպես արդեն նշել ենք, այս պատժատեսակը բավականին մեծ պատժիչ ազդեցություն ունի, ուստի դրա հիմնավոր կիրառումը կարող է էական կանխիչ նշանակություն ունենալ: Մինչդեռ

վիճակագրությունը վկայում է, որ քննարկվող պատժատեսակը այդքան էլ մեծ «հեղինակություն» չի վայելում և հազվադեպ է կիրառվում:

Վիճագրությունը վկայում է, որ 2005թ. ընթացքում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու են դատապարտվել 58 անձ, 2006թ.¹ 185 անձ, 2007թ.¹ 130 անձ, 2008թ.¹ 124 անձ, 2009թ.¹ 140 անձ, 2010թ.¹ 82 անձ, 2011թ.¹ 152 անձ, 2012թ.¹ 133 անձ, 2013թ.¹ 218 անձ, 2014թ.¹ 105 անձ: Ուսումնասիրությունները վկայում են, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելու պատժատեսակը գրեթե չի կիրառվում, իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը հիմնականում կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքերում, որպես լրացուցիչ պատժատեսակ: Քիչ դեպքերում այն կիրառվում է պաշտոնեական և տնտեսական հանցագործությունների կապակցությամբ: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակի սահմանափակ կիրառման պատճառը դատարանների կողմից տվյալ պատժատեսակի արդյունավետության թերագնահատումն է¹: Բացի այդ, այս պատժատեսակի գործնական կիրառման ժամանակ առաջանում են մի շարք խնդիրներ: Դրանցից մեկի մասին արդեն նշել ենք: Մեկ այլ օրինակ է, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար դատապարտյալը որոշակի ժամկետով զրկվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, սակայն իրականում շարունակում է վարել այն: Ուստի, քննարկվող պատժատեսակի արդյունավետության ապահովման ուղիներից մեկն էլ համապատասխան հսկողական մեխանիզմներ սահմանելն է: Մասնավորապես, գործող օրենսդրությունը ըստ էության չի կարգավորում այն հարցը, թե ինչ պատասխանատվության է ենթակա այն դատապարտյալը, որը խուսափում է տվյալ պատժից: Դատական ակտը չկատարելու համար՝ գործող քր. օր.-ի 353 հոդվածի երրորդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունը, մեր կարծիքով, տվյալ դեպքում ոչ լիարժեք է կարգավորում հարցը: Նախ՝ նշված հոդվածի

¹ Стѹ О работе судов Российской Федерации за 1-ое полугодие 1994 г. // Российская юстиция. 1995, № 1, էջ 43:

երրորդ մասով պատասխանատվություն է նախատեսված քաղաքացու կողմից դատական ակտը չկատարելու համար, որի պայմաններից է նույն արարքի համար վարչական տույժ նշանակած լինելը, ինչը, մեր կարծիքով, արդյունավետ չի կարող լինել: Բացի այդ, դատական ակտը չկատարելու համար պատիժը (տուգանք՝ երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ կալանք՝ մեկից երեք ամիս ժամկետով), մեր կարծիքով, ավելի մեղմ է, քան քննարկվող պատժատեսակը: Ուստի առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի 52 հոդվածում ավելացնել նորմ, որով կսահմանվի այս պատժատեսակից խուսափելու դեպքում այն ազատագրկմամբ փոխարինելու կարգ:

Ինչպես արդեն նշել ենք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Սա նույնպես գործնականում խնդիրներ է առաջացնում: Լինում են դեպքեր, երբ հանցանք կատարած անձին, կապված հանցագործության բնույթի հետ, անհրաժեշտ է զրկել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, սակայն համապատասխան հոդվածի սանկցիայում այս պատժատեսակի բացակայության հետևանքով դա հնարավոր չի լինում: Օրինակ՝ մինչև ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, մանկավարժի կողմից անչափահասի դեմ կատարվող սեռական հանցագործությունների պարագայում դա հնարավոր չէր: Կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ, եթե դատարանին հնարավորություն տրվեր որպես լրացուցիչ պատիժ նշանակելու այս պատժատեսակը նաև այն դեպքերում, երբ դա նախատեսված չէ հոդվածի սանկցիայում: Ուստի, կարծում ենք, որ անհրաժեշտ է վերացնել քրեական օրենսգրքի 50 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված նորմը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ և հնարավորություն տալ այս պատժատեսակը կիրառել նաև այն դեպքերում, երբ դա նախատեսված չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով:

Քննարկվող պատժատեսակի օրենսդրական կատարելագործման ուղիներից մեկն էլ, մեր կարծիքով, տվյալ պատժատեսակը երկու առանձին տեսակի բաժանելն է.

«Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը» և «Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը»:

Նախ՝ այս պատժատեսակին ենթարկվող սուբյեկտները տարբերվում են, եթե որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու դեպքում դատապարտյալը կարող է լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած ցանկացած մեղսունակ անձ, ապա որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելու դեպքում՝ միայն պաշտոնատար անձը:

Երկրորդ՝ ըստ էության հանցագործության համար նշանակվում է «որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը» պատժատեսակը, սակայն գործնականում նշանակվում և կիրառվում է դրանցից միայն մեկը:

Վերջապես՝ չի բացառվում, որ միևնույն անձի նկատմամբ նշանակվի և որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը և որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Օրինակ՝ հիվանդանոցի գլխավոր բժիշկը չարաշահում է իր պաշտոնական դիրքը, բացի այդ՝ հարբած վիճակում անորակ վիրահատության հետևանքով վնաս է պատճառում հիվանդին: Նման դեպքում տեղին կլիներ նման անձին զրկել թե՛ ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունքից, թե՛ բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունքից: Բայց դա հստակ կիրառելու համար ճիշտ կլիներ այս պատժատեսակները սահմանազատել:

Կարծում ենք, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել քննարկվող պատժատեսակի արդյունավետությանը:

§ 4. Հանրային աշխատանքները որպես այլընտրանքային պատժատեսակ

Հանրային աշխատանքները նախկին քրեական օրենսդրությանն անհայտ հիմնական պատժատեսակ է: Այս պատժատեսակը լայն տարածում ունի եվրոպական երկրներում¹:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի առանձնահատկությունն այն է, որ դատարանը դատապարտյալին պատիժն ընտրելու հնարավորություն է տալիս: Այս պատժատեսակի առավելություններից մեկն այն է, որ դատապարտյալը մնում է ընտանիքում, պահպանում է իր աշխատանքը, սոցիալական միջավայրը, խուսափում է բանտի բացասական ազդեցությունից, բայց միևնույն ժամանակ գիտակցում է, որ պատիժ է կրում:

Հանրային աշխատանքների կիրառման հետ կապված Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող հիմնական դժվարությունները հանգում են հետևյալին՝

- ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումներում չկան համապատասխան թվով աշխատակիցներ, որոնք կարող են պատշաճ հսկողություն իրականացնել դատապարտյալների աշխատանքի նկատմամբ,
- շատ քիչ գործատուներ են շահագրգռված օգտագործելու դատապարտյալների աշխատանքը: Այն հաճախ կապված է այդ պատժատեսակի իրականացման պայմանների և կարգի մասին տեղեկատվության պակասի հետ: Դեռ ամուր կապեր չեն հաստատված ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների ստորաբաժանման և գործատուների միջև,
- դատապարտյալի աշխատանքներն իրականացնող կառուցվածքային մարմիններում կամ կազմակերպություններում չկան կոնկրետ անձինք, որոնց իրավասության մեջ մտնելու դատապարտյալների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունը:

¹ St'u Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном английском праве // Правоведение. 1998, № 3, էջ 118-126:

Հանրային աշխատանքները առաջին անգամ 1975թ. նախատեսվել է Անգլիայում և Ուելսում, որպես ազատազրկման այլընտրանքային պատժատեսակ: Նախկին Խորհրդային Միության երկրներից ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների, մասնավորապես, հանրային աշխատանքների կիրառման ու կատարման ուղղությամբ առավել հաջող արդյունքների է հասել Լատվիան: Երեք տարվա ընթացքում այստեղ հանրային աշխատանքների ձևով նշանակված պատժի բաժինը 1.4 տոկոսից աճել է մինչև 8 տոկոս, և նկատվում է այդ թվի աճի միտում: Հանրային աշխատանքների վերաբերյալ դատավճիռները կազմում են մոտ 10 տոկոս¹: Ֆինլանդիայում հանրային աշխատանքները փորձարարական հիմունքներով սկսել են կիրառել 1991թ., իսկ 1994թ. ապրիլի 1-ից այդ համակարգն ընդգրկեց ողջ երկիրը:

Բելգիայում ևս որոշ ժամանակ կիրառվել են փորձարարական հիմունքներով, իսկ 1993թ. արդարադատության նախարարն այդպիսի սանկցիա ընդունելու մասին երկու օրինագիծ ներկայացրեց պառլամենտ:

Շվեյցարիայում հանրային աշխատանքները, որպես հիմնական սանկցիա, կիրառվում են միայն անչափահաս իրավախախտների նկատմամբ: Սակայն սկսած 1990թ. շվեյցարական օրենսդրությունը թույլ է տալիս որոշակի պայմաններում մեկ ամսից ոչ ավելի ժամկետով ազատազրկումը փոխարինել հանրային աշխատանքներով: Դա դիտվում է, որպես յուրահատուկ իրավաբանական փորձարկում, որը հնարավորություն է տալիս գնահատելու հանրային աշխատանքները, որպես հիմնական սանկցիա կիրառելու վերաբերյալ առաջարկության ընդունելիությունը²:

ԱՊՀ երկրների քրեական օրենսգրքերը ևս նախատեսում են հանրային աշխատանքները (օրինակ՝ Ուկրաինայի քրեական օրենսգրքի 56 հոդվածը, Բելառուսի քրեական օրենսգրքի 45 հոդվածը: Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 49 հոդվածը, որպես հիմնական պատժատեսակ նախատեսում է պարտադիր աշխատանքները): Այդ անվանումն ավելի ճիշտ է, քանի որ «հանրային» բառը ներքին

¹ См. У Кодекс действии становлению механизма реализации альтернативных мер наказания в Российской Федерации. Материалы международного семинара, Самара, 24-27 марта 2002г., М., 2002, էջ 3:

² См. У Альтернативные меры уголовного наказания. Международная конференция. Алматы, Казахстан, 27-30 октября 1999, էջ 12:

էութեամբ նշանակում է կամավորութեամբ կատարվող: Գուցե օրենսդիրը նկատի է ունեցել այն, որ առկա է դատապարտյալի համաձայնությունը: Բայց չէ, որ այդ համաձայնությունը տրվում է որպէս այլընտրանք ազատագրկմանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 50 հոդվածի համաձայն՝ հանրային աշխատանքները կիրառվում են որպէս հիմնական պատիժ: Հանրային աշխատանքները դասվում է դատապարտյալին նյութական զրկանքներ պատճառող պատժատեսակների շարքը, բայց միաժամանակ այս կամ այն կերպ սահմանափակվում է նաև դատապարտյալի ազատությունը: Հանրային աշխատանքների քրեաիրավական էությունը՝ դատապարտյալի կողմից հիմնական աշխատանքից կամ դասերից ազատ ժամերին հանրության համար օգտակար, իրավասու կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից որոշված չվարձատրվող աշխատանքների կատարումն է (քրեական օրենսգրքի 54 հոդված, առաջին մաս): Ուշագրավ է այն փաստը, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում հանրային աշխատանքներ պատժատեսակը նախատեսված չէ: Այն կիրառվում է երկու դեպքում՝

1. իբրև ազատագրկմանը փոխարինող պատժատեսակ, եթե անձը կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք և դատապարտվել է երկու տարուց ոչ ավելի ժամկետով ազատագրկման,

2. տուգանքի վճարումից չարամտորեն խուսափելու դեպքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 54 հոդվածի երրորդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքներ նշանակվում են, որպէս ազատագրկման այլընտրանքային պատժատեսակ՝ մինչև դատավճիռ կայացնելը՝ դատապարտվող անձի գրավոր համաձայնության դեպքում: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով և կարող է դատարանի կողմից սահմանվել երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված չէ անչափահասների նկատմամբ կիրառվող հանրային աշխատանքներ պատժատեսակի ժամկետը, որը բացթողում է և պետք է լրացվի: Մեր կարծիքով փոփոխության կարիք ունեն նաև հանրային աշխատանքների ժամկետները: Աշխարհի ոչ մի երկրում այսպիսի երկար ժամկետներ նախատեսված չեն: Ընդ որում, անչափահասների համար պետք է նախատեսվեն ավելի կարճ ժամկետներ, քան

նախատեսված է չափահասների համար: Այսպես օրինակ՝ ՌԴ-ում պարտադիր աշխատանքները նախատեսված են 60-ից 240 ժամ տևողությամբ, իսկ անչափահասների համար՝ 40-ից 160 ժամ տևողությամբ: Մեծ Բրիտանիայում մեկ տարվա ընթացքում կարող է նշանակվել 40-ից մինչև 240 ժամ (անչափահասների համար մինչև 120 ժամ) հանրային աշխատանքներ: Հանրային աշխատատեքները Շվեդիայում սկսեց կիրառվել 01.01.1993թ-ից: Դատապարտյալը, որի նկատմամբ նշանակվել է հանրային աշխատանքներ պատժատեսակը՝ պարտավոր է հանրության համար կատարել անվճար աշխատանքներ 40-ից մինչև 240 ժամ տևողությամբ: Այս պատժատեսակը կիրառվում է հիմնականում 18-ից մինչև 24 տարեկան դատապարտյալների նկատմամբ:

Պորտուգալիայում հանրային աշխատանքները, որպես ազատազրկման այլընտրանքային պատժատեսակ կիրառվում է անզգուշությամբ կատարվող կամ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում: Հանրային աշխատանքների տևողությունը կարող է հասնել մինչև 180 ժամի: Եթե դատապարտյալը ունի մշտական աշխատանք, ապա այդ դեպքում նա աշխատանքային 8 ժամից բացի 2 ժամ աշխատում է անվճար:

Բացի այդ, օրենսդիրը սահմանում է հանրային աշխատանքների առավելագույն ժամկետը՝ մեկ օրվա համար: Օրինակ՝ ՌԴ-ում այդ աշխատանքները մինչև 15 տարեկան անչափահասների համար չի կարող կիրառվել 2 ժամից ավելի, իսկ 15-ից մինչև 16 տարեկան անչափահասների համար 3 ժամից ավելի: 16 տարեկանից սկսած այն կարող է կիրառվել 4 ժամից ոչ ավելի:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված երկար ժամկետները նույնպես խոչընդոտում են այս պատժատեսակի առավել հաճախ կիրառմանը: Ուստի հանրային աշխատանքների ժամկետները պետք է զգալիորեն կրճատվեն: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում նախատեսվում են հետևյալ ժամկետները՝ 60-ից 270 ժամ չափահասների համար իսկ անչափահասների համար համապատասխանաբար կիսով չափ կրճատվում են, այսինքն՝ 30-ից 140 ժամ: Հարկ է նշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով սահմանվում է, որ հանրային աշխատանքները նշանակվում են օրական վեց ժամ տևողությամբ: Կարծում ենք, որ

այս ժամկետը պետք է կրճատել, հաշվի առնելով, որ աշխատանքները կատարվում են աշխատանքից կամ դասերից ազատ ժամանակ: Կարելի էր նախատեսել օրական չորս ժամ տևողությամբ: Ինչ վերաբերվում է անչափահասներին, ապա կարծում ենք, որ նախագծով առաջարկվող ժամկետները հիմնավոր են:

Հանրային աշխատանքների, որպես հիմնական պատժատեսակի ներգործության ուժն աշխատանքների բովանդակության մեջ է, որոնցում ներգրավվում են դատապարտյալները: Այդ աշխատանքները, թեև հանրորեն անհրաժեշտ են, բայց, որպես կանոն, ունեն ցածր վարկանիշ, քաղաքների և ավանների բարեկարգման, փողոցների և հրապարակների մաքրման, բեռնման կամ բեռնաթափման և այլ հատուկ որակավորում չպահանջող աշխատանքներ: Ենթադրվում է, որ հանրային աշխատանքները հոգեբանական, դաստիարակչական մեծ ազդեցություն պետք է ունենան դատապարտյալի վրա: Կարծում ենք, որ այդ հոգեբանական և դաստիարակչական ազդեցությունն ապահովելու և ավելի արդյունավետ դարձնելու համար հանրային աշխատանքների իրագործման ոլորտը պետք է ընդլայվի: Աշխատանքների տեսակն ընտրելիս ավելի նպատակահարմար կլինի դատապարտյալին հանձնարարել այնպիսին, որը կապված կլինի նրա կողմից գործած հանրորեն վտանգավոր արարքի հետ: Օրինակ՝ վրաերթ կատարելու համար դատապարտված անձին կարելի է ուղարկել վնասվածքային բուժկետ, ուր դիմում են վթարներից տուժածները, կամ վանդալիզմ իրականացրած անձին կարելի է ուղարկել փողոցի պատերը մաքրելու: Հատկապես անչափահասների համար այս պատժատեսակը պետք է հատուկ դաստիարակչական նշանակություն ունենա: Այս տեսակետից հետաքրքրական է կենսաթոշակառու մի տատիկից գողություն կատարած անչափահասի նկատմամբ հանրային աշխատանքների վերաբերյալ գերմանական մի դատարանի դատավճիռը: Դատարանը դատավճռով պարտադրեց անչափահասին մեկ ամիս աշխատել տատիկի բանջարանոցում և օգնել տատիկին կենցաղային այլ հարցերում: Կարծում ենք, որ հանրային աշխատանքների տեսակի ընտրության հարցում դատարաններին պետք է հնարավորություն տալ ճկունություն և ստեղծագործական մոտեցում դրսևորել:

ՀՀ գործող քրեական օրենսգրքը, հիմնվելով այն տրամաբանության վրա, որ

հանրային աշխատանքները ենթադրում են դատապարտյալի աշխատանքային գործունեություն, սահմանում է, որ դրանք չեն կարող նշանակվել առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռը կայացնելու պահին կենսաթոշակային տարիք ունեցող անձանց նկատմամբ: Ելնելով այս պատժատեսակի առանձնահատկությունից, ինչպես նաև մարդասիրության սկզբունքից, մայրության ու մանկության պահպանության նկատառումներով, այն չի կարող նշանակվել առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց և հղի կանանց նկատմամբ: Կարծում ենք, որ այս սահմանափակումները տեղին չեն: Ստացվում է, որ նշված անձանց նկատմամբ կարելի է ավելի խիստ պատիժ նշանակել, բայց հանրային աշխատանքներ ոչ:

Մինչդեռ, մեր կարծիքով, նշված կատեգորիայի անձանց նկատմամբ, նրանց համաձայնությամբ, կարելի էր նշանակել այս պատժատեսակը: Ընդ որում, պատժատեսակն ընտրելիս բնականաբար հաշվի առնելով նրանց հնարավորությունները, մասնագիտությունը:

Ինչ վերաբերվում է ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողներին, ապա նրանց նկատմամբ այս պատժատեսակի կիրառումն անհնար է և ոչ նպատակահարմար (քրեական օրենսգրքի 54 հոդված, չորրորդ մաս):

Հանրային աշխատանքների կատարման և կրման կարգը նախատեսված է քրեակատարողական օրենսդրությամբ: Հանրային աշխատանքների կատարումը դատական ակտի հիման վրա ապահովում է ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանում՝ իր կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշած վայրերում: Հանրային աշխատանքների դատապարտված անձը պարտավոր է ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանում ներկայանալ դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Հանրային աշխատանքների դատապարտված անձը հանրային աշխատանքների ներգրավվում է ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանում ներկայանալու պահից տասնհինգ օրվա ընթացքում:

Դատապարտյալի հաշվառումը, պատիժը կրելու կարգն ու պայմանները պահպանելու նկատմամբ հսկողությունն իրականացնում է, ինչպես նաև պատիժը կրելու կարգը և պայմանները նրան բացատրում է ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումը: Դատապարտյալը պարտավոր է դատավճռով սահմանված ողջ ժամանակահատվածի ընթացքում պահպանել այն մարմինների կամ կազմակերպությունների ներքին աշխատանքային կանոնները, որտեղ նա կատարում է հանրային աշխատանքները, բարեխիղճ վերաբերմունք դրսևորել աշխատանքին, աշխատել իր համար որոշված վայրերում, ինչպես նաև բնակության վայրը փոխելու դեպքում այդ մասին տեղյակ պահել ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանմանը: Հանրային աշխատանքների ձևով պատժի կատարումն ապահովելու նպատակով բաժանմունքը հանրային աշխատանքների ձևով պատժի կատարման վայրերը որոշելու նպատակով համագործակցում է ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որոնց հետ կարող են կնքվել համապատասխան պայմանագրեր: Ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշված հանրային աշխատանքների ձևով պատժի կատարման վայրերի վերաբերյալ տեղեկատվությունը հայտնվում է բաժանմունքին: Բաժանմունքը ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշված հանրային աշխատանքների ձևով պատժի կատարման վայրերի հայտի հիման վրա դատապարտյալին ծանուցմամբ ուղեգրում է հանրային աշխատանքների կատարման համապատասխան վայր: Բաժանմունքը ստանալով առաջարկված հանրային աշխատանքների կատարման վայրերի մասին համապատասխան տեղեկատվությունը, այն համադրում է իր որոշած վայրերի հետ և կազմում հանրային աշխատանքների կատարման վայրերի ընդհանուր ցանկ, որը կարող է պարբերաբար վերանայվել: Ցանկում ընդգրկված կազմակերպություններից յուրաքանչյուրի հետ բաժանմունքը գրավոր համաձայնեցնում է հանրային աշխատանքների կատարման ժամանակացույց՝ հաշվի առնելով ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի պահանջները: Ժամանակացույցի

մեկական օրինակ կազմվում է բաժանմունքի աշխատավայրի աշխատակազմի և դատապարտյալի համար: Դատապարտյալն ներգրավվում է հանրային աշխատանքներում և նշանակված պատիժը կատարվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Հանրային աշխատանքների կատարման ընթացքում պատժի կատարումը կարող է մինչև մեկ տարի ժամկետով ընդհատվել ոչ ավելի, քան մեկ անգամ:

Ուսումնասիրությունները վկայում են, որ աշխատատեղեր չլինելու պատճառով հանրային աշխատանքների կիրառման համար պայմանագրերը կնքվում են հիմնականում գյուղապետարանների և թաղապետարանների հետ, իսկ դա այդքան էլ արդյունավետ չէ: Կարծում ենք, որ հանրային աշխատանքների կատարման ոլորտի ընդլայնումը և այն մոտեցումը, որ մենք առաջարկում ենք, կարող է նպաստել վիճակի շտկմանը:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգի 29-րդ կետը սահմանում է՝ դատապարտյալը պարտավոր է բաժանմունք ներկայանալ դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 7 օրվա ընթացքում: Բաժանմունք չներկայանալու դեպքում դատապարտյալին ուղարկվում է ծանուցագիր բաժանմունք ներկայանալու մասին: Դատապարտյալի բաժանմունք ներկայանալու դեպքում բաժանմունքի ծառայողը լրացնում է հաշվառման քարտ, դատապարտյալին պարզաբանում է հանրային աշխատանքների ձևով նշանակված պատիժը կրելու կարգն ու պայմանները, դատապարտյալի իրավունքները և պարտականությունները, պատիժը կրելու կարգն պայմանները խախտելու համար սահմանված պատասխանատվությունը, ինչի մասին դատապարտյալից վերցվում է ստորագրություն:

Բաժանմունքի ծառայողը ծանուցագրով դատապարտյալին պարտավորեցնում է ժամանակացույցն ստանալուց հետո ներկայանալ աշխատավայրի վարչակազմ: Յուրաքանչյուր հաջորդ ծանուցագիրը կարող է ուղարկվել ոչ շուտ քան նախորդ ծանուցագրից 7 օր հետո: Նույն կարգի 33-րդ կետը սահմանում է՝ հաշվառման ներակայանալուց հետո դատապարտյալին կարող է հնարավորություն տրվել

ընտրություն կատարել հանրային աշխատանքների կատարման վայրերի միջև: Հանրային աշխատանքների կատարման վայրը բաժանմունքի կողմից որոշելու դեպքում նկատի են առնվում դատապարտյալի բնակության վայրին մոտ տեղեկայված լինելու հանգամանքը և դատապարտյալի մասնագիտությունը: Հանրային աշխատանքների կատարման վայրը որոշելուց հետո դատապարտյալին ստորագրությամբ հանձնվում է համապատասխան կազմակերպության հետ համաձայնեցված ժամանակացույցով սահմանված աշխատաժամերը, որոնք պարտադիր են դատապարտյալի համար: Նշված կարգի 29-րդ և 33-րդ կետերում սահմանված գործողությունները կատարելուց հետո բաժանմունքի ծառայողը 3-օրյա ժամկետում տվյալ կազմակերպության վարչակազմ է ուղարկում ծանուցում պատիժը կատարելու մասին՝ կցելով ժամանակացույցը: Բաժանմունքի ծառայողը պարբերաբար այցելում է դատապարտյալի աշխատավայր դատապարտյալի կողմից պատիժը կրելու մասին տեղեկատվություն այդ թվում՝ ժամանակացույցի մեջ ներառված տեղեկատվություն կամ պարզաբանումներ ստանալու համար: Այդ մասին կազմվում է արձանագրություն: Բաժանմունքի ծառայողը հաշվի առնելով այցելության ընթացքում հայտնաբերված տվյալները կարող է դատապարտյալից կամ աշխատավայրի վարչակազմից պահանջել հետ վերադարձնելու ժամանակացույցի իրենց օրինակը: Այդ ժամանակահատվածում վարչակազմի կողմից երկու օրինակից կազմվում է արձանագրություն դատապարտյալի աշխատանքի մասին, որոնցից մեկը տրվում է դատապարտյալին: Դատապարտյալի աշխատած ժամերը ներառվում են ժամանակացույցի մեջ: Եթե պատժի ժամկետի ավարտից հետո դատապարտյալը և աշխատավայրի վարչակազմը չեն ուղարկում ժամանակացույցի իրենց օրինակները, ապա բաժանմունքն իրավունք ունի պահանջելու դրանք:

Աշխատանքի հիմնական վայրում դատապարտյալին հերթական ամենամյա արձակուրդ տրամադրելը չի կասեցնում հանրային աշխատանքների ձևով պատժի կատարումը: Դատապարտյալի կենսաթոշակային տարիքը լրանալու կամ նրան առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչելու, պատիժը կրելուն խոչընդոտող այլ ծանր հիվանդությամբ հիվանդանալու, ինչպես նաև հղիության դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման

ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու նպատակով: Հանրային աշխատանքները կատարելիս ստացած վնասվածքների դիմաց փոխհատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Դատապարտյալի համար որոշված աշխատանքների կատարումը վերահսկելու նպատակով ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումը վարում է հանրային աշխատանքների հաշվառման քարտ, որը լրացնում, ստորագրում և կնքում է տվյալ աշխատանքները կազմակերպող մարմնի կամ կազմակերպության վարչակազմը: Դատապարտյալը պարտավոր է ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանմանը տեղեկացնել հանրային աշխատանքները կատարելու մասին: Հանրային աշխատանքները կատարելու, դրանք ոչ պատշաճ կատարելու կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու մասին ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանմանը կարող է տեղեկացնել նաև տվյալ աշխատանքները կազմակերպող մարմնի կամ կազմակերպության վարչակազմը: Պատիժը կրելու կարգն ու պայմանները խախտելու դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանման ծառայողը 10 օրվա ընթացքում դատապարտյալին ծանուցագրով հրավիրում է բաժանմունք, պարզում է կատարված խախտման պատճառը անհրաժեշտության դեպքում պահանջելով համապատասխան փաստաթղթեր, որի կապակցությամբ բաժանմունքի ծառայողը կազմում է համապատասխան արձանագրություն:

Կարգի 40-րդ կետը սահմանում է՝ պատիժը կրելու կարգի ու պայմանների խախտումներ են համարվում՝

ա/ բաժանմունքի ծանուցագիրն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում աշխատավայր չներկայանալը.

բ/ ծանուցվելու դեպքում առանց հարգելի պատճառների սահմանված ժամկետում բաժանմունք չներկայանալը:

ՀՀ քրեական օրենսգրքի 54 հոդվածի հինգերորդ մասի համաձայն՝ հանրային

աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ: Հանրային աշխատանքները կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ փոխարինվելու դեպքում հանրային աշխատանքների երեք ժամը՝ համապատասխանում է կալանքի կամ ազատազրկման մեկ օրվան (ՀՀ քրեական օրենսգրքի 68 հոդված, առաջին մաս), մինչև 10.10.2007թ. քրեական օրենսգրքում փոփոխություններն լրացումներ կատարելը, հանրային աշխատանքների չորս ժամը համապատասխանում էր կալանքի կամ ազատազրկման մեկ օրվան:

Հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափող է համարվում այն դատապարտյալը ով՝

–մեկ ամսվա ընթացքում կատարել է հիսուն ժամից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի .

–մեկ ամսվա ընթացքում երկուսից ավելի անգամ խախտել է աշխատանքային կարգապահության կանոնները:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ մասը նույնպես սահմանում է, որ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափող դատապարտյալի վերաբերյալ ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումը միջնորդություն է ներկայցնում դատարան՝ հանրային աշխատանքների չկրած մասը կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ փոխարինելու մասին՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված ժամկետների սահմաններում, իսկ 3-րդ մասը սահմանում է՝ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափող է համարվում այն դատապարտյալը, ով՝

1/ մեկ ամսվա ընթացքում կատարել է հիսուն ժամից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի.

2/ մեկ ամսվա ընթացքում երկուսից ավելի անգամ խախտել է աշխատանքային կարգապահության կանոնները:

Պետք է նշել, որ խնդրին այլ լուծում է առաջարկված ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում: Նախագծի 465 հոդվածի առաջին մասի համաձայն՝ ազատազրկման հետ

չկապված այլընտրանքային պատժի դատապարտված անձի կողմից պատիժը կրելուց հրաժարվելը կամ խուսափելը պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Այն, որ պատժի կրումից չարամտորեն խուսափելը իրենից մեկ այլ հանցանք է ներկայացնում և օժտված է բավականաչափ հանրային վտանգավորությամբ, մեր կարծիքով ճիշտ է: Նման մոտեցումը թույլ է տալիս նաև անհատականացնելու պատիժը, ինչը հնարավոր չէ գործող քրեական օրենսգրքի պայմաններում, որը պարզապես հանրային աշխատանքները կալանքով կամ ազատազրկմամբ փոխարինելու հաշվարկի կարգ է սահմանում: Այս դեպքում հնարավոր չէ հաշվի առնել ոչ պատժից չարամտորեն խուսափելու պատճառները, ոչ հանգամանքները, շարժառիթները, ոչ այն հանցանքի առանձնահատկությունները, որի համար ազատազրկման ձևով պատիժը փոխարինվել էր հանրային աշխատանքներով, ոչ էլ հանցավորի անձնավորությունը:

Ուսումնասիրությունները վկայում են որ հանրային աշխատանքները ՀՀ-ում այդքան էլ հաճախ չեն կիրառվում: Այս պատժատեսակը հիմնականում կիրառվում է ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերում: Վիճակագրությունը վկայում է, որ 2005թ. ընթացքում հանրային աշխատանքների են դատապարտվել 16 անձ, 2006թ.՝ 68 անձ, 2007թ.՝ 327 անձ, 2008թ.՝ 249 անձ, 2009թ.՝ 192 անձ, 2010թ.՝ 193 անձ, 2011թ.՝ 216 անձ, 2012թ.՝ 248 անձ, 2013թ.՝ 171 անձ, 2014թ.՝ 34 անձ¹: Արդեն նշել ենք այս պատժատեսակի ոչ այդքան հաճախ կիրառելու մի քանի պատճառների մասին: Կարելի է ավելացնել նաև մի քանի այլ գործոններ: Մասնավորապես այն, որ դատապարտյալները չեն ցանկանում այս պատժատեսակին գնալ, քանի որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորություն են տեսնում: Իսկ այս ինստիտուտի գործող օրենսդրական կարգավորման պայմաններում այն դարձել է պատժից խուսափելու միջոց: Ուստի կարծում ենք, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմանները պետք է խստացվեն, դատապարտյալների հետ պետք է սոցիալական, հոգեբանական, կրթական ծրագրեր

¹ 2014թ. այսպիսի ցածր ցուցանիշը, մեր կարծիքով, պայմանավորված է ՀՀ Սահմանադրական դատարանի արդեն նշված որոշմամբ:

իրականացվեն: Այդ դեպքում հանրային աշխատանքների կիրառման հաճախականությունը կարող է ավելանալ: Հանրային աշխատանքների փոքր ծավալներով կիրառման պատճառներից մեկն էլ այն է, որ դա նախատեսված չէ Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում: Մինչդեռ, կարծում ենք, որ տուգանքի հետ միաժամանակ հոդվածի սանկցիայում նախատեսելու դեպքում դատարանների համար ավելի հեշտ կլիներ, թե տուգանքի, թե հանրային աշխատանքների ընտրությունը: Այլ կերպ ասած՝ դատարանները այլընտրանք կունենային:

Այսպիսով, հանրային աշխատանքների՝ որպես այլընտրանքային պատժատեսակի արդյունավետությունը ապահովելու համար առաջարկում ենք՝ 1. զգալիորեն կրճատել հանրային աշխատանքների ժամկետները, 2. սահմանել օրական կատարվող աշխատանքների կարճ ժամկետներ՝ նախատեսելով առանձնահատկություններ անչափահասների համար, 3. ընդլայնել հանրային աշխատանքների ոլորտները՝ դրանց տեսակի ընտրությունը պայմանավորելով կատարած հանցանքի բնույթով, այս պատժատեսակի դաստիարակչական և հոգեբանական ներգործությամբ, 4. հանրային աշխատանքները, որպես հիմնական պատիժ նախատեսել քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում, 5. խստացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմանները՝ դատապարտյալի հետ պարտադիր սոցիալական, հոգեբանական, կրթական ծրագրեր իրականացնելով:

§ 5. Չինվորական ծառայության մեջ սահմանափակումը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 53.1.-ի համաձայն՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար սպայի կամ ենթասպայի կոչում ունեցող զինծառայողի նկատմամբ կիրառվող պատժատեսակն է, ըստ որի՝ տվյալ անձը երեք ամսից երեք տարի ժամկետով չի կարող նշանակվել իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր (այդ թվում՝ ավելի բարձր վարձատրվող) պաշտոնի, նրան չի կարող շնորհվել ավելի բարձր հերթական կոչում, ինչպես նաև կասեցվում է հերթական զինվորական կոչում շնորհելու՝ օրենքով սահմանված ժամկետը՝ դրամական բավարարման գումարից մինչև 20 տոկոս պահումով:

Այս պատժատեսակը յուրահատուկ պատժատեսակ է, որը նշանակվում է միայն զինծառայողների նկատմամբ և դրսևորվում է դատապարտյալի որոշակի իրավունքների ու ազատությունների սահմանափակմամբ: Դրանք հանգում են հետևյալին: Նախ՝ զինծառայողի դրամական բավարարման գումարից մինչև 20 տոկոս պահում է կատարվում: Ինչպես տեսնում ենք, օրենքը սահմանում է պահման դրամական բավարարման գումարից մինչև 20 տոկոս պահման միայն առավելագույն չափը՝ առանց նվազագույնը նշելու: Կարծում ենք, որ սա օրենսդրական կարգավորման բաց է, ուստի պետք է սահմանվի նաև պահման նվազագույն չափը: Առաջարկում ենք դրամական բավարարման գումարից պահվող նվազագույն չափը սահմանել 5 տոսկոսի չափով, դրանից պակաս պահումը պարզապես անիմաստ է: Հաջորդ սահմանափակումը այն է, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում դատապարտյալը չի կարող նշանակվել իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր (այդ թվում՝ ավելի բարձր վարձատրվող) պաշտոնի, նրան չի կարող շնորհվել ավելի բարձր հերթական կոչում: Եվ վերջապես մյուս սահմանափակումն այն է, որ կասեցվում է հերթական զինվորական կոչում շնորհելու՝ օրենքով սահմանված ժամկետը:

Քննարկվող պատժատեսակը կարող է նշանակվել երեք ամսից երեք տարի ժամկետով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս պատժատեսակը կարող է նշանակվել միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար, կարծում ենք ճիշտ կլիներ փոքր-ինչ կրճատել դրա տևողությունը և սահմանել երեք ամսից երկու տարի ժամկետով: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այս պատժատեսակը, ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, նախատեսված է թե որպես հիմնական, թե որպես լրացուցիչ պատիժ: Ընդհանուր առմամբ այս մոտեցումը ճիշտ է: Ընդ որում, որպես հիմնական պատիժ այն նախատեսված է երեք ամսից երեք տարի ժամկետով, իսկ որպես լրացուցիչ՝ երկու ամսից երկու տարի ժամկետով: Կարծում ենք, որ կարելի էր կրճատել այս ժամկետները: Ինչպես արդեն նշել ենք, որպես հիմնական պատիժ այն կարելի էր սահմանել երեք ամսից երկու տարի ժամկետով իսկ որպես լրացուցիչ՝ երկու ամսից մեկ տարի ժամկետով:

Գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը չի կարող նշանակվել, եթե առկա է հանցանքների կամ դատավճիռների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել կամ նշանակված է ազատությունից զրկելու հետ կապված կամ իրավունքից զրկելու հետ կապված պատիժ: Կարծում ենք, որ հարցի նման լուծումը այնքան էլ ճիշտ չէ: Այն դեպքերում, երբ առկա է հանցանքների կամ դատավճիռների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել կամ նշանակված է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, ապա քննարկվող պատժի կատարումը կարող է սկսվել այդ պատիժը կրելուց հետո: Կարծում ենք, որ ոչինչ դրան չի խանգարում: Մանավանդ, մեր խորին համոզմամբ, ազատագրկման հետ կապված պատժի դատապարտվելը դեռևս հիմք չէ անձին արգելելու հետգայում զինծառայություն կրելու: Ինչ վերաբերվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելուն, ապա այստեղ, մեր կարծիքով, պետք է հստակեցվի, որ խոսքը այնպիսի պաշտոնների կամ գործունեության մասին է, որոնք կապված են դատապարտյալի զինվորական ծառայության հետ: Բանն այն է, որ սպան կամ ենթասպան կարող են օրինակ անզգույշ տրանսպորտային հանցանք կատարել և դրա համար զրկվել

տրասպորտային միջոցներ վարելու իրավունքից: Չենք կարծում, թե նման դեպքերում այդ պատիժը խոչընդոտում է զինվորական ծառայության մեջ սահմանափակում նշանակելուն:

ՀՀ քրեական օրենսգիրքը շատ կարևոր դրույթ է պարունակում այն մասին, որ տվյալ պատժատեսակի կրման կամ դրանից պակաս ժամկետով դատարանը կարող է զինծառայողի համար սահմանել կրթական կամ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու լրացուցիչ պարտականություն:

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակում պատժատեսակը կրելու ընթացքում զինծառայողի նկատմամբ սույն օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով կամ 67-րդ հոդվածով սահմանված կարգով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նշանակվելու կամ զինծառայողի կողմից օրենքով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքում դատարանի կողմից զինվորական ծառայության մեջ սահմանափակումը փոխարինվում է տուգանքով՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակման մեկ ամիսը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի դիմաց: Կարծում ենք, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը կրելու ընթացքում հանցանքների համակցությամբ կամ դատավճիռների համակցությամբ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նշանակելիս զինվորական ծառայության մեջ սահմանափակման կատարումը պետք է կասեցվի մինչև ազատազրկման հետ կապված պատիժը կրելը: Եթե դրանից հետո նպատակահարմար չի լինի անձի կողմից զինվորական ծառայությունը շարունակելը, ապա զինվորական ծառայության մեջ սահմանափակումը պետք է փոխարինվի այլ՝ ավելի մեղմ պատժով: Ինչ վերաբերվում է զինծառայողի կողմից օրենքով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերին, ապա կարծում ենք, որ գործող քրեական օրենսգրքի մոտեցումը հիմնավոր է:

**§ 6. ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված
այլընտրանքային այլ պատժատեսակներ**

Բացի արդեն քննարկված այլընտրանքային պատժատեսակներից տարբեր երկրների քրեական օրենսդրություններում նախատեսված են նաև այլ պատժատեսակներ: Դրանցից առավել տարածվածներից են տնային պրոբացիան կամ տնային էլեկտրոնային կալանքը: Տնային պրոբացիայի ժամանակ, որն այլ կերպ անվանում են նաև տնային մեկուսացում կամ տնային կալանք, դատապարտյալից պահանջվում է որոշակի ժամանակահատված դուրս չգալ տնից: Տնից դուրս չգալու պահանջը կարող է տարածվել միայն գիշերային ժամերի վրա կամ ամբողջ օրվա վրա, բացի աշխատանքային ժամերից: Տնային պրոբացիայի ընդհանուր տևողությունը կարող է կազմել երկուսից երեք ամիս: Տնային պրոբացիայի պայմանների մեջ կարող են ընդգրկվել ակոհոլ օգտագործելու արգելքը, հարկադիր բուժում անցնելու պահանջը: Դատապարտյալը պատժի կրման ամբողջ ընթացքում գտնվում է պրոբացիոն ծառայության հսկողության ներքո: Հսկողությունը կարող է անհատապես իրականացվել պրոբացիոն ծառայության աշխատակցի կողմից կամ էլեկտրոնային մոնիթորինգի միջոցով: Էլեկտրոնային մոնիթորինգի միջոցով հսկողության հետաքրքիր փորձ կա Շվեդիայում: Այստեղ մինչև երկու ամիս կալանքի դատապարտված անձը՝ իր ցանկությամբ կարող է պատիժը կրել ոչ թե կալանատանը, այլ իր տանը: Դրա համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ: Նախ՝ բնականաբար դատապարտյալը պետք է տուն ունենա: Երկրորդ՝ ցանկալի է աշխատանքի առակությունը: Եթե անձը աշխատանք չունի, պրոբացիոն ծառայությունը նպաստում է աշխատանք գտնելուն: Աշխատանքի կամ ուսման ընթացքում հսկողությունն իրականացվում է ոչ թե էլեկտրոնային սարքի միջոցով, այլ պրոբացիոն ծառայության աշխատակցի: Վերջապես կարևոր պայմաններից մեկն էլ այն է, որ էլեկտրոնային մոնիթորինգի համաձայնություն տան դատապարտյալի ընտանիքի անդամները: Քննարկվող պատժատեսակի առավելությունն այն է, որ առանց պրոբացիայի պայմանները խախտելու գործնականում անհնար է դարձնում նոր հանցանքի կատարումը: Բացի այդ, այս պատժատեսակը թույլ է տալիս պահպանելու ընտանեկան

կապերը, շարունակելու աշխատանքը և ուսումը: Պետք է նշել, որ այս պատժատեսակի նման պատժատեսակ է նախատեսվում նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում: Կարծում ենք, որ այն ներդնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այլ երկրների կուտակած փորձն ու օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես խնդրահարույց է էլեկտրոնային մոնիթորինգի կիրառումը: Խնդիրները հանգում են հետևյալին: Նախ՝ այս մեթոդը մեծ ծախսեր է պահանջում: Ընդ որում, հենց որ սարքավորումը ահազանգում է դատապարտյալի կողմից մոնիթորինգի պայմանները խախտելու մասին, հսկողություն իրականացնողները պետք է անհապաղ արձագանքեն դրան: Երկրորդ՝ խնդրահարույց է այն, թե ինչ հակազդեցություն է անհրաժեշտ այն դեպքերում, երբ դատապարտյալը խախտում է մոնիթորինգի պայմանները: Բանն այն է, որ օրինակ պարզապես տանից բացակայելու դեպքում, եթե դա կապված չէ կրիմինալ վարքագծի հետ, ճիշտ չի լինի անմիջապես քրեական պատասխանատվության հարց բարձրացնել: Սակայն մյուս կողմից այնքան էլ պարզ չէ, թե ինչպիսի այլ հակազդեցություն կարելի է ցուցաբերել: Երրորդ՝ էլեկտրոնային մոնիթորինգի սարքերը թույլ չեն տալիս բացահայտելու տանը կատարվող հանցանքները: Դրա համար անհրաժեշտ է օգտագործել հսկողության այլ հնարքներ՝ զրույց հարևանների հետ, հանկարծակի զանգ դատապարտյալին և այլն: Եվ վերջապես, խնդրահարույց է այն, թե արդյոք այս պատժատեսակին դատապարտված բոլոր դատապարտյալների նկատմամբ պետք է էլեկտրոնային հսկողություն իրականացնել: Գործնականում այդպես չի արվում և դա հնարավոր էլ չէ: Բացի այդ, էլեկտրոնային մոնիթորինգը շատերի կարծիքով արդարացված է միայն այն դատապարտյալների համար, որոնց կապակցությամբ կասկած կա, թե նրանք կարող են շարունակել հանցավոր գործունեությունը: Կարծում ենք, որ մեր երկրի համար, որը սուղ ֆինանսական հնարավորություններ ունի, տնային պրոբացիան կամ ազատության սահմանափակումը ճիշտ կլինի որպես կանոն իրականացնել առանց էլեկտրոնային հսկողության՝ պրոբացիոն ծառայության աշխատակիցների կողմից իրականացվող անհատական հսկողության ձևով, իսկ էլեկտրոնայինը կիրառել բացառիկ դեպքերում, եթե դատապարտյալի կատարած հանցանքի բնույթը, դրանից հետո նրա դրսևոած վարքագիծը, գործի քննության ընթացքում պահվածքը հիմնավոր

կասկածներ են առաջացնում, որ նա կարող է չարաշահել իր նկատմամբ նշանակված պատժի ընձեռած հնարավորությունները և նոր հանցանք կատարել կամ խուսափել պատժի կրումից:

Որոշ երկրներում ստեղծված են վերականգնողական կենտրոններ: Սրանք հատուկ հիմնարկներ են, որոնք նախատեսված են դատապարտյալների հետ վերականգնողական աշխատանքներ և մասնագիտական վերապատրաստում իրականացնելու համար: Այս հիմնարկների առջև ծառացած հիմնական խնդիրներն են՝ 1. դատապարտյալների համար ստեղծել կյանքի այնպիսի պայմաններ, որոնք խիստ կանոնակարգված են և նպաստում են նրանց ուղղմանն ու մասնագիտական, կրթական պատրաստվածությանը, 2. հեշտացնել դատապարտյալի անցումը նորմալ կյանքի, նպաստել նրա սոցիալական վերականգնմանը, 3. տնտեսել պետական միջոցները: Այսպիսի կենտրոններում հիմնականում պատիժ են կրում բռնության հետ չզուգորդված հանցանք կատարած այն անձինք, որոնք վտանգ չեն ներկայացնում հասարակության համար:

Բացի նշվածներից կարելի էր առանձնացնել նաև դատավճռի արձակման հետաձգումը, այլընտրանքային բուժումը, և այլն, սակայն դրանց ոչ այնքան հաճախ կիրառվող և մեզ համար մեծ հետաքրքրություն չներկայացնող ինստիտուտներ են, ուստի դրանց վրա հատուկ կանգ չենք առնի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեկնածուական սույն հետազոտությունը՝ նվիրված ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների նշանակման և կիրառման հիմնախնդիրներին, թույլ է տալիս կատարելու մի շարք հետևություններ և առաջարկություններ, որոնք օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների գործնական կիրառման համար կարող են տեսական և գործնական նշանակություն ունենալ: Այսպես՝

1. Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների հասկացությունը, այն է՝ «Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժները պետական հարկադրանքի այն միջոցներն են, որոնք դատարանի դատավճռով, պետության անունից նշանակվում են հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, արտահայտվում են նրան՝ օրենքով սահմանված կարգով իրավունքներից և ազատություններից զրկելով կամ դրանք սահմանափակելով, սակայն կապված չեն դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու հետ:

Ազատագրկմանն այլընտրանք համարվող պատիժների նպատակներն են վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել հանցանք կատարած անձին, ապահովել նրա ունեցած դրական սոցիալական կապերի պահպանումը, կանխել նոր հանցագործությունները»:

2. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման օգտին վկայող առավել համոզիչ փաստարկները՝ նրանք են, որոնք ձևավորվում են դատապարտյալի նկատմամբ ազատագրկում պատժատեսակի կիրառման բացասական կողմերը վեր հանելիս: Ազատագրկում պատժատեսակի կիրառման դեպքում շատ դժվար կամ գրեթե անհնար է դատապարտյալի մեջ հանրորեն օգտակար ընդունակությունների ձևավորումը: Բացի այդ, անձի մեկուսացումը հասարակությունից բացասական բարոյահոգեբանական ազդեցություն է ունենում նրա վրա, նպաստում է անձի քրեականացմանը, հանցավոր ենթամշակույթը ընդունելուն: Վերջապես ազատագրկումը խոչընդոտում է անձի հետագա սոցիալական

ադապտացմանը, նրա վերաինտեգրմանը: Մինչդեռ ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների դեպքում վերը նշված բոլոր բացասական գործոնները բացակայում են:

Այսպիսով, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կարևոր սոցիալական գործառույթներն են սոցիալական ինտեգրումը, ճիշտ սոցիալականացումը և սոցիալական վերահսկումը:

3. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժները ընդհանուր պատժի համակարգում մեթոդաբանական տեսանկյունից պետք է դիտարկել որպես առանձին ենթահամակարգ: Ինչպես ցանկացած համակարգ, ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ենթահամակարգը նույնպես ունի իր բնութագրող հատկանիշները՝

ա/ ձևավորվում է պատժի ընդհանուր համակարգի շրջանակներում՝ ընդհանուր սկզբունքների և նպատակների հիման վրա,

բ/ արտացոլում է պատիժների հումանիզմի սկզբունքը,

գ/ արտահայտում է քրեաիրավական հարկադրանքի տնտեսման սկզբունքը,

դ/ կարող է կիրառվել հիմնականում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում,

ե/ ունի իր համակարգային կառուցվածքը և ձևավորման սկզբունքները,

զ/ ավելի մեծ չափով է թույլ տալիս իրականացնելու պատժի տարբերակման և անհատականացման սկզբունքը:

4. Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգը համաստորադասված այնպիսի պատիժների սպառիչ ցանկն է, որոնք նպատակ են հետապնդում վերականգնելու սոցիալական արդարությունը, կանխելու հանցագործությունները, ինչպես նաև վերասոցիալականացնելու դատապարտյալին ու ապահովելու նրա իրավահպատակ վարքագիծը՝ առանց նրան հասարակությունից մեկուսացնելու:

5. Անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում առանձին հոդվածով նախատեսել ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգը:

6. Դատապարտյալի և նրա ընտանիքի համար ունեցած բացասական հետևանքների տեսանկյունից հանրային աշխատանքները պակաս խիստ պատժատեսակ է, քան որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Ուստի ճիշտ կլիներ պատժի համակարգում և ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածների սանկցիաներում դրանց տեղերը փոխել:

7. ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ տուգանքի չափը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի դատապարտյալի գույքային դրությունը: Բացի այդ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում նախատեսվում է տուգանքի չափը որոշել ըստ դատապարտյալի եկամուտների: Սրա հետ կապված առաջարկվում է դատապարտյալի գույքային դրությունը գնահատելիս և նրա եկամուտների չափը որոշելիս հաշվի առնել ոչ միայն ունեցած եկամուտները, այլև կենսապահովման համար անհրաժեշտ ծախսերը:

Առաջարկվում է տուգանքը վճարելու անհնարինության դեպքում տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու հետևյալ կարգը, հանրային աշխատանքների մեկ ժամը հաշվարկել նվազագույն աշխատավարձի դիմաց՝ առանց հանրային աշխատանքների նվազագույն սահմանը նշելու (սահմանափակումը կարող է վերաբերվել միայն առավելագույն ժամկետին):

8. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը, ըստ գործող քրեական օրենսգրքի, վերաբերվում է միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում առկա պաշտոններին, ինչը գործնականում խնդիրներ է առաջացնում: Առաջարկվում է այս պատժատեսակը կիրառել ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում, այլ նաև առևտրային և այլ տեսակի բոլոր մարմիններում ու կազմակերպություններում առկա պաշտոնների կապակցությամբ:

Առաջարկվում է նաև տվյալ պատժատեսակը բաժանել երկու մասի և առանձին հոդվածներով սահմանել «Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը» և «Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը»:

9. Գործող քրեական օրենսգրքով նախատեսված հանրային աշխատանքների

ժամկետները չափազանց երկար են, ինչը այս պատժատեսակը նշանակելուց խուսափելու հիմնական պատճառներից մեկն է, ուստի առաջարկվում է հանրային աշխատանքների ժամկետները զգալիորեն կրճատել:

Հանրային աշխատանքների արդյունավետությունը ապահովելու նպատակով առաջարկվում է ընդլայնել հանրային աշխատանքների կիրառման ոլորտները՝ դրանց տեսակի ընտրությունը պայմանավորելով կատարած հանցանքի բնույթով, այս պատժատեսակի դաստիարակչական և հոգեբանական ներգործությամբ:

Պատժի կրումից չարամտորեն խուսափելը իրենից մեկ այլ հանցանք է ներկայացնում և օժտված է բավականաչափ հանրային վտանգավորությամբ, ուստի ճիշտ կլինի հանրային աշխատանքներից չարամտորեն խուսափելու համար քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսել պատասխանատվություն: Նման մոտեցումը թույլ կտա անհատականացնելու պատիժը, ինչը հնարավոր չէ գործող քրեական օրենսգրքի պայմաններում, որը պարզապես հանրային աշխատանքները կալանքով կամ ազատազրկմամբ փոխարինելու հաշվարկի կարգ է սահմանում, ինչը թույլ չի տալիս հաշվի առնել ո՛չ պատժից չարամտորեն խուսափելու պատճառները, ո՛չ հանգամանքները, շարժառիթները, ո՛չ այն հանցանքի առանձնահատկությունները, որի համար ազատազրկման ձևով պատիժը փոխարինվել էր հանրային աշխատանքներով, ո՛չ էլ հանցավորի անձնավորությունը:

10. Հայաստանի Հանրապետությունում դատարանները հակված են առավել շատ կիրառելու ազատազրկում պատժատեսակը, քան ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատժատեսակները, որը, բացասաբար է անդրադառնում, ինչպես հանցագործություն կատարած անձանց, այնպես էլ հասարակության վրա:

Սա պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ՝ էական նշանակություն ունի մտածողության ինտերցիան: Շատերը կարծում են, որ մեղմ միջոցներով հնարավոր չէ պայքարել հանցավորության դեմ: Երկրորդ՝ մտավախություն կա, որ այլընտրանքային պատժատեսակների նշանակումը կարող է չարաշահվել և դրանց անհիմն նշանակումը կարող է նպաստել անպատժելիության զգացումի ձևավորմանը: Բացի այդ, գործող քրեական օրենսգրքում այլընտրանքային պատժատեսակների իրավական կարգավորումը թերի է, կան բացեր: Վերջապես շատ

կարևոր է նաև համապատասխան կադրերի առկայությունը: Այլընտրանքային որոշ պատժատեսակների կիրառումը ենթադրում է դատապարտյալի հետ սոցիալական, հոգեբանական աշխատանքների իրականացում, ինչը կարող է ապահովվել միայն համապատասխան կրթություն և պատրաստվածություն ունեցող կադրերի առկայության դեպքում, ինչը ցավոք սրտի ՀՀ-ում բացակայում է:

Իրավիճակից ելքը ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների ինստիտուտի կատարելագործումն է, եղած պատժատեսակների իրավական կարգավորման մեջ առկա թերությունների վերացումը, նոր արդյունավետ պատժատեսակներ նախատեսելը: Բացի այդ, շատ կարևոր է համապատասխան կադրերի առկայությունը: Ներկայումս ՀՀ-ում փորձ է արվում ներդնելու պրոբացիոն ծառայություն, ինչը կարող է լուծել խնդիրը և էական ազդեցություն ունենալ այլընտրանքային պատիժների կիրառման ծավալների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն [ընդունված 1995 թվականի հուլիսի 5-ին, 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով] [www.Arlis.am]
2. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23.04.2013թ. որոշումը, [ՍԴՈ-1082] [www.Arlis.am]
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք [ընդունված 2003 թվականի ապրիլի 18-ին] [www.Arlis.am]
4. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք [ընդունված 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, փոփոխություններն ու լրացումները 2006 թվականի մարտի 9-ի դրությամբ] [www.Arlis.am]
5. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, [ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998թ. հուլիսի 1-ին փոփոխություններն ու լրացումները 2008 թվականի դեկտեմբերի 2-ի դրությամբ] [www.Arlis.am]
6. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, [փոփոխություններն ու լրացումները 2008 թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ] [www.Arlis.am]
7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք [ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1997 թվականի մայիսի 5-ին, փոփոխություններն ու լրացումները՝ 2008 թվականի հոկտեմբերի 6-ի դրությամբ] [www.Arlis.am]
8. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին [ընդունված 2008 թվականի հոկտեմբերի 26-ին, թիվ 1561-Ն որոշում] [www.Arlis.am]
9. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության քրեական օրենսգիրք [ընդունված 1961 թվականի մարտի 7-ին]

10. Стандартные минимальные правила ООН в отношении мер, не связанных с тюремным заключением (Токийские правила) // Уголовно-исполнительное право: Сборник нормативных актов / Под ред. П.Г. Пономарева. М.: Новый юрист, 1997, № 91-105:

11. Рекомендация № R (92) 16 Комитета Министров государствам-членам относительно Европейских правил по применению общественных санкций и мер взыскания (принята Комитетом Министров на 482-ом заседании заместителей министров 19 октября 1992 года) // Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, 107-123 №

12. Рекомендация № R (92) 16 Об усовершенствовании применения Европейских правил относительно общественных санкций и мер воздействия (Рекомендация № 22, принята Комитетом Министров Совета Европы 29.09.2000г.) // Аспект. Информационный бюллетень (Украина). 2001, № 4 (5), № 52-55,

13. Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, 218 №

14. Рекомендация № R (92) 16 Комитета Министров государствам-членам относительно Европейских правил по применению общественных санкций и мер взыскания (принята Комитетом министров на 482-ом заседании заместителей министров 19 октября 1992 года) // Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, № 277-278.

15. Содействие становлению механизма реализации альтернативных мер наказания в Российской Федерации. Материалы международного семинара, Самара, 24-27 марта 2002, М., № 3

16. Словарь иностранных слов. М.: Русский язык, 1979, 624 №

17. Стандартные минимальные правила ООН в отношении мер, не связанных с

тюремным заключением (Токийские правила) // Уголовно-исполнительное право: [Сборник нормативных актов] Под ред. П.Г. Пономарева. М.: Новый юрист, 1997, էջ 106-140

18. Уголовный кодекс РФ. М.: Юрид. лит., 2004.

19. Уголовно-исполнительный кодекс РФ. М.: Юрид. лит., 2004.

20. Уголовно-исполнительное законодательство (США, Англия, Германия, Франция). М., 1993, 116 էջ

Տեսական գրականություն

21. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մեկնաբանություններ. Փաստաբանների միջազգային միություն [հեղինակային խումբ՝ Կիրակոսյան Ա.Հ., Լալայան Կ.Ա., Խուդոյան Պ.Թ.] Երևան, Ասողիկ, 2004թ., 800 էջ

22. Ավագյան Ռոբերտ Զավենի «Մարդու իրավունքները» Քրեաիրավական երաշխիքներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն Երևան 2007թ., 576 էջ

23. Ավագյան Ա.Բ., Հովսեփյան Ա.Գ., Պետրոսյան Տ.Ռ. «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բացատրական բառարան», «Այբ-Քե» հրատարակչություն, Երևան 1993թ., 133 էջ

24. Թովմասյան Արշակ Թովմասի «Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք», Երևան, 1977թ., 470 էջ

25. Լալայան Կիմ Արմենակի «Քրեական իրավունք», Ընդհանուր և Հատուկ մասեր, ուսումնական ձեռնարկ, Երևան 2004թ., 794 էջ

26. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, դասագիրք իրավաբանական բուհերի համար, [ԵՊՀ] Առաքելյան Ս., Գաբուզյան Ա. և ուրիշներ, խմբ.՝ Ղազինյանի Գ.Ս., Երևան 2004թ., 968 էջ

27. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (խմբագրությամբ՝ Գ.Ս. Ղազինյանի): Ընդհանուր մաս (երրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Երևանի պետական համալսարան, Երևան 2007թ., 1048 էջ

28. Մխիթար Գոշ. «Դատաստանագիրք» (փոխադրության հեղինակ և խմբ.՝

Ոսկանյան Մ.Ա., գիտ. խմբ. իր. Գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սաֆարյան Գառնիկ) Եր., Իրավունք, 2008թ., 242 էջ

29. Մխիթար Գոշ. Դատաստանագիրք, Երևան 2001թ., 160 էջ

30. Սմբատ Սպարապետ «Դատաստանագիրք», Հավաքական տեքստը, ուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գալստյան Ա. Գ. Երևան, Հայպետհրատ. 1958թ., 207 էջ

31. Ուզունյան Մ.Ի. «Անձի քրեաիրավական պաշտպանությունը», ուսումնաօժանդակ ձեռնարկ, Երևանի պետ. Համալսարան, Երևան 1983թ., 264 էջ

32. Քրեագիտություն: Դասագիրք բուհերի «Իրավագիտություն» մասնագիտ. համար, Երևանի պետ. համալսարան, խմբ.՝ Զվիրբուլի Վ.Կ., Երևան 1986թ., 408 էջ

33. Գրիգորյան Գ.Թ. ՀՀ քրեական իրավունք: Ուսումնամեթոդական նյութեր, Երևան 2009թ., 140 էջ

34. Գրիգորյան Գ.Թ. ՀՀ քրեական իրավունք [ընդհանուր մաս]: Պրակտիկայում ՀՀ ոստիկանության ակադեմիա, Երևան 2009թ., 43 էջ

35. Գրիգորյան Գ.Թ. ՀՀ քրեական իրավունք [ընդհանուր մաս]: Սխեմաներ, Երևան 2008թ., 104 էջ

36. Գրիգորյան Մ.Վ. քրեական իրավունք [ընդհանուր մաս], խմբ. Մեհրաբյան Լ. 2-րդ լր.: Վերահրատակչություն, Երևան 2007թ., 479 էջ

37. Գրիգորյան Մ.Վ. քրեական իրավունք [ընդհանուր մաս], ուսումնական ձեռնարկ, [պատ. խմբ. Զիլֆուլայան Խ.], Երևան 2003թ., 637 էջ

38. Գրիգորյան Մ.Վ. քրեական իրավունք [ՀՀ նոր քրեական օրենսգրքի ընդհանուր մասի մի քանի հիմնահարցեր գիտագործնական մեկնաբանություններ], Երևան 1999թ., 175 էջ

39. Լալայան Կ.Ա. քրեական իրավունք ընդհանուր և հատուկ մասեր, ուսումնական ձեռնարկ [խմբ. Գևորգյան Ռ.Լ.], Երևան 2004թ., 794 էջ

40. ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ [Լալայան Կ.Ա., Խուրդյան Պ.Թ., Կիրակոսյան Ա.Հ., փաստաբանների միջ. Միության], Երևան 2004թ., 800 էջ

41. Սարգսյան Ա., Թոքմաջյան Զ. Ազատագրվում, թե այլընտրանք. Իրականություն և զարգացման հեռանկարներ, Երևան, 2007թ., 72 էջ

42. Մինասյան Ա. Այլընտրանքային քրեական պատիժների կիրառումը ՀՀ-ում [խմբ. Նալբանդյան Գ.] Երևան 2005թ., 60 էջ
43. Սիրունյան Ա. Պատիժներ, հարկադրանք և դատախազական հսկողության հարցեր. առարկայի ներածություն [խմբ. Հարությունյան Ա., Վարդանյան Վ.] Երևան 2009թ., 191 էջ
44. Ուզունյան Մ.Ի. Պատիժ և դատախազություն, Երևան Հայ 1969թ., 237 էջ
45. Ուզունյան Մ.Ի. Պատժի էֆեկտիվության պրոբլեմը Երևան 1979թ., 243 էջ
46. Cisse A. Justice transactionnelle et justice penale // Revue de science criminelle et de droit penal compare. 2001, № 3, P. 511. Naw A. Les modes altematifs de reglement de conflits en droit beige // Revue de droit penal et de criminologie. 1997, № 4, P. 362.
47. K.Lackner, Strafgesetzbuch, 21, Auflage, Muenchen, 1995, § 43a.
48. E. Dreher [H.Troendle, Strafgesetzbuch und Nebengesetze,47]. Auflage, Muenchen, 1995, § 43a
49. Альтернативные меры уголовного наказания. Международная конференция. Алматы, Казахстан, 27-30 октября 1999, էջ 20
50. Беляев Н.А. Уголовно-правовая политика и пути ее реализации. Л., 1986, 176 էջ
51. Беляев Н.А. Цели наказания и средства их достижения. М., 1963, 186 էջ
52. Багрий-Шахматов Л.В. Система наказаний по советскому уголовному праву, их классификация и правовое регулирование исполнения: Автореф. дис.... докт. юрид. Наук, Минск, 1969, 187 էջ
53. Вивьен Стерн. Разработка мер, альтернативных тюремному заключению в странах Центральной и Восточной Европы и Средней Азии: Справочник, Лондон: Институт конституционной и правовой политики, 2002, 62 էջ
54. Виттенберг Г.Б. Совершенствование законодательства о наказании//Советское государство и право. 1980, № 6, էջ 72-79
55. Васильев А.М. Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории права. М.: Юрид. лит., 1976г., էջ 150; Философский энциклопедический словарь. М., 1983, 345 էջ

56. Вестник Рязанской высш. шк. МВД РФ. 1993, № 1, 78 էջ
57. Вестник Моск. ун-та. Сер. 11. Право. 1996, № 1, էջ 59-64
58. Гальперин И.М. Наказание: социальные функции, практика применения. М., 1983, 208 էջ
59. Головки Л.В. Альтернативы уголовному преследованию. М., Юрист, 2002, 544 էջ
60. Гальперин И. М., Мельникова Ю. Б., Дополнительные наказания. М., 1981, 208 էջ
61. Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном английском праве // Правоведение. 1998, №3, 103-112 էջ
62. Гальперин И.М. Задачи совершенствования теории и практики применения наказания, не связанного с лишением свободы // Наказания, не связанные с лишением свободы. М., Юрид. лит., 1972, էջ 3-30
63. Государство и право. 1997, № 5, 62 էջ
64. Государство и право. 1994, № 1, էջ 56-67.
65. Дуюнов В.К. Наказание в уголовном праве России - принуждение или кара?, 1997, № И, էջ 62
66. Доступ к правосудию. Комитет министров - государствам-членам относительно упрощения уголовного правосудия. Рекомендация № R(87)18 от 17 сентября 1987 № 8, էջ 3, 16
67. Данилюк С.А. Вопросы освобождения от уголовной ответственности Правоведение. 1987, N 3, էջ 85-91
68. Делла Марра Т. Уголовный процесс Италии: реформа и контрреформа // Государство и право. 1994, № 1, էջ 56-67
69. Елеонский В.А. Уголовное наказание и воспитание позитивной ответственности личности. Рязань, 1979, էջ 19-20
70. Исмаилов Б.И. Проблема применения альтернатив уголовному наказанию за преступления в сфере экономики в Республике Узбекистан // Журнал российского права. 2001, № 4, 123 էջ

71. Керимов Д.А. Философские проблемы права. М., 1972, էջ 278–280
72. Курс советского уголовного права: В 6 т. / Под ред. А.А. Пионтковского, П.С. Ромашкина, В.М. Чхиквадзе. М., 1970, Т. 3, 312 էջ
73. Кароли Барт. Альтернативные меры уголовного наказания // Альтернативы тюремному заключению в Республике Казахстан: Материалы международной конференции. PRI, 2000, 67 էջ
74. Кондрашков Н. Меры наказания в законе и на практике // Соц.законность. 1968, № 2, 23 էջ
75. Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, 190 էջ
76. Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования Наумов А.В. О проблеме наказания в новом Налоговом кодексе России // Человек: преступление и: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, էջ 194-195.
77. Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, 191 էջ
78. Морозов Н.А. Преступность и борьба с ней в Японии. СПб., 2003, 150 էջ
79. Наташев А.Е. Советское исправительно-трудовое законодательство (основные вопросы теории и практики). М., ВНИИ МВД СССР, 1975, 168 էջ
80. Наташев А.Е., Стручков Н.А. Основы теории исправительно-трудового права. М., Юрид. лит., 1967, 232 էջ
81. Никонов В.А. Уголовное наказание и его общепредупредительное воздействие на преступность: Учеб. пособие. Тюмень, ВШ МВД РФ (России), 1992, 48 էջ
82. Никифоров Б.С., Решетников Ф.М. Современное американское уголовное право. М., Наука, 1990, 153 էջ
83. Нерсесян А.А. Вопросы наказуемости в уголовном праве ФРГ и США. М.,

Наука, 1992, 246 էջ

84. Осипов П.П. Теоретические основы построения и применения уголовно-правовых санкций. Л., 1989, 114 էջ

85. О работе судов Российской Федерации за 1-ое полугодие 1994г. //Российская юстиция. 1995, № 1, էջ 51-54

86. Рабинович П.М. О юридической природе целей правовых актов // Правоведение. 1971, № 5, էջ 28-35

87. Лаптев В.В., Шахматов В.П. Цели правового регулирования в системе права // Правоведение. 1976, № 4, էջ 30-34

88. Познышев СВ. Основы пенитенциарной науки. М., Мосполиграф, 1924, 87 էջ

89. Правоведение. 1987, № 3, էջ 48-54; Делла Марра Т. Уголовный процесс Италии: реформа и контрреформа // Государство и право. 1994, № 1, էջ 56-67

90. Ременсон А.Л. Некоторые вопросы теории советского исправительно-трудового права 1964, № 1, էջ 93

91. Российская юстиция. 1987, № 8, էջ 3-16

92. Серебренникова А.В. Имущественный штраф как вид наказания по УК Германии // Вестник Моск. ун-та. Сер. 11. Право, 1996, № 1, 59-64 էջ

93. Сакаев А.И. Принципы построения системы уголовных наказаний // [http://www.tisbi.ru/Resourcesa-estnik/vest01 – 1/vest 1-3. htm](http://www.tisbi.ru/Resourcesa-estnik/vest01-1/vest1-3.htm).

94. Сов. государство и право. 1964, № 1, 93 էջ

95. Таганцев Н.С. Русское уголовное право. Тула, 2001, Т. 2, 124 էջ

96. Ткачевский Ю. Юридическая природа условного осуждения //Уголовное право. 1999, № 1, էջ 35

97. Трахов А. Бессистемная система наказаний в УК РФ // Российская юстиция. 2000, № 9, 88 էջ

98. Тютюгин В. И., Лишение права занимать определенные должности как вид наказания по советскому уголовному праву. Харьков, 1982, 145 էջ

99. Уголовной ответственности // Правоведение. 1987, № 3, էջ 48-54

100. Делла Марра Т. Уголовный процесс Италии: реформа и контрреформа // Государство и право. 1994, № 1, էջ 56-67.
101. Уголовное право. Общая часть. М., 2004, 329 էջ
102. Елеонский В.А. Уголовное наказание и воспитание позитивной ответственности личности. Рязань, 1979, էջ 83
103. Хуторская Н.Б. Опыт применения общественных (обязательных) работ за рубежом. Аналитический обзор // <http://www.penalrefon.org/russian/altem-rus24.htm>.
104. Цветинович А.Л. Дополнительные наказания: функции, системы, виды. Куйбышев, 1989, էջ 51-54
105. Цветинович А. Л., Дополнительные наказания. Куйбышев, 1989, էջ 85
106. Шаргородский М.Д, Наказание, его цели и эффективность. Л., 1973, էջ 16
107. Экимов А.И. Категория цели в науке права // Философские проблемы государства и права. Д., 1970, 46 էջ
108. Жалинский А.Э. Современное немецкое уголовное право. М., 2006, 313 էջ
109. Шаргородский М.Д. Наказание, его цели и эффективность. Л., Изд-во Ленингр. ун-та, 1973, էջ 96-103
110. Хрестоматия по истории отечественного государства и права (X век -1917 год). Сост. проф. В.А. Томсинов. М., Зерцало, 1998, էջ 9

Այլ նյութեր

111. Իրավաբանական համառոտ բացատրական բառարան [խմբ.՝ Սարգսյան Լ.], Երևան, 2006թ., 80 էջ:
112. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության վիճակագրական տվյալներ
113. Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տեղեկանքներ [տվյալներ]
114. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի վիճակագրական տվյալներ

115. Հայ-ռուսերեն բառարան [խմբ.՝ Գալստյան Ե.Հ.], Երևան 1984թ., 724 էջ

116. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 5, Երևան 1979թ., 720 էջ:

117. Ղարիբյան Ա.Ս. «Ռուս-հայերեն բառան», «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1986թ., 1421 էջ:

118. Ոսկերչյան Արմեն Սարգսի «Քրեաիրավաբանական տերմինների արդի համառոտ բացատրական բառարան»: Քրեական իրավունք, քրեական դատավարության իրավունք» [500 տերմին], 2004թ., 184 էջ:

119. Պետրոսյան Լ.Ա. «Արդի ռուս-հայերեն իրավաբանական բառարան», «Մյուդ» [խմբ.՝ Սիմոնյան Գ.Թ.], Երևան 1998թ., 263 էջ:

120. Վարդանյան Սամվել Վասիլի «Անգլերեն-հայերեն-ռուսերեն իրավաբանական բառարան», Զանգակ-97, Երևան 2004թ., 264 էջ: